




Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկ

Ֆինանսական կայունության հաշվետվություն 2022




Ֆինանսական կայունության հաշվետվություն 2022



Բանկային համակարգը ունակ է կլանելու ռիսկերը և պահպանելու վարկավորման անընդհատությունը


20.3%
Կապիտալի համարժեքություն




37.6%
Ընդհանուր իրացվելիություն



286.5%
Իրացվելիության ծածկույթի գործակից



Մակրոպրոդենցիալ գործիքների փաստացի սահմանաչափերը




Փոխառության սահմանափակումներ անշարժ գույքի գրավով ապահովված վարկերի համար՝ պահանջ/գրավի արժեք (loan-to-value) հարաբերակցություն


ՀՀ դրամով վարկեր
90%

Արտարժույթային վարկեր
70%


Վարկերի աճ




Ավանդների աճ



Բանկային համակարգի շահութաբերությունը բարելավվել է




Ըստ ակտիվների (RoA)



Ըստ կապիտալի (RoE)

Տնտեսական բարձր ակտիվության և եկամուտների աճի պայմաններում չաշխատող վարկերի կշիռը շարունակել է մնալ ցածր մակարդակում

Չաշխատող վարկերի տեսակարար կշիռ



Ֆինանսական համակարգին սպառնացող հիմնական ռիսկեր



Անորոշությունների բարձր մակարդակ



Հիպոտեկային շուկայի գերտաքացում



Ֆինանսական կայունության հաշվետվություն 2022

Հաշվետվությունում ներառված ՀՀ մակրոտնտեսական միջավայրի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը հրապարակվում է «Գնաճի հաշվետվություն, Դրամավարկային քաղաքականության ծրագիր, Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվություն» պարբերականներում:

«Ֆինանսական կայունության հաշվետվության» նախորդ հրապարակումները և «Գնաճի հաշվետվությունները» հասանելի են ՀՀ կենտրոնական բանկի www.cba.am պաշտոնական կայքում:

Հաշվետվությունում օգտագործված են
30.04.2023 թ. դրությամբ առկա ցուցանիշները:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6
Հեռախոս՝ (374 10) 58 38 41
Ֆաքս՝ (374 10) 52 38 52
Ինտերնետային կայք՝ www.cba.am



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

6		ՆԱԽԱԲԱՆ
8		ԱՄՓՈՓԱԳԻՐ
11	1.	ՄԱԿՐՈՊՐՈՒԴԵՆՑԻԱԼ ՌԻՍԿԵՐԻ ՔԱՐՏԵԶ
14	2.	ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
15	2.1.	Զարգացումները արտաքին միջավայրում
20	2.2.	Զարգացումները ներքին միջավայրում
23	2.3.	Տնային տնտեսությունների պարտքը և դրանցից ածանցվող հնարավոր ռիսկերը
31	2.4.	Անշարժ գույքի շուկայի միտումները և դրանցից ածանցվող ռիսկերը
34	3.	ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
35	3.1.	Զարգացումները ներքին ֆինանսական շուկայում
42	3.2.	Ռիսկերը ֆինանսական համակարգում
42	3.2.1.	Զարգացումները ֆինանսական համակարգում
43	3.2.2.	Առևտրային բանկեր
55	3.2.3.	Ոչ բանկ ֆինանսական կազմակերպություններ
63		Ներգիր 1. «Կլիմայական ռիսկերի արդիականությունը ֆինանսական կայունության տեսանկյունից»/Կլիմայական ռիսկերի փոխանցումը ֆինանսական համակարգ
69	4.	ԲԱՆԿԵՐԻ ՍԹՐԵՍ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
70	4.1.	Բանկային համակարգի վճարունակության սթրես թեստեր
75	4.2.	Բանկային համակարգի իրացվելիության սթրես թեստեր
78	5.	ՄԱԿՐՈՊՐՈՒԴԵՆՑԻԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
85		Ներգիր 2. ԿՀԲ չեզոք դրույքաչափի գնահատումը
90	6.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ
91	6.1.	Միջբանկային վճարումներ ՀՀ ԿԲ էլեկտրոնային վճարումների համակարգով
96	6.2.	Արժեթղթերի հաշվարկային համակարգեր
98		Ներգիր 3. Վճարային քարտերով իրականացված գործարքների առանձնահատկությունները
101		ՀԱՎԵԼՎԱԾ 1




Ֆինանսական կայունության ապահովումը Կենտրոնական բանկի հիմնական խնդիրներից մեկն է (գների կայունության ապահովման խնդրին զուգահեռ), որն ընդհանուր մակրոտնտեսական կայունության կարևորագույն բաղադրիչ է և երկարաժամկետ կայուն տնտեսական աճի կարևոր նախապայման:

Ֆինանսական կայունությունը կարելի է բնորոշել որպես ֆինանսական, մակրոտնտեսական պայմանների այնպիսի համադրություն, որի դեպքում ֆինանսական համակարգը՝ ֆինանսական հաստատությունները, շուկաները և ենթակառուցվածքները միասին ունակ են դիմակայելու հավանական ցնցումներին ու անհավասարակշռություններին՝ այդպիսով նվազեցնելով ֆինանսական միջնորդության գործառույթի խաթարման հավանականությունը:

Ֆինանսական կայունության խնդրի ներքո մշտադիտարկվում և գնահատվում են ինչպես ֆինանսական համակարգում, այնպես էլ ներքին ու արտաքին մակրոտնտեսական զարգացումների արդյունքում ֆինանսական համակարգի կայունությունը վտանգող հավանական ռիսկերը, դրանց հնարավոր ծագման աղբյուրները: Այդ ռիսկերի համապարփակ վերլուծության և ֆինանսական կայունության վրա դրանց հնարավոր ազդեցության գնահատման արդյունքում մշակվում և իրականացվում է համապատասխան քաղաքականություն:

ՆԱԽԱԲԱՆ





ՀՀ կենտրոնական բանկի **Ֆինանսական կայունության հաշվետվությունը** հրապարակվում է տարեկան պարբերականությամբ և ներկայացնում է ֆինանսական համակարգի կայունությունը վտանգող հնարավոր ռիսկերի, ինչպես նաև այդ ռիսկերին դիմակայելու ունակության ընդհանուր գնահատականը: Ֆինանսական կայունության վերլուծությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման միջոցով Կենտրոնական բանկը նպատակ ունի շահագրգիռ կողմերի համար բացահայտելու այն ռիսկերն ու իրադարձությունները, որոնք կարող են վտանգել ֆինանսական կայունությունը, ինչպես նաև ներկայացնելու այդ ռիսկերի կառավարմանը, նվազեցմանն ուղղված քաղաքականությունը:

Ֆինանսական կայունությունը և գների կայունությունը ընդհանուր մակրոտնտեսական կայունության բաղադրիչներ են և արդյունավետորեն փոխլրացնում են միմյանց: Ֆինանսական համակարգի անկայուն վիճակը կարող է խոչընդոտել դրամավարկային քաղաքականության իրականացմանը և արդյունավետությանը, երկարաժամկետ և կայուն տնտեսական աճի ապահովմանը: Միևնույն ժամանակ, մակրոտնտեսական, ներառյալ՝ գների կայունությունը, նպաստում է ֆինանսական կայունությունը վտանգող ռիսկերի նվազեցմանը: Ֆինանսական համակարգը կարևոր դեր է խաղում ընդհանուր տնտեսական համակարգում, և անհրաժեշտ է, որ ֆինանսական համակարգը պահպանի գործընթացների անընդհատությունը և կայունությունը՝ այդպիսով նպաստելով տնտեսության բնականոն աճին:

Ֆինանսական կայունությունը վտանգող ռիսկերի վաղաժամկետ բացահայտման համար ՀՀ կենտրոնական բանկը իրականացնում է ինչպես ֆինանսական համակարգի, այնպես էլ ընդհանուր մակրոտնտեսական զարգացումների շարունակական մշտադիտարկում (մոնիթորինգ) և վերլուծություններ: Հաշվետվությունում ներկայացված են

մակրոմիջավայրում և ֆինանսական համակարգում դրսևորված ռիսկերը, դրանց ազդեցությունը տնտեսության ու ֆինանսական համակարգի տարբեր հատվածների զարգացումների վրա, ինչպես նաև իրականացված մակրոպրոլեցիալ քաղաքականությունը:

Հայաստանի Հանրապետության ֆինանսական կայունության վրա ազդող տնտեսական և ոչ տնտեսական ռիսկերը կարող են ծագել ներքին մակրոմիջավայրում, երկրից դուրս՝ արտաքին տնտեսությունում և բուն ֆինանսական համակարգում:


Ելնելով վերոնշյալից՝ ՀՀ ֆինանսական կայունությանը սպառնացող հավանական ռիսկերը հաշվետվությունում ներկայացված են հետևյալ հիմնական ուղղություններով.

- համաշխարհային տնտեսության զարգացումներից ածանցված ռիսկեր,
- ՀՀ մակրոտնտեսական միջավայրի զարգացումներից ածանցված ռիսկեր,
- ՀՀ ֆինանսական շուկայի ռիսկեր,
- ՀՀ ֆինանսական հաստատությունների ռիսկեր,
- ՀՀ ֆինանսական ենթակառուցվածքների ռիսկեր:

Հաշվետվությունում ներկայացված են այդ ոլորտներում ռիսկերի կուտակումները և դրանց հնարավոր ազդեցությունը տնտեսության և ֆինանսական համակարգի բոլոր հատվածների զարգացումների վրա, ինչպես նաև վերոնշյալ ռիսկերի հասցեագրմանն ուղղված ՀՀ ԿԲ մակրոպրոլեցիալ քաղաքականությունը, կարգավորումը և ենթակառուցվածքների հսկողությունը: Ընդ որում, ֆինանսական կայունության հաշվետվությունում առավել մանրամասն ներկայացված են բանկային համակարգի ռիսկերն ու զարգացմանն ուղղությունները, քանի որ ֆինանսական համակարգի ակտիվների գերակշիռ մասը կազմում են առևտրային բանկերի ակտիվները, և, հետևաբար, բանկային համակարգի իրավիճակով են հիմնականում պայմանավորվում ընդհանուր ֆինանսական կայունության մակարդակը և զարգացմանն ուղղությունները:



ԱՄՓՈՓԱԳԻՐ





2022 թվականին աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված աճող անորոշությունների պայմաններում ՀՀ ֆինանսական համակարգն ապահովել է ֆինանսական միջնորդության գործառույթի բնականոն ընթացքը: Տարվա ընթացքում բանկային համակարգի կողմից վարկավորման աճի տեմպերը ընդհանուր առմամբ համահունչ են եղել տնտեսության իրական եկամուտների աճին: Վարկային շուկայում արձանագրվել է ակտիվության աճ, որը նկատելի է եղել վարկավորման բոլոր ուղղություններով: Արձանագրված բարձր տնտեսական աճի պայմաններում բանկային համակարգը ապահովել է տնտեսության վարկավորման բնականոն ընթացքը, ինչը բարենպաստ է եղել տնտեսավարողների պարտքային բեռի և դրանից ածանցվող վարկային ռիսկի մեղմման առումով: Բացառություն է հիպոտեկային վարկավորման ոլորտը, որտեղ պահպանվել են նախորդ տարիների բարձր աճի տեմպերը՝ ընդլայնելով հիպոտեկային շուկայի գերտաքացման ռիսկերը:

2022 թվականին բանկային համակարգի գործունեության հիմնական ցուցանիշները էապես բարելավվել են: Նախորդ տարիներին արձանագրված ցածր շահութաբերության համեմատությամբ դիտարկվող ժամանակահատվածում բանկային համակարգի շահութաբերությունը զգալիորեն բարելավվել է: Շահութաբերության աճին հիմնականում նպաստել է ոչ տոկոսային եկամուտների աճը՝ պայմանավորված նոր հաճախորդների մեծ ներհոսքի արդյունքում վճարահաշվարկային և արտարժույթային գործառնությունների ծավալների աճով: Գրանցվել է նաև կապիտալի համարժեքության և համակարգի իրացվելիության ցուցանիշների աճ, որի արդյունքում զգալիորեն բարելավվել է նաև բանկային համակարգի կողմից կորուստների կլանման ունակությունը:

Նախորդ և դիտարկվող տարիներին բարձր գնաճային միջավայրով ու սպասումներով պայմանավորված՝ քաղաքականության տոկոսադրույքի էական աճի պայմաններում առկա և նոր տրամադրվող վարկերի տոկոսադրույքների աճը հարաբերականորեն փոքր է եղել: Արդյունքում՝ տոկոսադրույքների աճի հետևանքով վարկառուների պարտքային բեռի սպասարկման ծախսերի աճը չափավոր է եղել:

Վարկային տոկոսադրույքների հարաբերականորեն փոքր աճը պայմանավորվել է հիմնականում բանկերի շահութաբերության, կապիտալազինվածության և իրացվելիության բարձր մակարդակով, որը հնարավորություն է ընձեռել բանկային համակարգին ձեռնպահ մնալու վարկերի տոկոսադրույքների մեծ չափով բարձրացումներից: Ի լրումն՝ վարկային տոկոսադրույքների աճի մեղմմանը նպաստել են նաև բանկերի միջև առկա բարձր մրցակցությունը, որոշ վարկատեսակների պահանջարկի կրճատումը, վարկային պորտֆելում լողացող տոկոսադրույքներով վարկերի հարաբերական փոքր տեսակարար կշիռը և տարվա ընթացքում մեծածավալ ֆինանսական միջոցների ներհոսքը բանկային համակարգ:

Աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված անորոշությունների միջավայրում ապագա տնտեսական ակտիվության նվազման, հետևաբար նաև տնտեսության պարտքային բեռի ու տոկոսադրույքների բարձր մակարդակում պահպանման ռիսկերը բարձր են գնահատվում: Վերջին տարիներին տնտեսության եկամուտների աճը, զուգորդված վարկային պորտֆելում ցածր տոկոսադրույքով վարկերի տեսակարար կշռի և վարկային պարտավորությունների ժամկետայնության աճով, նպաստել է տնտեսության վարկային բեռի համեմատաբար ցածր մակարդակում պահպանմանը: Այնուամենայնիվ, աշխարհաքաղաքական աճող անորոշությունների, ներքին և արտաքին գնաճային միջավայրի պայմաններում տնտեսական ակտիվության, ինչպես նաև քաղաքականության տոկոսադրույքի բարձր մակարդակում պահպանման ռիսկերը բարձր են գնահատվում: Վերջինով պայմանավորված՝ բարձր են գնահատվում նաև տնտեսության պարտքային բեռի հնարավոր աճի և դրանից ածանցված վարկային կորուստների նյութականացման ռիսկերը:

Հիպոտեկային վարկերի և անշարժ գույքի շուկայում առկա են գերտաքացման ռիսկեր: Վերջին տարիներին հիպոտեկային վարկերի բարձր աճի տեմպերն ու անշարժ գույքի գների աճը փոխլրացրել են միմյանց, և արձանագրվել են թե՛ հիպոտեկային վարկային պորտֆելի, թե՛ անշարժ գույքի գների միջին տարեկան բարձր աճի տեմպեր: Այս հանգամանքը



անշարժ գույքի շուկայում գերտաքացման ռիսկերի առկայության ազդակ է: Համաձայն ԿԲ 2022 թ. վերջի գնահատականների՝ անշարժ գույքի գների գերաժևորման չափը, այն է՝ փաստացի գների՝ հիմնարարներով պայմանավորված գնից շեղումը, 16-22%-ի միջակայքում է:

Սթրես թեստերի արդյունքները վկայում են, որ բանկային համակարգն ունակ է դիմակայելու սցենարներով ենթադրվող սթրեսային իրադարձություններին: Այնուամենայնիվ, աճող անորոշություններով պայմանավորված, համակարգային ցիկլային ռիսկերի նյութականացման հավանականությունը մնում է բարձր: Այս պարագայում կարևորվում է առևտրային բանկերի կողմից հավասարակշռված և խելամիտ մոտեցումների կիրառումը ռիսկերի, կապիտալի, հաշվեկշիռների կառավարման և շահաբաժինների բաշխման գործընթացներում:

Կենտրոնական բանկի խորհուրդը բարձրացրել է կապիտալի հակացիկլիկ բուֆերը: Տարվա ընթացքում վարկային շուկայի զարգացումներից ածանցված ցիկլային ռիսկերը, ընդհանուր առմամբ, եղել են հավասարակշռված (ոչ թերագնահատված և ոչ էլ գերագնահատված), իսկ բանկային համակարգում արձանագրվել է շահութաբերության և կապիտալի համարժեքության բարձր մակարդակ: Հաշվի առնելով այն հան-


գամանքը, որ այս պայմաններում կապիտալի կուտակման ծախսերը ցածր են, և բանկերի կապիտալացման մակարդակը բավարար է տնտեսության վարկավորման բնականոն աճի տեմպերի պահպանման համար՝ Կենտրոնական բանկը նպատակահարմար է համարել բարձրացնել ԿՀԲ դրույքաչափը: Կապիտալի հակացիկլիկ բուֆերի պահանջը բարձրացվել է երկու անգամ. 2023 թվականի մայիսից առևտրային բանկերը պետք է բավարարեն կապիտալի հակացիկլիկ բուֆերի 1% դրույքաչափի, իսկ 2023 թվականի օգոստոսից՝ 1.5% դրույքաչափի պահանջները:

2022 թվականի ապրիլից ուժի մեջ են պահանջ/գրավի արժեք (loan-to-value) հարաբերակցության առավելագույն սահմանաչափի պահանջները: Հիպոտեկային և անշարժ գույքի շուկայում գերտաքացման ռիսկերի մեղմելու նպատակով ներդրվել և 2022 թ. ապրիլից ուժի մեջ է պահանջ/գրավի արժեք (loan-to-value) հարաբերակցության առավելագույն սահմանաչափի մակրոպրոտեկցիալ գործիքը: Ընդ որում, ՀՀ դրամով վարկերի դեպքում առավելագույն շեմը սահմանվել է 90%, իսկ արտարժույթային վարկերի դեպքում՝ 70%: Այս գործիքի դրույքաչափերը կարող են փոփոխվել՝ հաշվի առնելով հիպոտեկային շուկայում ռիսկերի հեռանկարի փոփոխությունները:



7

ՄԱԿՐՈՊՐՈՒԴԵՆՑԻԱԼ ՌԻՍԿԵՐԻ ՔԱՐՏԵԶ





Մակրոարուղենցիալ ռիսկերի քարտեզը⁰¹ կազմված է երկու հիմնական մասերից՝ ֆինանսական կայունությունը վտանգող ռիսկերի աղբյուրներ և համակարգի կողմից այդ ռիսկերի կլանման ունակություն կամ դիմացկունություն:

Ռիսկերի կուտակումը բնութագրող հատվածը ներկայացնում է համակարգային ռիսկերի կուտակումներն ըստ առանձին աղբյուրների, որոնց նյութականացման դեպքում բանկային համակարգի կայունությունը կարող է վտանգվել: **Բանկային համակարգի դիմացկունությունը, ռիսկերի կլանման ունակությունը բնութագրող հատվածը** ներկայացնում է համակարգի կողմից ռիսկերին դիմակայելու կարողությունը՝ իրացվելի միջոցների, կապիտալի բարձիկների առկայությունը:

2022 թ., Նախորդ տարեվերջի համեմատությամբ, գրեթե բոլոր ռիսկերի խմբերում ռիսկերի կուտակման նվազում է դիտվել՝ առավելապես պայմանավորված չՀ-ում գրանցված բարձր տնտեսական աճով, ինչպես նաև բանկային համակարգի կողմից ռիսկերի կառավարման և վարկավորման խելամիտ մոտեցումների կիրառմամբ: Ռիսկերի կուտակման նվազման և կապիտալի աճի արդյունքում զգալիորեն ամրապնդվել է բանկերի կողմից ռիսկերի կլանման ունակությունը:


վել է բանկերի կողմից ռիսկերի կլանման ունակությունը:

Մակրոռիսկեր խմբի ամփոփ ցուցանիշը նշանակալի բարելավվել է. տարվա ընթացքում գրանցված բարձր տնտեսական աճը, մասնավոր փոխանցումների աճը և ընթացիկ հաշվի դրական փոփոխությունները նպաստել են ընդհանուր մակրոմիջավայրի բարելավմանը և վերջինիցս ածանցվող ռիսկերի նվազեցմանը: Ամփոփ ցուցանիշի վրա որոշ բացասական ազդեցություն է ունեցել գնաճի տեմպերի արագացումը (**մանրամասն տես «Մակրոտնտեսական զարգացումներ» բաժինը**):


Վարկային ռիսկի ամփոփ ցուցանիշը պահպանվել է նույն մակարդակում: Բանկային համակարգն ապահովել է տնտեսության վարկավորման բնականոն աճի տեմպը, ինչը միաժամանակ ուղեկցվել է տնտեսավարողների պարտքային բեռի և դրանից ածանցվող վարկային ռիսկի նվազմամբ: Շիպոտեկային վարկավորման աճի տեմպը Նախորդ տարվա համեմատությամբ որոշակի նվազել է (բազայի էֆեկտ), սակայն դեռևս պահպանվում է պատմական միջինի համեմատությամբ բարձր մակարդակ:

01 Քարտեզը բաղկացած է 23 ցուցանիշներից, որոնք ագրեգացվում են 2 հիմնական՝ ռիսկի աղբյուրների և ռիսկերի կլանման ունակության խմբերում: Ցուցանիշները բերվել են համադրելի չափողականության Գառայան Կեռնել կուտակային բաշխման ֆունկցիայի միջոցով, որի արդյունքում նորմավորված ցուցանիշները տատանվում են (0,1) միջակայքում: Գունային լուծումները (5 գույն) ներկայացնում են (0,1) միջակայքի բաժանումը 5 հավասարաչափ միջակայքերի: Դեպի կարմիր գույն ուղղությունը փաստում է ռիսկի աճը/ռիսկի կլանման ունակության նվազումը, իսկ դեպի կանաչը՝ ռիսկի նվազումը/ռիսկի կլանման ունակության աճը: Գնահատականները թարմացվում և հաշվարկվում են ըստ եռամսյակների:

Մակրոարուղենցիալ քարտեզ



Տարվա ընթացքում որոշ ռիսկերի կուտակումների նվազում է արձանագրվել



կում: Տնային տնտեսությունների վարկեր/ՀԱՏԵ⁰² և վճարված տոկոսավճարներ/ՀԱՏԵ ցուցանիշները պարունակում են վարկային ռիսկի կուտակման ազդակներ՝ պայմանավորված վերջին տարիներին հիպոտեկային վարկավորման աճի բարձր տեմպերով: Եկամուտների գրանցված բարձր աճի պարագայում նշված ցուցանիշները ևս որոշակիորեն բարելավվել են, սակայն շարունակում են մնալ դեղին գունային գոտում (մանրամասն տեսնել «Տնային տնտեսությունների պարտքը և դրանից ածանցվող հնարավոր ռիսկերը» բաժինը):

Շուկայի ռիսկերի ենթախմբում ռիսկերի կուտակման աճ է արձանագրվել՝ պայմանավորված առավելապես անշարժ գույքի գների և պետական պարտատոմսերի եկամտաբերության աճերով: Միևնույն ժամանակ, տոկոսադրույքի և արժույթային ռիսկերը բնութագրող ենթացուցանիշների ազդեցությունը ընդհանուր գնահատականի վրա չեզոք է եղել (մանրամասն տեսնել «Անշարժ գույքի շուկայի միտումները և դրանից ածանցվող ռիսկերը» և «Զարգացումները ներքին ֆինանսական շուկայում» բաժինները):

Իրացվելիության ռիսկի ամփոփ ցուցանիշը բարելավվել է՝ պայմանավորված

բանկային համակարգի կողմից իրացվելիության պաշարների/բուֆերների կուտակմամբ: Արձանագրվել է բանկային համակարգի իրացվելիության ցուցանիշների աճ, ինչը բնորոշ միտում է եղել ամբողջ տարվա ընթացքում (մանրամասն տեսնել «Ռիսկերը ֆինանսական համակարգում. իրացվելիության ռիսկ» բաժինը):

Ֆինանսական համակարգի կողմից հավանական ռիսկերը կլանելու ունակությունը բնութագրող ամփոփ ցուցանիշն ամրապնդվել է՝ անցում կատարելով կանաչ գունային գոտի: Ցուցանիշի դրական դինամիկան պայմանավորվել է բանկային համակարգի բարձր շահութաբերությամբ և բարձր կապիտալացվածությամբ: Շահութաբերության աճն ապահովվել է նոր հաճախորդների մեծ ներհոսքի և մատուցվող բանկային ծառայությունների ծավալի ընդլայնման արդյունքում ոչ տոկոսային եկամուտների աճով (մանրամասն տեսնել «Ռիսկերը ֆինանսական համակարգում. կապիտալի համարժեքություն և եկամտաբերություն» բաժինը):


Մակրոպրոդեսցիալ ռիսկերի քարտեզը համապարփակ արտացոլում է հաշվետվության հաջորդ բաժինների հիմնական վերլուծությունները և եզրակացությունները:

02 ՀԱՏԵ - համախառն ազգային տնօրինվող եկամուտ:



2

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ



2.1.

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ



2022 թ. համաշխարհային տնտեսական աճի գնահատվող մակարդակը տարվա ընթացքում վերանայվել է նվազման ուղղությամբ՝ պայմանավորված արժեթղթային խաթարումների պահպանման, գնաճի արագացման, Չինաստանում COVID-19 համավարակի նոր բռնկումների, ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների կիրառման պայմաններում համաշխարհային տնտեսությունում աճող անորոշություններով:

Համաձայն գնահատումների՝ գնաճային միջավայրի կարգավորման ու գնաճի խարսխմանն ուղղված դրամավարկային պայմանների խստացումը և աշխարհաքաղաքական զարգացումների հետ կապված անորոշությունները կշարունակեն նաև առաջիկայում բացասական ազդեցություն ունենալ համաշխարհային տնտեսական աճի վրա:

Համավարակի տնտեսական հետևանքները պահպանվել են նաև 2022 թ. սկզբին: Տնտեսական պայման-

ների վատթարացումը խորացել է ռուս-ուկրաինական հակամարտության սրման և Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցների հետևանքով: Վերջինս արտահայտվել է նաև մի շարք հումքային և պարենային ապրանքների մատակարարման խաթարումներով, առաջարկի կրճատմամբ: Չինաստանում համավարակի նոր ալիքի բռնկման հետևանքով երկրում տնտեսական ակտիվության դանդաղումը բացասաբար է անդրադարձել համաշխարհային պահանջարկի վրա: ԱՄՆ-ի կողմից հրապարակվող համաշխարհային անորոշությունների ինդեքսը միմյանց հաջորդող ցնցումների հետևանքով շարունակում է պահպանվել բարձր մակարդակում՝ արտացոլելով պահպանվող անորոշությունների ու տնտեսական աճի դանդաղման փաստը (տե՛ս գծապատկեր 2.1⁰¹):


ՆՆ գործընկեր երկրներում 2022 թ. տնտեսական աճի սպասումները

01 https://www.imf.org/en/Blogs/Articles/2023/01/26/global-economic-uncertainty-remains-elevated-weighting-on-growth?utm_medium=email&utm_source=govdelivery, տվյալները հաշվարկված են եռամսյակային կտրվածքով:

Գծապատկեր 2.1

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ

III Աղբյուրը՝ ԱՄՆ:



պարբերաբար վերանայվել են նվազման ուղղությամբ (բացառությամբ Ռուսաստանի), ինչը գերազանցապես պայմանավորված է աշխարհաքաղաքական և տնտեսական հեռանկարների վերաբերյալ անորոշությունների կտրուկ աճով, զարգացած երկրներում խստացող դրամավարկային պայմաններով, ինչպես նաև ՌԴ-ի նկատմամբ կիրառված պատժամիջոցների բացասական ազդեցություններով:

ԱՄՆ-ի տնտեսության տարեվերջի զարգացումները հաշվի առնելով՝ նախկին գնահատականից փոքր-ինչ ավելի բարձր աճ է սպասվում: Համաձայն ԱՄՆ-ի առևտրի դեպարտամենտի տնտեսական վերլուծությունների բյուրոյի գնահատման՝ 2022 թ. ԱՄՆ-ի տնտեսությունում գրանցվել է տ/տ 2.1% աճ (տես գծապատկեր 2.2): Այնուամենայնիվ, գնահատվում է, որ, դրամավարկային քաղաքականության շարունակական խստացմամբ պայմանավորված, տնտեսական աճն ԱՄՆ-ում կթուլանա և 2023 թվականին կկազմի մոտ 1.6%:

Էներգակիրների աճող գները նշանակալի նպաստել են Եվրոպական երկրներում տնտեսական ակտիվության սպասվածից ավելի դանդաղմանը: Եվրագոտու տնտեսական ակտիվությունը նվազել է նույնիսկ էներգետիկ ճգնաժամի հաղթահարմանն ուղղված հարկաբյուջետային աջակցության պարագայում:

2022 թ. Եվրոգոտու տնտեսական աճը գնահատվում է 3.5%, և Եվրոպական կենտրոնական բանկի կողմից դրամավարկային քաղաքականության խստացման, էներգակիրների գների աճի հետևանքով առևտրի պայմանների վատթարացման պայմաններում սպասվում է, որ 2023 թ. Եվրոգոտու տնտեսական աճը կնվազի մինչև 0.8%:

Չինաստանում համավարակի նոր բռնկումները և իրավիճակի կառավարման պետական հակահամավարակային քաղաքականությունը թուլացրել են տնտեսությունը, ինչի հետևանքով 2022 թվականի տնտեսական աճը կազմել է 3%: Գնահատվում է, որ, 2023 թ. հակահամաճարակային սահմանափակումների կրճատմանը զուգընթաց, տնտեսական աճը կվերականգնվի մինչև 5.2%:


Համաձայն Ռուսաստանի պետական վիճակագրական ծառայության գնահատումների՝ 2022 թ. Ռուսաստանում տնտեսական անկումը կազմել է 2.1%, ինչը նախորդ գնահատականից փոքր-ինչ ավելի լավատեսական է: Ռուսաստանի տնտեսական աճի 2023 թ. ցուցանիշը վերանայվել է աճի ուղղությամբ՝ -0.3% ից մինչև 0.7%:

Տարվա հատկապես առաջին ամիսներին ապրանքահումքային գրեթե բոլոր շուկաներում գներն աճել են՝ պայմանավորված պահանջարկի շարունակական վերականգնման պայ-

Գծապատկեր 2.2.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ

||| Աղբյուրը՝ ԱՄՆ:



յին սպասումների թուլացմանը զուգահեռ, ՌԴ ԿԲ-ն աստիճանաբար թուլացրել է դրամավարկային պայմանները՝ տարեվերջին քաղաքականության տոկոսադրույքը սահմանելով 7.5% (տե՛ս գծապատկեր 2.3⁰²):

2022 թ. պարտքային, բաժնային և արժույթային շուկաներն ամբողջ աշխարհում բնութագրվել են մեծ տատանողականությամբ:

Պետական պարտատոմսերի եկամտաբերություններն աճել են ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող գրեթե բոլոր երկրներում: 10-ամյա գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը տարեկան 235, Մեծ Բրիտանիայում՝ 273, Գերմանիայում՝ 238, Ֆրանսիայում՝ 290, Ճապոնիայում՝ 34, ՌԴ-ում՝ 192 բազիսային կետով (տե՛ս գծապատկեր 2.4⁰³):

Ֆինանսական շուկայի զարգացումների և ֆինանսական շուկայի մասնակիցների սպասումների մասին են փաստում նաև կարճաժամկետ և երկարաժամկետ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունների

տարբերությունների (սպրեդ) միտումները: 2022 թ. սկզբից գնաճային ճնշումների զսպմանն ուղղված դրամավարկային պայմանների կտրուկ խստացումն ԱՄՆ-ում և Եվրոգոտում սկզբում հանգեցրել է սպրեդի կրճատմանը՝ եկամտաբերության կորերի «հարթեցմանը», իսկ արդեն երկրորդ եռամսյակից սպրեդը նվազել է օ-ից, ինչի արդյունքում եկամտաբերության կորերը «շրջվել են» (տե՛ս գծապատկեր 2.5⁰⁴): Ըստ որոշ գնահատականների՝ եկամտաբերության կորերի նման տեսքը կարճաժամկետ ապագայում ռեցեսիայի հավանական աճի ազդակ կարող է հանդիսանալ⁰⁵:


Բարձր տոկոսադրույքների միջավայրում, տարբեր երկրների պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների աճին զուգընթաց, ՀՀ Եվրոպարտատոմսերի եկամտաբերությունները ևս ճշգրտվել են աճի ուղությամբ: 10 տարի մարման ժամկետով ՀՀ Եվրոպարտատոմսերի եկամտաբերություններն աճել են ավելի արագ տեմպով՝ ԱՄՆ-ի, Եվրոգոտու և Մեծ Բրիտանիայի 10-ամյա գանձապետական

- 02 <https://www.bis.org/statistics/cbpol.htm>
- 03 <https://www.bloomberg.com/markets/rates-bonds>
- 04 <https://www.bloomberg.com/markets/rates-bonds>
- 05 <https://www.bis.org/publ/confpoz.pdf>

Գծապատկեր 2.4.

ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ճապոնիայի ԵՎ ՌԴ-ի 10-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


III Աղբյուրը՝ Bloomberg:



Գծապատկեր 2.5.

2 ԱՄՅԱ ԵՎ 10 ԱՄՅԱ ՓԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ (ՍՊՐԵԴԸ) ԱՄՆ-ՈՒՄ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ, ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ԵՎ ՌԴ-ՈՒՄ

||| Աղբյուրը՝ Bloomberg:



պարտատոմսերի եկամտաբերությունների համեմատությամբ: Վերջինների միջև առկա սպրեդը՝ երկրի ռիսկի հավելավճարը, դրսևորել է նվազման վարքագիծ՝ հիմնականում պայմանավորված երրորդ եռամսյակից ԱՄՆ-ի, Եվրոգոտու և Մեծ Բրիտանիայի 10-ամյա գանձապետական պարտատոմսերի եկամտաբերության համեմատաբար արագ աճով

(մանրամասն տե՛ս «Զարգացումները ներքին ֆինանսական շուկայում» բաժինը): Միջազգային շուկաներում տոկոսադրույքների աճի և դեպի ՀՀ ֆինանսական ներհոսքի պայմաններում դիտվել է ՀՀ առևտրային բանկերի ներդրումների աճ ինչպես ՀՀ եվրոպարտատոմսերում, այնպես էլ այլ երկրների գանձապետական պարտատոմսերում:

2.2.

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՆԵՐՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

2022 թ. ընթացքում ՀՀ մակրոտնտեսական միջավայրն առավելապես բնութագրվել է զարգացումների դրական միտումներով: Տարվա ընթացքում տնտեսական ակտիվությունը պահպանվել է բավականին բարձր մակարդակում՝ պայմանավորված հատկապես արտաքին պահանջարկով, ինչն իր հերթին խթանվել է միջազգային այցելուների, ֆինանսական միջոցների ու աշխատուժի ներհոսքի և արտահանման աճով:

2022 թվականին ՀՀ տնտեսական աճը կազմել է 12.6%, որին առավելապես նպաստել է ծառայությունների ճյուղը՝ պայմանավորված ոլորտում ձևավորված բարձր արտաքին պահանջարկով:

Տնտեսական աճի նման ցուցանիշ արձանագրվել է տարվա ընթացքում աճող անորոշությունների պարագայում պայմանավորված բազմաթիվ արտաքին գործոններով, մասնավորապես՝ ռուս-ուկրաինական հակամարտության սրման հետևանքով գործընկեր երկրներում, հատկապես՝ ՌԴ-ում, տնտեսական աճի կտրուկ թուլացմամբ, ռուբլու արժեզրկման ֆոնին ՀՀ-ի և ՌԴ-ի միջև առևտրային գործարքների, գործարար կապերի և մատակարարման պայմանագրերի շարունակականության ժամանակավոր անորոշություններով:


Այս իրադարձությունների բացասական ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա կարճաժամկետ հատվածում դրսևորվել է տնտեսական ակտիվության որոշակի թուլացմամբ: Միաժամանակ, մի շարք արտաքին գործոններ տնտեսական աճի վրա ունեցել են դրական ազդեցություն, մասնավորապես՝ ՀՀ միջազգային այցելուների (ՌԴ-ից, Բելառուսից և Ուկրաինայից) մեծածավալ ներհոսքի հաշվին համախառն պահանջարկի աճը (տե՛ս գծապատկերներ 2.6, 2.7): Տնտեսական աճի տեմպի արագացմանը նպաստել է նաև առևտրի, շինարարության, մասամբ նաև արդյունաբերության ոլորտի աճի տեմպերի արագացումը:

Ծառայությունների ճյուղի 18,3% աճին շարունակել է մեծ նպաստում ունենալ հիմնականում ֆինանսական և ապահովագրական գործունեության, ինչպես նաև տեղեկատվության և կապի ճյուղերում արձանագրված բարձր աճը:

Արդյունաբերության ճյուղում գրանցվել է 6,4% աճ, ինչին էական նպաստում է ունեցել մշակող արդյունաբերության ճյուղը: Արտաքին շուկաներում ընձեռնված հնարավորությունից օգտվելով՝ հնարավոր է եղել

Գծապատկեր 2.6.
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ԱՃԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ


III Արդյունք՝ ՀՀ ՎԿ:



Գծապատկեր 2.7.

ՉԱՇԽԱՏՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԿԵԻՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԸՆԵՐՈՒՄ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Ճյուղում ապահովել բավականին բարձր աճ՝ սննդամթերքի արտադրության ոլորտում ներդրումային ակտիվության շնորհիվ թողարկման և արտահանման ներուժի ավելացման ճանապարհով:

Շինարարության ճյուղում աճը կազմել է 18.8%, իսկ գյուղատնտեսության ոլորտում արձանագրվել է փոքր նվազում՝ -0.7%:

Բարձր պահանջարկի պայմաններում տարվա ընթացքում պահպանվել է բարձր գնաճային միջավայր. 12-ամսյա գնաճը կազմել է 8.3%⁰¹, որն իր բացասական հետևանքներն է ունեցել տնտեսության իրական եկամուտների վրա:

2022 թ. ձեռնարկությունների ավանդների աճի տեմպը գերազանցել է վարկային պարտավորությունների աճի տեմպը, ինչը վկայում է ընկերություններում ֆինանսական միջոցների էական կուտակման և տնտեսությունում խնայողությունների, ինչպես նաև ձեռնարկությունների ֆինանսական ճկունության աստիճանի բարձրացման մասին:

Վարկային պայմանների վերաբերյալ հարցումների համաձայն⁰² վարկային դիմումների քանակի, հետևաբար նաև փաստացի վարկային պահանջարկի

նվազումը բացատրվում է մի քանի պատճառներով. հաճախորդների եկամուտների, արտաքին և ներքին անորոշությունների ավելացում, վարկային առաջարկի պայմանների որոշակի խստացում: Փաստացի ցուցանիշները ևս հաստատում են հարցման արդյունքները. արձանագրվել է ն ֆիզիկական, ն իրավաբանական անձանց ավանդների աճ:

Տարվա ընթացքում տնտեսական աճին առավել մեծ նպաստում ունեցած վերամշակող արդյունաբերության, ծառայությունների, ինչպես նաև կեցության և հանրային սննդի ճյուղերում եկամուտների աճին զուգահեռ նվազել է այդ ճյուղերի վարկային պորտֆելներում չափատող վարկերի տեսակարար կշիռը՝ կրկին փաստելով ձեռնարկությունների ֆինանսական վիճակի բարելավման հանգամանքը:

2022 թ. ընթացքում պետական պարտք/ՆԱ ցուցանիշը նվազել է:

Տարվա ընթացքում պետական պարտքը⁰³ նվազել է 5.5 տոկոսային կետով՝ որոշակիորեն պայմանավորված ազգային արժույթի արժևորմամբ (տե՛ս գծապատկեր 2.8), և պարտք/ՆԱ ցուցանիշը կազմել է 49.3%: Ներքին պետական պարտքի ծա-

01 Մանրամասն տե՛ս «Գնաճի հաշվետվություն» իրապարակումը՝ https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/Monetary%20overview_I_2022.pdf:

02 Վարկային պայմանների վերաբերյալ հարցումն իրականացվում է եռամսյակային պարբերականությամբ, հարցմանը մասնակցում են առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները: 2022 թ. չորրորդ եռամսյակի հարցումը կատարվել է փետրվարին:


03 https://minfin.am/hy/page/petakan_partqi_veraberyal_ampop_tvayalner/



Գծապատկեր 2.8.

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ/ՆՆԱ ՆԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

III Աղբյուրը՝ ՀՀ Ֆինանս., ՀՀ ԿԲ:



վալն աճել է 33.2%-ով, մինչդեռ արտաքին պետական պարտքը նվազել է 20.5%-ով, ինչը համահունչ է պետական պարտքի կառավարման Կառավարության հայտարարած ռազմավարությանը: Ապագայում պետական պարտքի սպասարկման բեռի փոփոխության վրա կարող է ազդեցություն ունենալ պարտքի միջին ժամկետայնության նվազումը:

2022 թ. ընթացքում գրանցվել է արտահանման և ներմուծման բարձր աճ: Աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված՝ ՀՀ արտահան-


են միաժամանակ զուգորդվելով արտահանման ներուժի ավելացմամբ: Բարձր է եղել նաև ներմուծման ծավալների աճը՝ հիմնականում պայմանավորված տնտեսությունում ձևավորված արտաքին պահանջարկի աճով:

Ընթացիկ հաշվի պակասուրդը տարվա ընթացքում շարունակել է բարելավվել՝ պայմանավորված ինչպես արտահանման աննախադեպ դրական միտումներով, այնպես էլ դրամական փոխանցումների զուտ ներհոսքի բարձր աճով (տես գծապատկեր 2.9):

Գծապատկեր 2.9.

ԸՆԹԱՑԻԿ ՆԱԵԿԻ ՊԱԿԱՍՈՒՐԴ/ՆՆԱ ՆԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



2.3.

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏՔԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԱԾԱՆՑՎՈՂ ՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ

2022 թվականին ՀՀ տնտեսությունում գրանցված բարձր տնտեսական աճը զգալի կրճատել է տնային տնտեսությունների պարտքի բեռը՝ մեղմելով վերջինների ֆինանսական խոցելիությունը: Այնուամենայնիվ, աճող աշխարհաքաղաքական անորոշությունների, ներքին և արտաքին բարձր գնաճային միջավայրի պայմաններում տնտեսական ակտիվության պահպանման և տնային տնտեսությունների պարտքի բեռի հնարավոր աճի ռիսկերը բարձր են գնահատվում: Միևնույն ժամանակ, տնային տնտեսություններին տրամադրված հիպոտեկային վարկերի աճի տեմպը շարունակում է գերազանցել եկամուտների աճի տեմպը՝ արտացոլելով հիպոտեկային վարկավորման ոլորտում ռիսկերը:

Նամավարակի հետևանքով տնտեսական անկման փուլին հաջորդած արագ վերականգնումը բարենպաստ ազդեցություն է ունեցել

աշխատաշուկայի և տնային տնտեսությունների եկամուտների վրա:


Տարվա ընթացքում արձանագրված անվանական աշխատավարձերի աճն ուղեկցվել է բարձր գնաճով, որի արդյունքում իրական եկամուտների աճն ավելի ցածր է եղել: Անվանական արտահայտությամբ աշխատավարձերը տարվա ընթացքում աճել են 15.5%-ով (տես գծապատկեր 2.10), միաժամանակ բարելավվել են և միջին իրական աշխատավարձերի աճը՝ 6.3%, և զբաղվածության մակարդակը՝ մոտ 3 տոկոսային կետով: Նշված զարգացումները էականորեն մեղմել են տնային տնտեսությունների խոցելիությունը հավանական ռիսկերից:

2022 թվականին տնային տնտեսությունների ընդհանուր ֆինանսական ակտիվները շարունակել են աճել՝ առավելապես ուղղվելով ցածր ռիսկային ներդրումների ոլորտներ:

Գծապատկեր 2.10.

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐԻ, ԱՐՏԱԳՆԱ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ, ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (%)

III Աղբյուրը՝ ՀՀ ՎՔ, ՎԿ:




* Ներկայացված է տարեկան միջին աշխատավարձերի ցուցանիշը:
 ** 2018 թ. հունվարից սկսած՝ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է աշխատանքի շուկայի վիճակագրության մեթոդաբանությունը, որի շրջանակներում փոփոխության են ենթարկվել մի շարք ցուցանիշների մեծությունները: Ըստ այդմ՝ այսուհետ միջին անվանական աշխատավարձը վերաբերում է 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններին:

Գծապատկեր 2.11.

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՆՂՆԵՐԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



Ընդհանուր ֆինանսական ակտիվներն⁰¹ աճել են շուրջ 6%-ով, և ֆինանսական ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցել է մինչ համավարակի մակարդակը՝ կազմելով մոտ 10%:

Տնային տնտեսությունների ֆինանսական ակտիվներում շարունակում


են գերակշիռ մաս կազմել ավանդային ներդրումները, որոնց աճն ամենամեծն է եղել: 2021 թվականից ավանդները շարունակում են կայուն աճի միտում դրսևորել՝ տարեկան միջինում մոտ 13%, իսկ ավանդներ/ՀՆԱ հարաբերակցությունը տատանվել է 24-27% միջակայքում (տե՛ս

01 Ֆինանսական ակտիվներում ներառված են տնային տնտեսությունների կողմից տարվա ընթացքում ավանդային գործիքներում կատարված ներդրումները, կենսաթոշակային հատկացումները, ապահովագրական փոխհատուցումները և այլ ներդրումային գործիքներում ներդրումները:

Գծապատկեր 2.12.

ՀԱՄԱԽԱՐՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, % ՀՆԱ


III Աղբյուրը՝ Համաշխարհային Բանկ:



Գծապատկեր 2.13.

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



գծապատկերներ 2.11, 2.12^{o2}): Ավանդների աճին հիմնականում նպաստել են եկամուտների ավելացումը, տնտեսական անորոշությունների և աշխարհաքաղաքական զարգացումների սպասումներով պայմանավորված՝ որոշակի ծախսերի կրճատումը կամ չեղարկումը, հետաձգումը, ինչպես նաև, տարվա սկզբից

արտերկրից ժամանած քաղաքացիների (միջազգային այցելուների) բանկային հաշիվների/խնայողությունների աճը:


Նաշվի առնելով, որ, 2021 թվականից սկսած, տնային տնտեսությունների պարտքի բեռի նվազմանը զուգահեռ բավականին աճել են տնային տնտեսությունների ֆինանսական ակտիվ-

o2 <https://data.worldbank.org/indicator/NY.GDS.TOTL.ZS?locations=AM>

Գծապատկեր 2.14.

ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ


III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Գծապատկեր 2.15.

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԵՐ/ՆԱԱ

III Աղբյուրը՝ ՀԲ:



* Ներկայացված է տարեկան միջին աշխատավարձերի ցուցանիշը:

** 2018 թ. հունվարից սկսած՝ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է աշխատանքի շուկայի վիճակագրության մեթոդաբանությունը, որի շրջանակներում փոփոխության են ենթարկվել մի շարք ցուցանիշների մեծությունները: Ըստ այդմ՝ այսուհետ միջին անվանական աշխատավարձը վերաբերում է 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններին:

Ներք, կարելի է արձանագրել տնային տնտեսությունների զուտ ֆինանսական վիճակի բարելավման փաստը:

Տնային տնտեսությունների պարտքի բեռի աճի տեմպը, պատմական միտումներ


րի համեմատությամբ, վերջին տարիներին նվազել է: 2022 թ. տնտեսական աճի վերականգնման և վարկավորման աճի պարագայում տնային տնտեսությունների վարկ⁰³/ՆՆԱ հարաբերակցությունը նվազել է և

03 Տնային տնտեսությունների վարկերում ներառված են առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնային տնտեսություններին տրամադրված հիպոտեկային և սպառողական վարկերը:

Գծապատկեր 2.16.

ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԻՊՈՏԵԿԱՅԻՆ ԵՎ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



կազմել շուրջ 27% (2021 թ.՝ 28%, 2020 թ.՝ 30.2%) (տե՛ս գծապատկերներ 2.13, 2.14): Այս ցուցանիշը տարածաշրջանի երկրների մեդիանի համեմատությամբ շարունակում է մնալ բարձր՝ զիջելով միայն Կրաստանի 38% մակարդակը (տե՛ս գծապատկեր 2.15⁰⁴. համադրելիության նպատակով ներկայացված են սեպտեմբեր ամսվա տվյալներ):

Ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը, նախորդ տարվա համեմատությամբ, ավելի բարձր է եղել՝ 17.9%, որն առավելապես պայմանավորվել է հիպոտեկային վարկերի բարձր աճով: Դրսևորվել են սպառողական վարկերի աստիճանական վերականգնման միտումներ. նախորդ տարվա նվազումից հետո գրանցվել է աճ:

Վերջին տարիներին հիպոտեկային վարկերի աճի բարձր տեմպերը հիմնականում պայմանավորված են եկամտահարկի չափով տոկոսավճարների հետվերադարձի պետական ծրագրով և վերջինիս փուլային դադարեցմամբ: 2022 թվականի ընթացքում օտարերկրացիների մեծ ներհոսքի արդյունքում անշարժ գույքի գների և վարձավճարների աճը հավելյալ խթան է հանդիսացել հիպոտեկային վարկերի աճի համար: Հիպոտեկային վարկերը տարվա ընթացքում աճել են 27.6%-ով

և կազմել չՆԱ մոտ 11%-ը (տե՛ս գծապատկեր 2.16): Սպառողական վարկերի նկատմամբ պահանջարկը, թեկուզ և ավելի թույլ տեմպերով, վերականգնվել է. տարեկան աճը կազմել է 4.7% (տե՛ս գծապատկեր 2.16): Աճի միտումները սկսել են դրսևորվել 2022 թվականի երկրորդ եռամսյակից, երբ բարելավվել են տնտեսական ակտիվության ցուցանիշները: Հաջորդ եռամսյակներում վարկային միջոցների նկատմամբ պահանջարկի վրա որոշակի զսպողական ազդեցություն է ունեցել օտարերկրյա այցելուների խոշոր ներհոսքին զուգահեռ չէ բնակչության եկամուտների ավելացումը:

Հիպոտեկային վարկերի բարձր աճի պահպանման շնորհիվ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի մեջ սպառողական վարկերի տեսակարար կշիռը շարունակում է նվազել (տե՛ս գծապատկեր 2.16):


Համաձայն հարցման արդյունքներին՝ սպառողական վարկերի աճի տեմպը դանդաղ է վերականգնվում հիմնականում բանկերի կողմից առաջարկի պայմանների խստացման՝ հատկապես ռիսկային հաճախորդների մասով, տոկոսադրույքի մարժայի մեծացման՝ ներգրավվող ռեսուրսների թանկացման հետևանքով: Այնուամենայնիվ,

04 <https://www.ceicdata.com/en/indicator/belarus/household-debt--of-nominal-gdp>

Գծապատկեր 2.17.

ՊԱՐՏՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԴԴԻՆԱՄԻԿԱՆ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



տարեվերջին վարկավորման բոլոր ուղղություններով առաջարկի ինդեքսներն ունեցել են զուտ դյուրացումներ՝ հիմնականում տնտեսական ակտիվության վերականգնման և տնտեսական աճի սպասումների ամրապնդման ֆոնին:

Սպառողական վարկերի պահանջարկի աճին նպաստել են սպառողական գների աճի հետևանքով տնային տնտեսությունների ծախսումների ավելացումը և որոշակի վարկային գործիքների հասանելիության (վարկային գծեր և օվերդրաֆտներ՝ միջինում 60-70% սահմանաչափի օգտագործում), ինչպես նաև երկարաժամկետ օգտագործման ապրանքների պահանջարկի աճը: Ընդ որում, վերջին գործոնը կապվում է ինչպես նոր բնակարանների ձեռքբերման, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիների ժամանակավոր ներհոսքի և բնակչության անվանական եկամուտների աճի հետ:

2022 թվականին չէ տնտեսությունում գրանցված բարձր տնտեսական աճը զգալի կրճատել է տնային տնտեսությունների պարտքի սպասարկման բեռը: Մինևույն ժամանակ, աճող աշխարհաքաղաքական անորոշությունների, ներքին և արտաքին բարձր գնաճային միջավայրի պայմաններում ապագայում տնտեսական ակտիվության պահպանման, հետևաբար նաև տնտեսության

պարտքային բեռի հնարավոր աճի ռիսկերը բարձր են գնահատվում:


Վերջին տարիներին տնօրինվող եկամտի աճը, զուգորդված տոկոսադրույքի համեմատաբար ցածր մակարդակով, վարկային պարտավորությունների ժամկետայնության աճով, տնային տնտեսություններին հնարավորություն է տվել պահպանելու պարտքի սպասարկման համեմատաբար ցածր մակարդակը (տե՛ս գծապատկեր 2.17): Հիպոտեկային վարկերի բարձր աճի տեմպերով պայմանավորված՝ տնային տնտեսությունների պարտավորությունների կառուցվածքի փոփոխությունը ևս թեթևացրել է վարկերի սպասարկման բեռը՝ ի հաշիվ սպառողական վարկերի համեմատությամբ վերջինների երկար ժամկետայնության և համեմատաբար ավելի ցածր տոկոսադրույքների:

Վերջին երկու տարիներին, բարձր գնաճով պայմանավորված, քաղաքականության տոկոսադրույքի բարձրացման պայմաններում տնային տնտեսություններին տրամադրված և տրամադրվող նոր վարկերի տոկոսադրույքների աճը համեմատաբար փոքր է եղել: Դա հիմնականում պայմանավորված է բանկերի շահութաբերության, կապիտալազինվածության և իրացվելիության բարձր մակարդակով, որը հնարավորություն է ընձեռել վերջիններին՝ ձեռն-

Գծապատկեր 2.18.

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԵՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



պահ մնալու վարկերի տոկոսադրույքների ավելի մեծ չափով բարձրացումից: Ի լրումն՝ վարկային տոկոսադրույքների աճի մեղմմանը նպաստել են նաև բանկերի միջև առկա բարձր մրցակցությունը, որոշ վարկատեսակների պահանջարկի կրճատումը, վարկային պորտֆելում լողացող տոկոսադրույքներով վարկերի հարաբերական փոքր տեսակարար կշիռը և տարվա ընթացքում մեծածավալ ֆինանսական միջոցների ներհոսքը բանկային համակարգ:

Գնաճի և ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների բարձր մակարդակների պահպանման պարագայում հնարավոր է վարկերի սպասարկման ծախսերի հետագա աճ (մանրամասն տես «Ներքին ֆինանսական շուկաներ» բաժինը):

Վերջին տարիներին տնային տնտեսություններին տրամադրված վարկային պորտֆելի որակը շարունակաբար բարելավվել է՝ տնտեսական բարենպաստ զարգացումների և ֆինանսական հաստատությունների խելամիտ վարկային քաղաքականության շնորհիվ:

Տնային տնտեսությունների վարկերում չաշխատող վարկերի տեսակարար կշիռը նվազել է 2 տոկոսային կետով՝ կազմելով 4.1%, որը ցածր է պատմական միջինից (տես գծապատկեր 2.18): 2022 թ.

ընթացքում տնային տնտեսությունների ընդհանուր վարկային պորտֆելն աճել է շուրջ 18%-ով: Չաշխատող սպառողական վարկերի կշիռը նվազել է 2,6 տոկոսային կետով և կազմել 6.8%, իսկ սպառողական վարկերի աճը տարեվերջին կազմել է շուրջ 5%: Հիպոտեկային չաշխատող վարկերի տեսակարար կշիռը նվազել է 0,5 տոկոսային կետով և մյուս վարկատեսակների համեմատությամբ պահպանվել է ցածր մակարդակում՝ 1.4% (տես գծապատկեր 2.19):

Հիպոտեկային վարկերի աճի բարձր տեմպերը և անշարժ գույքի գների աճը փոխլրացրել են միմյանց. արձանագրվել են թե՛ հիպոտեկային վարկային պորտֆելի, թե՛ անշարժ գույքի գների միջին տարեկան աճի բարձր տեմպեր: Այս հանգամանքն անշարժ գույքի շուկայում գերտաքացման ռիսկերի առկայության ազդակ է:


Հիպոտեկային վարկերի աճի և անշարժ գույքի շուկայի անհավասարակշռությունների հետևանքով համակարգային ռիսկերի կուտակման արդյունավետ հասցեագրման նպատակով 2022 թ. ապրիլի 1-ից ուժի մեջ են մտել անշարժ գույքով ապահովված վարկի և գրավի արժեքի հարաբերակցության առավելագույն թույլատրելի շեմը սահմանափակող նոր նորմատիվներ⁰⁵

05 <https://www.cba.am/AM/pmessagingannouncements/Sept%20B%2001.10.2021.pdf>

Գծապատկեր 2.19.

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԵՎ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱ/ԱՃԻ ՏԵՄՊ


III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Գծապատկեր 2.20.

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐԱՍՎԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



(մանրամասն տես «Մակրոպրոդեյնցիալ քաղաքականություն» հատվածը):


Դրամայնացման միտումները տնային տնտեսությունների և խնայողությունների, և տրամադրված վարկերի մասով պահպանվել են: Տնային տնտեսությունների ավանդների աճի միտումի պահպանումը նպաստել է վերջինների պարտքային լծակի (լևերիջի) կրճատմանը (տես գծապատկերներ 2.11, 2.21):

Դրամային հիպոտեկային և սպառողական վարկերի մասնաբաժինը տնային տնտեսությունների ընդհանուր վարկերում կազմել է 87.4%՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 5.4 տոկոսային կետով: Դրամային ավանդների մասնաբաժինը ընդհանուր ավանդներում գրեթե չի փոխվել և տարեվերջին կազմել է մոտ 50% (տես գծապատկերներ 2.20, 2.21):

Գծապատկեր 2.21.

ՆԻՊՈՏԵՎԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



2.4.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ԱԾԱՆՑՎՈՂ ՌԻՍԿԵՐԸ



Անշարժ գույքի գների տատանումներից ֆինանսական կայունության խոցելիությունը դիտարկվում է շինարարության ճյուղի վարկավորման և անշարժ գույքի գրավով վարկերի, գրավի արժեքի փոփոխության ռիսկերի նյութականացման տեսանկյունից: Անշարժ գույքի առաջարկի/պահանջարկի, հետևաբար նաև գների կտրուկ տատանումները կարող են անցանկալի անդրադարձ ունենալ բանկերի վարկերի ապահովվածության ու որակի վրա՝ ռիսկեր առաջացնելով ֆինանսական կայունության առումով:


Դիտարկվող տարում ՀՀ անշարժ գույքի շուկայում արձանագրվել է գների ինդեքսի աճի տեմպի արագացում՝ պայմանավորված բարձր տնտեսական ակտիվությամբ, Եկամտահարկի վերադարձի կիրառվող մեխանիզմի և վերջինիս փուլային դադարեցման գործոնով (տե՛ս գծապատկեր 2.22): Անշարժ գույքի գների աճին հավելյալ նպաստում է ունեցել նաև օտարերկրյա այցելուների կողմից պահանջարկի էական ավելացմամբ պայմանավորված անշարժ գույքի վարձավճարների զգալի աճը:

2022 թ. առաջին կիսամյակի ընթացքում անշարժ գույքի շուկայում ակտիվության աճը պահպանվել է, որը որոշակիորեն մեղմվել է տարվա երկրորդ կեսին: 2020 թ. ընթացքում, համավարակի հետևանքով առկա սահմանափակումներով և ռազմական գործողություններով պայմանավորված, առաջացել էին գործարքներ կատարելու որոշակի բարդություններ, հետևաբար՝ գործարքների որոշ մասը կատարվել է 2021 թ.: Այդ պատճառով 2021 թվականին անշարժ գույքի շուկայում իրականացված գործարքների ծավալի և քանակի զգալի աճի ֆոնին դիտարկվող տարում ընդհանուր գործարքների աճը կարող է ցածր թվալ: Այնուամենայնիվ, 2022 թ. ևս անշարժ գույքի շուկան բնորոշվել է բարձր ակտիվությամբ, եթե բացառենք բազային տարվա վերը նշված գործոնը: Դիտարկվող տարում գրանցվել է ընդհանուր գործարքների 1.7%-ով աճ (տե՛ս գծապատկեր 2.23), իսկ 2022 թ. ընթացքում բանկերի կողմից ֆիզիկական անձանց տրամադրված նոր հիպոտեկային վարկերի ծավալը, նա-

Գծապատկեր 2.22.

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ ՄԱՐԶԵՐԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ


III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ, ՎԿ:



Գծապատկեր 2.23.

ՆՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

III Աղբյուրը՝ ՆՆ ԿԲ, ԿԿ:



խորդ տարվա համեմատությամբ, աճել է շուրջ 17%-ով:

2022 թվականին Երևանում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գները շարունակաբար աճել են. առավելագույն աճը գրանցվել է մայիսին՝ 17.2%, իսկ տարեվերջին՝ 11.1%:

2022 թ. երկրորդ եռամսյակից տնտեսական ակտիվության աճի տեմպերի զգալի արագացմանը և եկամտահարկի վերադարձի կիրառվող մեխանիզմի փոփոխությանը զուգահեռ պահպանվել է հիպոտեկային վարկերի բարձր աճի տեմպը:

Հիպոտեկային վարկի տոկոսագումարների չափով վճարված եկամտային հարկի հետվերադարձի գործող մեխանիզմը և իրականացվող պետական վերաֆինանսավորման ծրագրերը⁰¹ ընդլայնում են հիպոտեկային վարկավորման հասանելիությունը, մատչելիությունը՝ նպաստելով ոչ միայն վարկավորման պայմանների դյուրացմանը, այլև էականորեն նվազեցնելով պարտքի ընթացիկ սպասարկման բեռը (հատկապես վարկի գործողության

սկզբնական տարիներին): 2022 թ. հիպոտեկային վարկերի աճին լրացուցիչ նպաստում է ունեցել նաև եկամտահարկի վերադարձի մեխանիզմի աստիճանական դադարեցման գործունը: Այնուամենայնիվ, դիտարկվող տարում հիպոտեկային վարկերի աճը զիջում է նախորդ տարիների աճին՝ որոշ չափով պայմանավորված եկամտահարկի վերադարձի մեխանիզմի աստիճանական դադարեցման գործընթացի առաջին փուլի գործարկմամբ, համաձայն որի՝ հիպոտեկային վարկի սպասարկման համար տոկոսների գումարի չափով եկամտային հարկը 2022 թ. հուլիսի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվում, եթե անշարժ գույքը գտնվում է Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված առաջին գոտում:

Տարվա ընթացքում բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող անշարժ գույքի ձեռքբերման հիպոտեկային վարկերի⁰² ծավալը դրամային համարժեքով աճել է շուրջ 28%-ով (քանակը՝ շուրջ 20%-ով), իսկ բնակելի շենքերի շինարարությանն ուղղ-

01 2015 թ. հունվարից ուժի մեջ են մտել «Եկամտային հարկի մասին» ՆՆ օրենքում կատարված փոփոխությունները, իսկ 2020 թ. հունիսից գործում են երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023 թվականների ծրագրերը:


02 Հիպոտեկային վարկերը ներառում են անշարժ գույքի ձեռքբերման, անշարժ գույքի վերանորոգման և անշարժ գույքի կառուցապատման հիպոտեկային վարկերի հանրագումարը:



Գծապատկեր 2.24.

ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



ված վարկավորման ծավալը դրամային համարժեքով՝ շուրջ 14%-ով (տես գծապատկերներ 2.24, 2.25):


Տարեվերջի դրությամբ լողացող տոկոսադրույքով հիպոտեկային վարկերի մասնաբաժինը ընդհանուր հիպոտեկային վարկերի պորտֆելում կազմել է շուրջ 33%, որոնց մասով հնարավոր է տոկոսադրույքների փոփոխություն ֆինանսական պայմանների խստացման հետևանքով: Հնարավոր է համարվում,

որ, եկամտային հարկի վերադարձի կիրառման մեխանիզմի գործնով պայմանավորված, ֆինանսական շուկայի մասնակիցները կարող են թերագնահատել վարկերի տոկոսադրույքների հնարավոր բարձրացման ռիսկերը, ինչը միջնաժամկետ հեռանկարում կարող է հանգեցնել նաև հիպոտեկային վարկի սպասարկման բեռի ավելացմանը (եկամտահարկի գումարը գերազանցելու դեպքերում):

Գծապատկեր 2.25.


ԱՆՀԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԶԵՌՔԵՐՄԱՆ ՆԻՊՈՆԵԿԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



3

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ



3.1.

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՆԵՐՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Տարվա ընթացքում Կենտրոնական բանկի քաղաքականության տոկոսադրույքի փաստացի բարձրացման, ինչպես նաև դրամավարկային պայմանների խստացման սպասումների պայմաններում դիտվել է ֆինանսական շուկայի գրեթե բոլոր գործիքների, այդ թվում՝ պետական պարտատոմսերի տոկոսադրույքների աճ և գների նվազում: Այս զարգացումները հիմնականում տեղի են ունեցել աշխարհաքաղաքական ու տնտեսական անորոշությունների ավելացման և արտաքին գնաճի արագացման միջավայրում: Տարեսկզբից միջազգային այցելուների՝ ներքին ծառայությունների նկատմամբ մեծ պահանջարկի և արտերկրից ֆինանսական փոխանցումների զգալի ներհոսքի ազդեցությամբ դրսևորվել են նաև դրամի արժևորման ճնշումներ:

2022 թվականին դրամավարկային պայմանների խստացումը շարունակվել է. վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացվել է գումարային 3 տոկոսային կետով՝ սահմանվելով 10.75%⁰¹:

Այս ժամանակահատվածում շուկայական կարճաժամկետ տոկոսադրույքները հիմնականում ձևավորվել են քաղաքականության տոկոսադրույքի շուրջ՝ հետևելով վերջինիս բարձրացման հետագծին (տե՛ս գծապատկեր 3.1):


Դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի բարձրացմանը և բանկային համակարգում արտարժույթով ֆինանսական միջոցների աննախադեպ ներհոսքին զուգահեռ վերանայվել են նաև առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ ֆիզիկական անձանց առաջարկվող դրամային և դոլարային ավանդների տոկոսադրույքները: Դրամային ավանդների տոկոսադրույքների աճն ընդհանուր առմամբ արտացոլել է քաղաքականության հիմնական տոկոսադրույքի ուղղությունը, դոլարային ավանդների տոկոսադրույքը՝ բանկային համակարգում դոլարային իրացվելիության աճը (պայմանավորված օտարերկրյա նոր հաճախորդների ներգրավմամբ և ֆինանսական մի-

01 Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Գնաճի հաշվետվություններ: https://www.cba.am/am/SitePages/mp2022_report.aspx:

Գծապատկեր 3.1.

2022 թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ


Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Գծապատկեր 3.2.

ԿԱՐՃԱԺԱՍԿԵՏ ԱՎԱՆՂՆԵՐԻ ՕՏԵՐՏԱՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ (ՏՈԿՈՍԱՅԻՆ ԿԵՏ)

III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



չոցների մեծածավալ ներհոսքով) (տե՛ս գծապատկեր 3.2):


Դրամային շուկայի կարճաժամկետ տոկոսադրույքների համեմատությամբ վարկերի տոկոսադրույքների փոքր աճ է արձանագրվել: Բանկերում շահութաբերության և իրացվելիության բարելավումները հնարավորություն են ընձեռել վերջիններին վարկային տոկոսադրույքների աճի ուղղությամբ ավելի փոքր ճշգրտումներ անե-

լու՝ դրանով իսկ մեղմելով վարկերի սպասարկման բեռի աճը, հետևաբար նաև վարկային ռիսկի վրա անբարենպաստ ազդեցությունները: Սպառողական վարկավորման տոկոսադրույքները 2022 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, միջինում աճել են 1.0, հիպոտեկային վարկավորման տոկոսադրույքները՝ 0.8, իսկ բիզնես վարկավորման տոկոսադրույքները՝ 0.6 տոկոսային կետով (տե՛ս գծապատկեր 3.3):

Գծապատկեր 3.3.

ԴՐԱՄԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ


III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



Գծապատկեր 3.4.

ՆՆ ԿԲ ՆԱՄԱԽԱՌՆ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻՋՔԱՆԿԱՅԻՆ ԴՐԱՄԱՅԻՆ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ, ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ ԵՎ ԶՈՒՏ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ (ՄԻՋԻՆ ԱՄՍԱԿԱՆ ՊԱՇԱՐ, ՄԼՆ ՆՆ ԴՐԱՄ)

III Աղբյուրը՝ ՆՆ ԿԲ:




Տարվա ընթացքում դրամային շուկաները բնութագրվել են բարձր իրացվելիությամբ: ՆՆ ԿԲ-ն բավարարել է դրամային անհրաժեշտ իրացվելիության պահանջարկը հիմնական ռեպո և ճշգրտող ռեպո գործիքների միջոցով, բացի այդ բանկերը պարբերաբար օգտվել են մշտական հնարավորության՝ լուծարդային ռեպո գործիքից: Երրորդ և չորրորդ եռամսյակներում ԿԲ-ի հետ հա-

մախառն ռեպո գործառնությունների ծավալի նվազմանը զուգահեռ ավելացել է միջբանկային դրամային ռեպո գործառնությունների ծավալը: Միջբանկային և ԿԲ ռեպո տոկոսադրույքները հիմնականում ձևավորվել են միմյանց մոտ մակարդակներում՝ միջբանկային դրամային ռեպո տոկոսադրույքները միջինում ցածր են եղել 0.13 տոկոսային կետով (տե՛ս գծապատկեր 3.4):

Գծապատկեր 3.5.

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ


III Աղբյուրը՝ ՆՆ ԿԲ, ՆՆ Ֆիննայն:



Գծապատկեր 3.6.

ՊՊ ԵԿԱՍՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ Ֆիննախ.



Դրամավարկային պայմանների խստացմանը համարժեքորեն է արձագանքել նաև պետական պարտատոմսերի (ՊՊ) եկամտաբերությունը (տես գծապատկեր 3.5): Ֆինանսական համակարգում իրազմելիության աճը թերևս մասամբ զսպել է ՊՊ եկամտաբերության աճը, այդուհանդերձ, տարեվերջին եկամտաբերության կորը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, զուգահեռ տեղաշարժվել է վերև (տես գծապատկեր 3.6)


Տարեսկզբից դիտարկվել է պետական պարտատոմսերի եկամտաբերության աճ: Ընդ որում, առավել արտահայտված է կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերության աճը՝ շուրջ 2.6 տոկոսային կետ: Կորի երկայնքով աճի տեմպը նվազում է՝ երկարաժամկետ պարտատոմսերի համար կազմելով 1.9 տոկոսային կետ:

Առաջին եռամսյակում վարկային շուկայում բանկերի զգուշավոր քաղաքականության ներքո դիտ-

Գծապատկեր 3.7.

2022 Թ. ՊՊ ԵԿԱՍՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ Ֆիննախ.



վել է պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի աճ՝ որպես այլընտրանքային եկամտաբեր ներդրում, սակայն եկամտաբերության կորի դիրքի էական փոփոխություն չի արձանագրվել: Հետագայում պետական պարտատոմսերի տոկոսադրույքների աճը պայմանավորվել է ինչպես ԿԲ քաղաքականության տոկոսադրույքի շարունակական բարձրացմամբ, այնպես էլ թողարկման առաջարկի աճով: Վերջինս հիմնականում պայմանավորված է Կառավարության միջնաժամկետ ռազմավարությանը համահունչ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներքին փոխառու զուտ միջոցների տեսակարար կշռի ավելացման մտադրությամբ: Արդյունքում՝ տարեվերջին կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերության բարձր աճը մասամբ հանգեցրել է կորի «հարթեցմանը» (տե՛ս գծապատկեր 3.7):

Վերոնշյալ միտումներն արտացոլվում են նաև ՊՊ մինչև մարում եկամտաբերության սպրեդների (մինչև մարում եկամտաբերությունների տարբերությունը) զարգացումներում: Սպրեդները նվազել են ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի եկամտաբերության միջև: 1

և 10-ամյա պարտատոմսերի սպրեդը միջինում նվազել է մոտ 0.8 տոկոսային կետով (տե՛ս գծապատկեր 3.8):


Սպրեդների նեղացումը հիմնականում պայմանավորված է երկարաժամկետ ՊՊ եկամտաբերության համեմատությամբ կարճաժամկետ ՊՊ եկամտաբերության առաջանցիկ աճով, ինչպես նաև շուկայի մասնակիցների մոտ քաղաքականության տոկոսադրույքի հետագա աճի ցածր հավանականության սպասումներով:

Տարվա աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում երկրի ռիսկի հավելվածարդ դրսևորել է նվազման վարքագիծ՝ Հայաստանի համար ստեղծելով միջազգային ֆինանսական շուկաներ բարենպաստ պայմաններով մուտքի հնարավորություն (անհրաժեշտության դեպքում): Զարգացող տնտեսությունների ռիսկի դեպի ներքև որոշակի ճշգրտման, ՀՀ-ում տնտեսական բարձր աճի, դեպի ՀՀ կապիտալ մեծ ներհոսքի և դրամի արժևորման պայմաններում պետական պարտքի բեռի էական նվազման արդյունքում ակնկալվում էր, որ երկրի ռիսկի հավելվածարդ կձևավորվեր ավելի ցածր մակարդակում: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի և Եվրոգոտու կողմից դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի բարձրացման համատեքստում ֆինանսական շուկա-

Գծապատկեր 3.8.

ՊՊ ՄԻՆՉԵՎ ՄԱՐՈՒՄ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍՊՐԵԴՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2020-2022 ԹԹ.

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ Ֆիննախ.:



ներում պայմանների խստացմանը համահունչ է եղել զարգացող երկրների, այդ թվում և Հայաստանի համար միջազգային ֆինանսական շուկաներից իրացվելիության ներգրավման պայմանների խստացումը (տե՛ս գծապատկեր 3.9)⁰²:

Արժութային շուկայի տատանողական վարքագիծը պայմանավորված է եղել հիմնականում աշխարհաքաղաքական զարգացումներով և դրամավարկային պայմանների խստացումներով: Տարեսկզբից միջազգային այցելուների՝ ներքին ծառայությունների նկատմամբ մեծ պահանջարկի և ֆինանսական մեծածավալ ներհոսքի պայմաններում դրսևորվել են դրամի արժևորման ճնշումներ: Դեպի ՀՀ ֆինանսական միջոցների ներհոսքի և փոխարժեքի տատանումների պարագայում ՀՀ արժութային շուկայում տարվա ընթացքում դիտվել է գործարքների ծավալների աննախադեպ աճ:

2022 թ. դեկտեմբերին, Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ, ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է շուրջ 22%-ով, եվրոյի նկատմամբ՝

շուրջ 29%-ով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 15%-ով: ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի արժևորումը հիմնականում ընդգծվել է 2-րդ եռամսյակում՝ շարունակվելով մինչև տարեվերջ: ՌԴ ռուբլու նկատմամբ դրամը կտրուկ արժևորվել է առաջին եռամսյակում (շուրջ 14.7%-ով)՝ պայմանավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուբլու կտրուկ արժեզրկմամբ: Սակայն երկրորդ եռամսյակում ՀՀ դրամի նկատմամբ ՌԴ ռուբլու արժեզրկումը մեղմվել է՝ պայմանավորված ՌԴ արժութային շուկայում ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուբլու զգալի արժևորմամբ (տե՛ս գծապատկեր 3.10):


ՀՀ արժութային շուկայի խորության համեմատությամբ էական մեծածավալ ներհոսքի պայմաններում ԿԲ-ն իրականացրել է իրավիճակային միջամտություն արժութային շուկայում՝ նպաստելով ֆինանսական շուկաների բնականոն գործունեությանը և ի հայտ եկած կարճաժամկետ կտրուկ տատանումների չեզոքացմանը: Նշված քաղաքականության հետևողական վարման պայմաններում ԿԲ-ի կողմից ԱՄՆ դոլարի զուտ առքի ծավալը կազմել է շուրջ 534 մլն ԱՄՆ դոլար:

02 Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ֆինանսների նախարարություն, <https://www.bloomberg.com/markets/rates-bonds/government-bonds/us>:

Գծապատկեր 3.9.

ԵՐԿՐԻ ՌԻՍԿԻ ՆԱԿԵԼԱԿՃԱՐԸ (2025 ԵՎ 2029 ԹԹ. ՄԱՐԿՈՂ ՆՆ ԹՈՂԱՐԿԱԾ ԵՎՐԱՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՎԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄՆ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԺԱՄԿԵՏԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՎԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ)


Աղբյուրը՝ Bloomberg:



Գծապատկեր 3.10.

ՀՀ ԴՐԱՄԻ ՆԿԱՏԱՄԱԲ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՐԺՈՒՅԹՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՕՐԱԿԱՆ ՓՈԽԱՐԺԵՔՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԻԾ

Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:




Տարեսկզբից տնտեսական և աշխարհաքաղաքական անորոշությունների կտրուկ ավելացումը, Նոր հաճախորդների մեծ ներհոսքի արդյունքում արտարժույթային գործառնությունների ծավալների էական աճը և դրամի արժևորման ճնշումներն արտացոլվել են նաև ՀՀ դրամի և օտարերկրյա արժույթների փոխարժեքների մարժաների (առջի և վաճառքի փոխարժեքների տարբերությունը) վարքագծում: Տարվա առաջին եռամսյա-

կում դիտվել է դոլարի, եվրոյի և ռուբլու փոխարժեքների միջին մարժաների աճ, որը տարեվերջին մեղմվել է՝ միջինում տարեսկզբի նկատմամբ աճելով համապատասխանաբար մոտ 3, 2 և 4 անգամ (տես գծապատկեր 3.10): ԱՄՆ դոլարի և եվրոյի համեմատությամբ ՌԴ ռուբլու փոխարժեքի միջին մարժայի ավելի մեծ աճը պայմանավորված է ռուբլու նվազ իրացվելիությամբ և շուկայի համեմատաբար փոքր խորությամբ:

Գծապատկեր 3.11.

ՀՀ ԴՐԱՄԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՐԺՈՒՅԹՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԱՄՍԱԿԱՆ ՓՈԽԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԱՐԺԱՆ / BID-ASK SPREADS (%-Ը ՓՈԽԱՐԺԵՔԻ ՄԵՋ)

Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



3.2.

ՌԻՍԿԵՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ



3.2.1.

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

2022 թվականին համակարգն ապահովել է ֆինանսական ծառայությունների անխափան մատուցումը: Ծավալային առումով համակարգն աճել է բնականոն տեմպերով, այդուհանդերձ, ՀՆԱ առաջանցիկ աճի պայմաններում ֆինանսական միջնորդության մակարդակը նվազել է:

Տարեվերջի դրությամբ ֆինանսական համակարգի ակտիվներ/ՀՆԱ և վարկեր/ՀՆԱ ցուցանիշները կազմել են 115.8% և 48.2%՝ տարվա ընթացքում նվազելով համապատասխանաբար 5.1 և 8.5 տոկոսային կետով: Թե՛ բացարձակ, թե՛ հարաբերական մեծությամբ ֆինանսական հաստատություններից համեմատաբար բարձր աճ են ապահովել բանկերը և կենսաթոշակային ֆոնդերը

(տե՛ս գծապատկեր 3.12): Բանկերը շարունակում են գերակշռել 85% մասնաբաժնով (տե՛ս գծապատկեր 3.13): Բանկերի կշռի աճին 0.6 տոկոսային կետով նպաստել է նաև «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՌԻՎԿ-ին բանկային գործունեության լիցենզիայի տրամադրումը:

Նախորդ տարիների համեմատությամբ կենսաթոշակային ֆոնդերի ցածր աճը պայմանավորված է ֆոնդերի եկամտաբերության ժամանակավոր անկմամբ: Բարձր գնաճային միջավայրում, որն ուղեկցվել է նաև աճող աշխարհաքաղաքական անորոշություններով, միջազգային շուկաներում տեղի է ունեցել թե՛ բաժնետոմսերի, թե՛ ֆիքսված եկամտաբերությամբ գործիքների գների անկում:


2022 թ. վարկ/ՀՆԱ ցուցանիշի անկում է գրանցվել, թեև վարկավորումը շարունակվել է բնականոն տեմպերով: Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից իրական հատվածին տրված վարկերի աճը (ֆիքսված փոխարժեքով) կազմել է 13.0%⁰¹: ՀՀ դրամի արժևորման արդյունքում

01 Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը չեզոքացված է:

Գծապատկեր 3.12.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՃԸ


III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ.:



Գծապատկեր 3.13.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԸՍՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ - 31.12.2022 Թ.

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



վարկերի դրամային համարժեքն (փաստացի փոխարժեքով) աճել է ընդամենը 3.4%-ով, ինչը մոտ 18 տոկոսային կետով պակաս է ՀՆԱ անվանական աճից:

Բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ և վարկեր/ՀՆԱ ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 2.8 և 7.1 տոկոսային կետով և կազմել 98.7% և 45.9%: Ավանդների բարձր աճի պայմաններում ավանդներ/ՀՆԱ հարաբերակցությունն ավելացել է 3.0 տո-

կոսային կետով՝ կազմելով 54.8% (տես գծապատկեր 3.14):

3.2.2.


ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐ

2022 թվականի մակրոֆինանսական զարգացումները բանկային համակարգի համար նպաստավոր էին ինչպես նախորդ

Գծապատկեր 3.14.

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



տարիներից փոխանցված ռիսկերը կլանելու, այնպես էլ կապիտալի և իրացվելիության դիրքերն էլ ավելի ամրապնդելու առումով:

Տևական ժամանակահատվածում արձանագրված ցածր շահութաբերության մակարդակի բարձրացման առումով 2022 թվականը նպաստավոր էր. նախ՝ ավելի առարկայական դարձավ ՀՀ-ում ֆինանսական միջնորդության գործառույթի բիզնես հեռանկարը, մյուս կողմից՝ բանկերի համար լավ հնարավորություն ստեղծվեց արդյունավետության հետագա ընդլայնման համար նախաձեռնելու զարգացման և ներդրումային երկարաժամկետ ծրագրեր:

ԿԱՊԻՏԱԼԻ ՆԱՄԱՐԺԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿՎԱՍԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Բանկային համակարգը 2022 թվական է մուտք գործել կապիտալի համարժեքության բարձր մակարդակով, ինչն ավելի է ամրապնդվել տարվա ընթացքում: Սթրես թեստերի արդյունքները ցույց են տալիս, որ բանկային համակարգն ունակ է կլանելու ենթադրյալ մակրոտնտեսական շոկերից ածանցվող վնասները: Իրավիճակը գնահատելով բարենպաստ՝ Կենտրոնական

բանկն առաջին անգամ հակացիկլիկ բուֆերի կուտակման որոշում է կայացրել:

Ընդհանուր կապիտալի համարժեքությունը 2022 թ. դեկտեմբերին կազմել է 20.3%՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ աճելով 3.1 տոկոսային կետով (ըստ բանկերի՝ տես գծապատկեր 3.15⁰²): Կապիտալի համարժեքության փոփոխության վրա դրական են ազդել կապիտալի աճը, դրամի արժուրման արդյունքում ռիսկով կշռված ակտիվների (վարկերի) դրամային համարժեքի նվազումը (տես գծապատկեր 3.16), ինչպես նաև արտարժութային վարկերի տեսակարար կշռի նվազումը:

Նորմատիվային կապիտալն ավելացել է 36%-ով՝ հիմնականում շահույթի, ինչպես նաև կանոնադրական կապիտալի աճի հաշվին (տես գծապատկեր 3.17): Նորմատիվային կապիտալ/ակտիվներ հարաբերակցությունն ավելացել է շուրջ 2 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 14.6%:


Բիսկով կշռված ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը վերջին տարիներին դրսևորել է շարունակական նվազման միտում՝ հիմնականում պայմանավորված ար-

02 Գծապատկերում ներառված չեն կապիտալի համարժեքության (ներառյալ՝ բուֆերների) պահանջի կրկնապատիկը գերազանցող բանկերը (4 բանկ, ըստ ակտիվների կշիռը բանկային համակարգում՝ 5.3%): Գծապատկերում արցցիսների (հորիզոնական) առանցքում 2021 թ. դեկտեմբերի կապիտալի համարժեքությունն է, օրդինատների (ուղղահայաց) առանցքում՝ 2022 թ. դեկտեմբերինը, իսկ կետերի չափսը՝ ակտիվների կշիռը բանկային համակարգում, 2022 թ. վերջի դրությամբ:

Գծապատկեր 3.15.

ԿԱՊԻՏԱԼԻ ՆԱՄԱՐԺԵՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԲԱՆԿԵՐԻ


III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Գծապատկեր 3.16.

ՌԻՍԿՈՎ ԿՇՈՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ (31.12.2022 Թ.)

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



տարժույթային վարկերի տեսակարար կշռի նվազմամբ (տես գծապատկեր 3.18):

2022 թվականին վերանայվել են կապիտալի համարժեքության կարգավորման պահանջները. 2023 թվականի հունիսից սկսած՝ կապիտալի համարժեքության պահանջը սահմանվում է ըստ կապիտալի երեք մակարդակի՝

1. առաջին մակարդակի հիմնական կապիտալ (CET 1),
2. առաջին մակարդակի կապիտալ (Tier 1 capital),

3. ընդհանուր կապիտալ (Total capital):


Մինևույն ժամանակ, 1 տոկոսային կետով նվազեցվել է ընդհանուր կապիտալի համարժեքության 12% նվազագույն սահմանաչափը:

2023 թ. հունվարից բարձրացել են կապիտալի պահպանման և համակարգային բանկերի բուֆերների կարգավորմամբ նախատեսված պահանջները՝ համաձայն բուֆերների ներդրման ժամանակացույցի: Բուֆերները բարձրացվել են յուրաքանչյուրը 0.5 տոկոսային կետով և սահմանվել

Գծապատկեր 3.17.

ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ


III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Գծապատկեր 3.18.

ԲԱՆԿԱՅԻՆ ՆԱՄԱԿԱՐԳԻ ԼԵՎԵՐԻՋԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



համապատասխանաբար 2.0% և 1.5% (տես գծապատկեր 3.19):

Բանկային համակարգը 2022 թվական է մուտք գործել ոչ ճգնաժամային տարիներին բնորոշ եկամտաբերության մակարդակով, որն էապես բարելավվել է՝ սկսած 2-րդ եռամսյակից:


Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների համաձայն՝ 2022 թվականին բանկային համակարգի ըստ ակտիվների (RoA)⁰³ և ըստ կապիտալի (RoE) շահութաբերության ցուցանիշները նախորդ տարվա համեմատությամբ եռապատկվել են և կազմել համապա-

⁰³ Ըստ ակտիվների (RoA) և ըստ կապիտալի (RoE) շահութաբերության ցուցանիշները հաշվարկվել են որպես զուտ շահույթի և համապատասխանաբար հաշվեկշռային ակտիվների ու կապիտալի միջին ամսական մեծությունների հարաբերություն:

Գծապատկեր 3.19

ՆԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ


III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Գծապատկեր 3.20.

ԲԱՆԿԱՅԻՆ ՆԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



տասխանաբար 3.2% և 21.7% (տե՛ս գծապատկեր 3.20):

Շահութաբերության աճը հիմնականում պայմանավորված է նոր հաճախորդների մեծ ներհոսքի արդյունքում վճարահաշվարկային և արտարժույթային գործառնությունների ծավալների բազմապատիկ աճով: Մասնավորապես՝ 2021 թ. ցուցանիշների համեմատությամբ բանկերի զուտ ոչ տոկոսային եկամուտներն աճել են 220 մլրդ դրամով, իսկ տոկոսային եկամուտների ու ծախսերի և


վարկերից կորուստների զուտ մեծությունն աճել է ընդամենը 7 մլրդ դրամով:

Ջուտ տոկոսային մարժան (զուտ տոկոսային եկամտի և ակտիվների հարաբերությունը) նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 0.3 տոկոսային կետով (տե՛ս գծապատկեր 3.21): Վերջինիս վրա դրական են ազդել վարկերի միջին եկամտաբերության աճը, կապիտալի բարձր աճի արդյունքում լներիջի կրճատումը, ինչպես նաև վարկերի ֆինանսավորման հիմնական ռեսուրսի ռեզիդենտների

Գծապատկեր 3.21.

ՏՈԿՈՍԱՅԻՆ ՄԱՐՄԱ


III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Գծապատկեր 3.22.

ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ՆԻՄՆԱԿԱՆ ՎԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ

III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



ավանդների կառուցվածքում ցպահանջ միջոցների տեսակարար կշռի աստիճանական աճը: Վարկերի միջին եկամտաբերությունն ավելացել է 0.9 տոկոսային կետով՝ պայմանավորված դրամային վարկերի տեսակարար կշռի աճով, ինչպես նաև շուկայում տոկոսադրույքների փոփոխությամբ: Ժամկետային ավանդների միջին ծախսատարությունը չի փոխվել, իհարկե, տեղի է ունեցել դրամային ավանդների տոկոսադրույքների աճ, որը, սակայն, չէզոք-

քացվել է դոլարային ավանդների տոկոսների նվազման, ինչպես նաև կառուցվածքային փոփոխությունների արդյունքում:


ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ

Տնտեսական բարձր ակտիվության պայմաններում վարկավորումը ևս աճել է երկնիչ տեմպերով. հիմնական նպաստումը շարունակում են ունենալ հիպոտեկային վարկերը:

Գծապատկեր 3.23.

ՆԻՄՆԱԿԱՆ ՎԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ (\$ԻՔՍՎԱԾ ՓՈԽԱՐԺԵՔՈՎ) ԱՃԻ ՏԵՄՊԵՐԸ


III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



Գծապատկեր 3.24.

ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԴՈՒՐԱՅՆԱՑՈՒՄ

III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



Բանկերի կողմից տրամադրված վարկերի աճը (ֆիքսված փոխարժեքով) կազմել է 15.5%, ՀՀ դրամի արժևորման արդյունքում վարկերի դրամային համարժեքն աճել է ընդամենը 5.5%-ով:

Բարձր տեմպով աճել են հիպոտեկային և շինարարության ճյուղին տրված վարկերը (տես գծապատկերներ 3.22, 3.23): 2022 թ. հիպոտեկային վարկերի աճը (ֆիքսված փոխարժեքով) կազմել է 34.2%: Հիմնական վարկատեսակներից ամենացածր աճի տեմպն ունեցել են սպառողա-

կան վարկերը. առանց «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ պորտֆելի, սպառողական վարկերի աճը բանկերում կկազմեր 5.5%:


2022 թ. վարկերի դուրսայնացումը շարունակել է նվազել (տես գծապատկեր 3.24), ընդ որում, ցուցանիշը նվազող է անգամ ՀՀ դրամի արժևորման ազդեցությունը չեզոքացնելու դեպքում:

Տնտեսական բարձր ակտիվության և եկամուտների աճի պայմաններում չաշխատող վարկերի կշիռը, որոշակի տատա-

Գծապատկեր 3.25.

ՉԱՇՃԱՏՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԿՇՈՒ ԴԻՆԱՄԻԿԱՆ


III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



Գծապատկեր 3.26.

ՌԵԶԻԴԵՆՏԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԴԱՍԱԿԱՐԳՎԱԾ (ՉԱՇԽԱՏՈՂ + ՆՍԿՎՈՂ) ՎԱՐԿԵՐՆ ԸՍՏ ՆԻՄՆԱԿԱՆ ՎԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ

III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



Նոստերով հանդերձ, շարունակել է ցածր մնալ թե՛ երկարաժամկետ միջինից, թե՛ նախքան համավարակի տարածումը եղած մակարդակից:


Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը տարեվերջին կազմել է 2.8%: Ռեզիդենտներին տրամադրված հիմնական վարկատեսակների շարքում չաշխատող վարկերի տեսակարար կշիռն աճել է միայն բիզնես վարկերի դեպքում (տե՛ս գծապատկերներ 3.25, 3.26): Նա-

խորդ տարվա համեմատությամբ աճել են վարկերից կորուստները (զուտ մասհանումների և դուրսգրումների հարաբերությունը միջին վարկերին), ընդ որում պայմանավորված ոչ այնքան չաշխատող վարկերի կշռի աճով, որքան բանկերի՝ հաշվեկշիռներում առկա ռիսկային վարկերի պահուստավորման (ինարավոր կորուստների ճանաչման) պահպանողական քաղաքականությամբ (տե՛ս գծապատկեր 3.27):

Գծապատկեր 3.27.

ՎԱՐԿԵՐԻՑ ԿՈՐՈՒՍՆԵՐ


III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



Գծապատկեր 3.28.

ԲԱՆԿԱՅԻՆ ՆԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԽՈՇՈՐ ՓՈԽԱՌՈՒՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



Վարկային պորտֆելի կենտրոնացվածությունը նվազել է, մասնավորապես՝ խոշոր փոխառուներին⁰⁴ տրամադրված վարկերի տեսակարար կշիռը նվազել է 4.1 տոկոսային կետով (տե՛ս գծապատկեր 3.28):

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ


Բանկերի արտարժույթային իրացվելիությունը շարունակել է աճել՝ պայմանավորված թե՛ իրացվելիության ռիսկի կարգավորման Կենտրոնական բանկի եր-

04 Խոշոր է համարվում այն փոխառուն, որի գծով բանկի ռիսկը (ներառյալ նաև նրա հետ փոխկապակցված անձանց գծով ռիսկը) գերազանցում է բանկի միջին ամսական նորմատիվային ընդհանուր կապիտալի 5%-ը:

Գծապատկեր 3.29.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



կարածամկետ քաղաքականությամբ, թե՛ 2022 թ. զարգացումներով:

Ոչ ռեզիդենտների ավանդների ներհույսի արդյունքում արտարժույթային իրացվելիությունը պատմական առավելագույն մակարդակում է, իհարկե, իրացվելիության ցուցանիշներն աճող են անգամ ոչ ռեզիդենտների ավանդների ազդեցությունը չեզոքացնելու դեպքում: Տարեսկզբի համեմատությամբ բոլոր արժույթներով ընդհանուր իրացվելիությունն ավելացել է 5.6, իսկ արտարժույթային իրացվելիությունը՝ 12.1 տոկոսային կետով (տեսն գծապատկեր 3.29): 2022 թ. դեկտեմբերին իրացվելիության ծածկույթի գործակցի (LCR) միջին մակարդակը բոլոր արժույթներով կազմել է մոտ 290%, իսկ 1-ին խմբի արտարժույթներով՝ մոտ 470% (տեսն գծապատկեր 3.30): Բանկերում ապահովված է նաև զուտ կայուն ֆինանսավորման գործակցի պահանջը (տեսն գծապատկեր 3.30):

Տարվա ընթացքում Կենտրոնական բանկն իրականացրել է պարտադիր պահուստավորման կառուցվածքում հերթական փոփոխությունը. արտարժույթային միջոցների դիմաց արտարժույթով պահուստավորման մասնաբաժինն ավելացվել է ևս 2 տոկոսային կետով՝ ի հաշիվ դրամի մասնաբաժնի:

Իրավաբանական և ֆիզիկական անձանց ավանդները (ֆիքսված փոխար-

ժեքով) աճել են շուրջ 43%-ով (դրամային համարժեքով աճը կազմել է 28.8%), ընդ որում՝ ռեզիդենտների ավանդներն ավելացել են 29.4%-ով, իսկ ոչ ռեզիդենտներինը՝ 96.3%-ով:


Բանկերի արտարժույթային իրացվելիության դիրքի ամրապնդման մասին են վկայում նաև վարկ/ավանդ ցուցանիշի միտումները, ընդ որում, հարաբերակցությունը նվազել է և՛ ընդհանուր պորտֆելով, և՛ միայն ռեզիդենտների հաշվարկով (տեսն գծապատկերներ 3.31, 3.32): Վարկավորման նկատմամբ ավանդների առաջանցիկ աճը պայմանավորված է մի քանի գործոնով: Նախ՝ արտարժույթային վարկերի ցածր պահանջարկի արդյունքում պորտֆելի աճը (ֆիքսված փոխարժեքով) կազմել է ընդամենը 4.8%, իսկ ոչ ռեզիդենտներից ներգրավված միջոցները, ելնելով ռիսկերի կառավարման մոտեցումներից, բանկերը տեղաբաշխել են բարձր իրացվելի ակտիվներում: Մյուս կողմից՝ միջազգային շուկաներում տոկոսադրույքների աճի հետևանքով մեծացել է բանկերի՝ ֆինանսավորման արտաքին աղբյուրները ներքին ավանդներով փոխարինելու հակվածությունը:

Դրամային վարկերի համեմատաբար բարձր աճի պայմաններում դրամային վարկ/ավանդ ցուցանիշն աճել է շուրջ 6 տոկոսային կետով, այնուամենայնիվ, բանկերի շահութաբերության բարձր մա-

Գծապատկեր 3.30.

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԵՎ ԶՈՒՑ ԿԱՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ


III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Գծապատկեր 3.31.

ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴԵՐԻ ՏԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



կարողակի արդյունքում դրամային իրացվելիությունը չի նվազել (տե՛ս գծապատկերներ 3.30, 3.32):

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՌԻՍԿ

Պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի աճին զուգահեռ, պարտատոմսերի գծով գրանցվել է բացասական վերագնահատում, այնուամենայնիվ, իրաց-


վելիության բարձր մակարդակի պայմաններում հավանական չէ բանկերի կողմից պորտֆելների իրացումը, և ճանաչված վնասը կարող է վերականգնվել ժամանակի ընթացքում:

Կապիտալի կազմում հաշվառվող արժեթղթերի վերագնահատման պահուստը 2022 թ. նվազել է 29.8 մլրդ դրամով և կազմել -34.4 մլրդ դրամ, 1.0 մլրդ դրամ էլ կազմել է իրացված վնասը: Ընդհանուր բացասական արդյունքը հաշվեկշռային կապիտալի 2.9%-ն է:

Գծապատկեր 3.32.

ՌԵԶԻԴԵՆՏԵՐԻ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴԵՐԻ ՏԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՐԺՈՒՅԹԻ


III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



Գծապատկեր 3.33.

ՆԵՐՂՐՈՒՄՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՑՈՍՄԵՐՈՒՄ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Տարվա ընթացքում եապես ավելացել են բանկերի ներդրումները պետական պարտատոմսերում (տես գծապատկեր 3.33): ՀՀ դրամի դեպքում դա պայմանավորված է եղել տոկոսադրույքների փոփոխություններով, մասնավորապես՝ պետական պարտատոմսերի դեպքում եկամտաբերության կորի փոփոխությունն ավելի մեծ է եղել, քան դրամային վարկերի տոկոսադրույքների փոփոխությունը: Արտարժույթի պարագայում պարտատոմսերում ներդրումներն աճել


են՝ ի հաշիվ ավանդների կտրուկ աճի. իհարկե, տոկոսադրույքների գործոնը ևս իր նպաստումն է ունեցել:

Ֆինանսական ակտիվների գնե-րի փոփոխության նկատմամբ բանկերի զգայունությունը բարձրացել է (տես գծապատկեր 3.34), այնուամենայնիվ, բանկերի հաշվեկշիռների ներկա կառուցվածքի պայմաններում շուկայական ռիսկի հնարավոր ազդեցությունը եական չէ: Արտարժույթային բաց դիրքերով պայմանավորված՝ համակարգի հնարավոր վնասը

Գծապատկեր 3.34.

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻ ՆԿԱՏԱՍԲ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Նշանակալի չէ, և փոխարժեքից ածանցվող ռիսկերի շարքում շարունակում է եական մնալ չհեջավորված վարկառուների գծով վարկային ռիսկի ազդեցությունը:

3.2.3.

ՈՋ ԲԱՆԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական համակարգում ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների տեսակարար կշիռը դեռևս փոքր է, իհարկե, կենսաթոշակային ֆոնդերի կշիռն աստիճանաբար աճում է: Առայժմ կենսաթոշակային ֆոնդերի և այլ ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների գործունեության ազդեցությունը ֆինանսական կայունության վրա գնահատվում է ոչ նշանակալի:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

2022 թ. ֆոնդերի եկամտաբերությունը կազմել է -7.9%, արդյունքում՝ ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը (ԶԱԱ) ավելացել է ընդամենը 16%-ով (տե՛ս գծապատկեր 3.35): Ֆոնդերի եկամտաբերությունը ստեղծման պահից 76.9% է, որը միջին տա-


րեկան հաշվարկով կազմում է 6.7%: 2022 թ. ընթացքում կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերության անկումը պայմանավորված է կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների գների նվազմամբ, մասնավորապես՝ արտասահմանյան բաժնետոմսերի գների, արտասահմանյան և ՀՀ պարտատոմսերի գների նվազմամբ, ինչպես նաև ՀՀ դրամի արժևորմամբ, որի արդյունքում արտարժույթով կատարված ներդրումների՝ ՀՀ դրամով արտահայտված արժեքը նվազել է: Աշխարհում նման իրողություն է ստեղծվել կորոնավիրուսի համավարակից հետո առաջացած համաշխարհային մատակարարումների շղթաների խաթարումներով, որն ավելի սրվեց ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով և, դրանով պայմանավորված, բարձր գնաճով և տնտեսական զարգացման հեռանկարների անորոշության մեծացմամբ: Բարձր գնաճին երկրների կենտրոնական բանկերն արձագանքեցին վերաֆինանսավորման տոկոսադրույքների բարձրացմամբ:

Թվարկված գործոններից կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերության վրա ամենամեծ նվազողական ազդեցությունն ունեցել է ՀՀ դրամի արժևորումը, ընդ որում, փոխարժեքի ամբողջական հակադարձումը ֆոնդերի եկամտաբերության վրա ունենում է մոտ 7 տոկոսային կետ դրական ազդեցություն (ֆոնդերի եկամտաբերության զգայունության մասին տե՛ս աղյուսակ 2):

Գծապատկեր 3.35.

ՖՈՆԴԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱԱ ԱՃԻ ՏԵՄՊ


III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Գծապատկեր 3.36.

ՖՈՆՂԵՐԻ ԱՎՏԻՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԶԱԱ/ՀՆԱ ԴԻՆԱՄԻԿԱՆ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:




2022 թ. զարգացումներն առանձնահատուկ էին նրանով, որ ֆոնդերի եկամտաբերության վրա ազդող բոլոր հիմնական գործոնները միաժամանակ փոխվել էին անբարենպաստ ուղղությամբ, իհարկե, նման զարգացումը որևէ կերպ չի նվազեցնում ֆոնդերի ներդրումների բազմազանեցման արդյունավետությունը: Հատկանշական է օտարերկրյա ներդրումային ֆոնդերի բաժնետոմսերի ներդրումների բաղադրիչի առկայությունը: Դրանք թեև բնու-

թագրվում են բարձր տատանողականությամբ, այդուհանդերձ համարվում են «գնաճից պաշտպանված» գործիքներ, ինչը հատկապես կարևոր է ներկայում տիրող բարձր գնաճային միջավայրում: Հաշվի առնելով, որ ֆոնդերի բացասական եկամտաբերությունն իրացված վնաս չէ, լիովին իրատեսական է ակնկալել, որ ստեղծված ֆինանսատնտեսական իրավիճակի կարգավորմանը զուգահեռ տեղի կունենա կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերության վե-

Գծապատկեր 3.37.

ՖՈՆՂԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Գծապատկեր 3.38.

ՖՈՆԴԵՐԻ ՏԱՐԱԺՎԱՆՈՒՄԻՆ ԵՎ ԱՐԺՈՒԹՎԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ (ՍԼՐԴ. ՆՆ ԴՐԱՄ)

III Աղբյուրը՝ ՆՆ ԿԲ:



րականվում այնպիսի տեմպերով, ինչը կփոխհատուցի նաև ընթացիկ նվազումը: Անվանական ՆՆԱ առաջանցիկ աճի արդյունքում ԶԱԱ/ՆՆԱ հարաբերակցությունը նվազել է 0.6 տոկոսային կետով և կազմել է 6.6% (տե՛ս գծապատկեր 3.36): Կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների կառուցվածքում օտարերկրյա ներդրումային ֆոնդերի արժեթղթերի կշիռը նվազել է 4 տոկոսային կետով՝ պայմանավորված ֆոնդերի արժեքի վրա չէ դրամի արժևորման նվազողական

ազդեցությամբ: Ներդրումային այլ ուղղություններից առավել մեծ չափով աճել են ներդրումները չէ պետական պարտատոմսերում (տե՛ս գծապատկեր 3.37): Կենսաթոշակային ֆոնդերում արտարժույթային ակտիվների տեսակարար կշիռը տարեվերջին կազմել է 27.9% (2021 թ. վերջին՝ 31.6%): Արտարժույթային ակտիվների գերակշիռ մասը օտարերկրյա ներդրումային ֆոնդեր են (կենսաթոշակային ֆոնդերի արժույթային կառուցվածքը տե՛ս գծապատկեր 3.38-ում):

Աղյուսակ 1. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՍԹՐԵՍ ԹԵՍԵՐ

III Աղբյուրը՝ ՆՆ ԿԲ:

Ֆոնդի տեսակ	Ֆոնդերի ԶԱԱ և կառուցվածք			Եկամտաբերության փոփոխություն սթրեսի արդյունքում			
	Կայուն եկամտ.	Պահպանողական	Հավասարակշռված	Կայուն եկամտ.	Պահպանողական	Հավասարակշռված	
Ֆոնդի ԶԱԱ (մլրդ դրամ)	4.2	538.5	6.2				
Կառուցվածք	ՉՉ պարտատոմսեր	46%	44%	47%	-6.9%	-7.7%	-6.6%
	Ներդրումներ արտերկրում	18%	26%	28%	-17.6%	-19.4%	-19.7%
	Այլ ակտիվներ	36%	29%	25%			
Ընդամենը	100%	100%	100%	-6.4%	-8.6%	-8.7%	

Սցենար	Եկամտաբերության փոփոխություն		
	Կայուն եկամտ.	Պահպանողական	Նավասարակշռված
ՀՀ-ում տոկոսադրույքների աճ 1 տոկոսային կետով	-1.59%	-1.71%	-1.54%
ՀՀ դրամի արժևորում 1%-ով	-0.21%	-0.28%	-0.33%
Արտաքին շուկ (1% քվարտիլ)	-3.24%	-5.14%	-5.58%

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՍԹՐԵՍ ԹԵՍԵՐ

Աղյուսակ 1 և 2-ում ներկայացված սթրես թեստերի նպատակն է գնահատել ենթադրյալ շուկային իրավիճակների ազդեցությունը կենսաթոշակային ֆոնդերի վրա, մասնավորապես՝ սթրես թեստերի օգնությամբ գնահատվել է կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի և եկամտաբերության հնարավոր փոփոխությունը սթրեսային սցենարի տեղի ունենալու դեպքում:

Սթրես թեստի արդյունքում ֆոնդերի ընդհանուր վնասը հաշվարկվել է որպես առանձին ներդրումային ուղղությունների գծով հաշվարկված վնասների հանրագումար, մասնավորապես՝

1. ՀՀ պարտատոմսերի (պետական և կորպորատիվ) գծով սթրեսային վնասը հաշվարկվել է պարտատոմսերի դյուրացիայի հիման վրա՝ կիրառելով վճարունակության մակրո սթրես թեստավորման հաշվարկներում կիրառվող տոկոսադրույքների փոփոխության սցենարը:
2. Օտարերկրյա ներդրումային ֆոնդերի արժեթղթերի գծով ռիսկը գնահատվել է VaR մեթոդով: Որպես սթրեսային վնաս հաշվարկվել է 1% քվարտիլին համապատասխանող առավելագույն 260-օրյա (≈1 օրացուցային տարի) VaR-ը՝ հիմք ընդունելով 2022 թ. վերջի դրությամբ պորտֆելի կառուցվածքը և առանձին արժեթղթերի գների փոփոխությունը 2016-2022 թթ. ժամանակահատվածում:
3. Վճարունակության մակրո սթրես թեստավորման մոդելում որպես ռիսկային զարգացում դիտարկվում է փոխարժեքի արժեզրկման սցենարը, որը կենսաթոշակային ֆոնդերի դեպքում

դրական ազդեցություն է ունենում եկամտաբերության վրա: Փոխարժեքի ազդեցության գործոնը չի դիտարկվել՝ մյուս երկու փոփոխականների ազդեցությունն առավել արտահայտիչ ներկայացնելու նկատառումով: Աղյուսակ 2-ում ներկայացված է կենսաթոշակային ֆոնդերի զգայունությունը փոխարժեքի նկատմամբ:

4. Կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների մյուս խոշոր ուղղության՝ ավանդների գծով սթրեսային վնաս (շուկայական ռիսկ) չի գնահատվել, քանի որ ավանդները մինչև մարում պահվող ներդրումներ են:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարկավորման շուկայում առկա բարձր մրցակցային միջավայրը սահմանափակում է վարկային կազմակերպությունների աճի հնարավորությունները: Մյուս կողմից՝ տոկոսադրույքների մասով միջազգային ու տեղական ֆինանսական շուկաներում զարգացումները լրացուցիչ մարտահրավերներ են ստեղծում վարկային կազմակերպությունների համար: Այս ամենը վկայում է վարկային կազմակերպությունների գործող բիզնես մոդելների որակական վերափոխման անհրաժեշտության մասին:


Նախորդ տարվա համեմատությամբ վարկային կազմակերպությունների ակտիվները նվազել են 3.6%-ով: Առանց «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈԻԿԿ ցուցանիշների՝ վարկային կազմակերպությունների ակտիվների աճը կկազմի 3.5%, որն էլ, սակայն, ամբողջությամբ պայմանավորված է վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների ակտիվների



Գծապատկեր 3.39.

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԿԵՐՈՒՄ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



աճով: Բարձր մրցակցության պայմաններում վարկային կազմակերպությունների մասնաբաժինը ընդհանուր վարկերում շարունակաբար նվազում է (տես **գծապատկեր 3.39**):

2022 թ. վարկային կազմակերպություններն աշխատել են 16.0 մլրդ դրամ զուտ շահույթով: Ֆինանսական արդյունքի վրա դրական է ազդել չաշխատող վարկերի կշռի նվազումը և վարկերի հնարավոր կորուստների պահուստից զուտ վերադարձը (տես **գծապատկեր 3.40**):

ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական ապահովագրական տեսակարար կշիռը փոքր է, համակարգի աճի միտումները շարունակում են մնալ չափավոր:


համակարգում ընկերությունների

Ապահովագրական համակարգի հիմնական ցուցանիշները՝ ապահովագրավճար/ՆՆԱ և մեկ շնչի հաշվով ապահովագրավճարները, 2022 թ.

Գծապատկեր 3.40.

ԴԱՍԱԿԱՐԳՎԱԾ ՎԱՐԿԵՐ ԵՎ ՎԱՐԿԵՐԻՑ ԿՈՐՈՒՍՆԵՐ


III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Գծապատկեր 3.41.

ՀԱՇՎԵԳՐՎԱԾ ԱՊԱՆՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՃԻ ՏԵՄՊԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



ցուցաբերել են աճի միտում և կազմել համապատասխանաբար 0.76% և 20,960 դրամ՝ նախորդ տարվա 0.71% և 16,885 դրամի փոխարեն: Հաշվեգրված ապահովագրավճարներն աճել են 24.6%-ով, նախորդ հինգ տարում միջին տարեկան աճը կազմել է 12%: Ապահովագրավճարների աճը հիմնականում պայմանավորված է եղել առողջության ապահովագրության, ԱՊՊԱ և հրդե-


հի ռիսկից գույքի ապահովագրության դասերով: Ապահովագրական համակարգի խոշոր դասերը շարունակում են մնալ ԱՊՊԱ-ն և առողջության ապահովագրությունը (տե՛ս գծապատկեր 3.41):

Ապահովագրական հատուցումներն աճել են ավելի փոքր չափով՝ 2.5%-ով: Ապահովագրական համակարգի վնասաբերության և ծախսատարության

Գծապատկեր 3.42.

ԱՊԱՆՈՎԱԳՐԱՎԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՆԱՍԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆ ԸՍՏ ԽՈՇՈՐ ԴԱՍԵՐԻ


III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



Գծապատկեր 3.43.

ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՈՉ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿԵԻՈՇ ՀԱՆՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



ցուցանիշները⁰⁵ նվազել են համապատասխանաբար 8 և 2 տոկոսային կետով՝ կազմելով 62.0% և 22.9% (տե՛ս գծապատկեր 3.42):

Նախորդ տարվա հատուցումների համեմատությամբ ավելի փոքր աճի


արդյունքում ապահովագրական գործունեությունից զուտ եկամուտը դրական է: Այնուամենայնիվ, վերջին տարիների հաշվարկով ոչ ապահովագրական գործունեությունից մուտքերը շարունակում են գերակշռող մնալ (տե՛ս գծապատկեր 3.43):

05 Ծախսատարության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ ոչ տոկոսային ծախսեր/(զուտ հաշվեգրած ապահովագրավճարներ - դադարեցված պայմանագրերի գծով հետ վերադարձվող զուտ գումարներ - ՉԱՊ-ի փոփոխություն): Վնասաբերության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ (զուտ հաշվեգրված հատուցումներ + զուտ պահանջների պահուստների փոփոխություն + կարգավորման ծախսեր)/(զուտ հաշվեգրված ապահովագրավճարներ - դադարեցված պայմանագրերի գծով հետ վերադարձվող զուտ գումարներ - ՉԱՊ-ի փոփոխություն):

Գծապատկեր 3.44.

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



Աղյուսակ 3.

ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳԻ ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՆԱՏՄԱՆ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԹԵՍԵՐ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

	Հատուցումների հաճախականության աճ 10%-ով			Ներկայացված չկարգավորված պահանջների պահուստի շոկային աճ 25%-ով		
	31.12.2020	31.12.2021	31.12.2022	31.12.2020	31.12.2021	31.12.2022
Սցենարի արդյունքում հաշվարկված վնաս կամ եկամտի նվազում (մլրդ դրամ)	0,7	0,7	0,8	0,7	0,7	0,9
Վնասը կամ եկամտի նվազումը կապիտալի նկատմամբ (%)	3,1	3,5	3,5	3,2	3,7	3,6
Իրացվելիության մակարդակի փոփոխությունը (տոկոսային կետ)	-	-	-	-51,4	-21,6	-21,2
Ընդհանուր կապիտալի համարժեքության փոփոխությունը (տոկոսային կետ)	-5,6	-4,7	-4,6	-5,8	-4,8	-4,8



2022 թ. միջազգային վարկանիշային ընկերությունների կողմից որոշ ընկերությունների վարկանիշի հետ կանչելու հետևանքով վերաապահովագրության շուրջ 64.4%-ը փոխանցվել է եվրոպական վերաապահովագրական ընկերություններին: Ապահովագրական համակարգի ընդհանուր ակտիվներն աճել են 11,3%-ով՝ կազմելով 74.5 մլրդ դրամ: Ակտիվներում խոշոր տեսակարար կշիռ են կազմում բանկային ավանդները և արժեթղթե-

րը (տե՛ս գծապատկեր 3.44): Համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 14.5%-ով՝ պայմանավորված շահութաբերության աճով և կազմել 23 մլրդ դրամ: Հնարավոր շոկային զարգացումների նկատմամբ ապահովագրական համակարգի զգայունությունը, ընդհանուր առմամբ, չի փոխվել, իսկ ստորև դիտարկված սցենարների արդյունքներով նորմատիվային խախտումներ չեն արձանագրվում (տե՛ս աղյուսակ 3):

ՆԵՐԳԻՐ 1

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ/ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

Շրջակա միջավայրի, սոցիալական և կառավարման⁰¹ հարցերի նկատմամբ հետաքրքրությունը վերջին տարիներին բավական աճել է, և COVID-19 համավարակի բռնկումն էլ ավելի ընդգծեց դրանց կարևորությունը՝ արագացնելով Բնապահպանական սոցիալական կառավարում (ԲՍԿ) նկատառումների ինտեգրումը ֆինանսական հատվածի և կապիտալի շուկաների մասով վերլուծություններին:

Առաջին փուլում կարևոր է ֆինանսական համակարգի վրա կլիմայական ռիսկերի ազդեցության գնահատումը: Կլիմայական ռիսկերը հանդես են գալիս ֆիզիկական և անցումային ռիսկերի տեսքով: Ֆիզիկական ռիսկերն առաջանում են կլիմայափոփոխության ու այլ բնապահպանական խնդիրներին առնչվող ֆիզիկական ազդեցություններից: Անցումային ռիսկը հասարակության համար առաջացող հնարավոր ծախսն է ցածր ածխածնային տնտեսություն անցում կատարելու դեպքում՝ կլիմայի փոփոխությունը մեղմելու համար: Դա ազդում է սոցիալ-տնտեսական զարգացման, տնտեսական գործունեության, ընկերությունների, բնական և ֆիզիկական կապիտալի վրա: Նշված ռիսկերը տնտեսության վրա իրենց ազդեցությունն են ունենում երկու մակարդակով՝ միկրո (ազդեցություն տնտեսավարող սուբյեկտների և տնային տնտեսությունների վրա) և մակրո (ընդհանուր ազդեցություն մակրոտնտեսության վրա):

Ամբողջական տնտեսության վրա ազդեցության տեսանկյունից կլիմայական ռիսկը կարող է հանգեցնել կապիտալի արժեզրկման և լրացուցիչ ներդրումների անհրաժեշտությամբ:

յան, գնագոյացման փոփոխությունների, արտադրողականության անկման, աշխատաշուկայի շեղումների և սոցիալ-տնտեսական խնդիրների, ինչպես նաև միջազգային առևտրի վրա բացասական ազդեցության, ֆիսկալ եկամուտների, տոկոսադրույքների ու փոխարժեքի տատանումների:

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

Կլիմայական փոփոխությունները, ըստ էության, կարող են անդրադառնալ բոլոր ֆինանսական ռիսկերի վրա: Մասնավորապես՝ ձեռնարկությունների և տնային տնտեսությունների սնանկացումը և գրավի արժեզրկումը կարող են հանգեցնել կլիմայական ռիսկից ածանցված վարկային ռիսկի: Կապիտալ գործիքների, ֆիքսված եկամուտ ապահովող գործիքների և ապրանքների վերագնահատումը կարող է հանգեցնել շուկայական ռիսկի աճի: Աճող ապահովագրական հատուցումները ապահովագրական ընկերությունների համար ստեղծում են լրացուցիչ ծախսեր և առաջացնում անդերոայթինգի ռիսկ: Առաջարկի շղթայում խնդիրները և կազմակերպությունների փակվելը, իրենց հերթին, պատճառ են դառնում տարբեր գործառնական ռիսկերի: Կլիմայական փոփոխությունների հետ կապված իրացվելիության ռիսկը ածանցվում է իրացվելիության լրացուցիչ պահանջարկից և վերաֆինանսավորման ռիսկից:


Ֆինանսական համակարգը կարող է էական ազդեցություն ունենալ կլիմայական ռիսկերի նվազեցման վրա՝ դառնալով էկոլոգիապես կայուն տնտեսության փոխակերպման կարևոր օղակ և միջնորդելով այնպիսի ներդրումներ, որոնք կնպաստեն երկարաժամկետով շրջակա միջավայրի պաշտպանությանը:

01 <https://www.greenfinanceplatform.org/themes/environmental-social-and-governance-esg>



Գծապատկեր 3.45.

ՄԻՋԻՆ ԶԵՐՄԱՍԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (ԱՍՏԻՃԱՆ ՑԵԼՍԻՈՒՍ)



ՀՀ-ՈՒՄ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Հայաստանը դեպի ծով ելք չունեցող փոքր երկիր է, իսկ կլիմայական հիմնական ռիսկերն են՝ երաշտ, հողերի զգալի դեգրադացում և անապատացում: Հայաստանը խոցելի է նաև հետևյալ բնական աղետների նկատմամբ՝ սողանքներ, սելավներ, ջրհեղեղներ, երկրաշարժեր և այլն: 1998-2010 թթ. եղանակային երևույթ-

ների վնասները կազմել են 2,8 մլրդ դոլար, տարեկան, միջին հաշվով՝ 450 միլիոն դոլար (USAID, 2017)⁰²:

Գծապատկեր 3.45-ը ներկայացնում է ջերմաստիճանի միջին փոփոխությունը Հայաստանում և աշխարհում 2010-2021 թթ., որը հավաստում է, որ Հայաստանում միջին ջերմաստիճանի աճը հիմնականում գերազանցում է համաշխարհային միջին ջերմաստիճանային աճը:

Կլիմայական ազդեցությունները ՀՀ-ում, ըստ ոլորտների, ներկայացված են գծապատկեր 3.46-ում⁰³:

02 "Climate Risk Profile Armenia" USAID՝ https://www.climatelinks.org/sites/default/files/asset/document/2017_USAID_Climate%20Change%20Risk%20Profile_Armenia.pdf

03 Աղբյուրը՝ USAID, 2017:

Գծապատկեր 3.46.

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<p>Ենթակառուցվածք</p> <p>Ավտոճանապարհների ոչնչացում Մարդկային բնակավայրերին հասցված վնասներ</p>	<p>Գյուղատնտեսություն</p> <p>Հացահատիկի բերքի կրճատում Վնաս բերքին ու անասուններին Հողի էրոզիա</p>
<p>Մարդու առողջություն</p> <p>Զերմային հարվածների աճող դեպքեր Մալարիայի աճող դեպքեր</p>	<p>Էկոհամակարգեր</p> <p>Կենսաբազմազանության կորուստ Անտառի արտադրողականության նվազում</p>
<p>Զրային ռեսուրսներ</p> <p>Կրճատված ջրի մատակարարում Զրի որակի վատացում Նվազեցված ջրային էներգիայի պոտենցիալ</p>	

Հայաստանում կլիմայի փոփոխության կանխատեսումները, ըստ Ասիական զարգացման բանկի (2021 թ.) և USAID (2017 թ.), մինչև 2050 թ. հետևյալն են՝

- Զերմաստիճանի 1.6-2.2 աստիճանի աճ:
- Հունիս-սեպտեմբեր ամիսների միջին ամսական տեղումների հավանական կրճատում 7-10%-ով: Ծայրահեղ տեղումնային օրերի քանակի աճ 22-32 %-ով:
- Իրար հաջորդող չոր օրերի քանակի աճ 7-11%-ով:
- Տաք օրերի և գիշերների քանակի ավելացում, ցուրտ օրերի ու գիշերների քանակի կրճատում:
- Համաշխարհային միջին ջերմաստիճանից ավելի տաքացում Հայաստանում. ըստ RCP8.5 սցենարի՝ պոտենցիալ 4.7 °C աճ մինչև 2090 թ.:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆԱԶ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

ՀՀ կենտրոնական բանկը հանդես է եկել հայտարարությամբ՝ «**ՀՀ կենտրոնական բանկի դերը կայուն ֆինանսավորման խթանման գործում**»⁰⁴, որտեղ ընդգծվել է կլիմայի փոփոխության կարևորությունը և կայուն ֆինանսավորման սկզբունքների ներդրման անհրաժեշտությունը: Մասնավորապես՝ կարևորվում է ֆինանսական համակարգում բնապահպանական, սոցիալական և կառավարման չափանիշների⁰⁵ ներդրմանն ուղղված քայլերի անհրաժեշտությունը: Հաշվի առնելով, որ ֆինանսական կայունության ապահովումը ՀՀ ԿԲ հիմնական նպատակներից մեկն է, վերջինս պարտավորություն է ստանձնել՝ ներդնելու կայուն ֆինանսավորման սկզբունքներ ՀՀ ֆինանսական համակարգում:

Հարկավոր է նաև նշել, որ մասնավոր հատվածը նույնպես քայլեր է ձեռնարկում այս ոլորտի զարգացման նպատակով, մասնավորապես՝ ավելի մեծ քանակով ֆինանսական հաս-

տատություններ են ներգրավվում էներգաարդյունավետ և վերականգնվող էներգիայի ոլորտների ֆինանսավորման գործընթացում:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒՄ ԿԱՆԱԶ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ (NGFS) ՈՒ ԿԱՅՈՒՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (SBFN) ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՀԱՐԹԱԿՆԵՐԻՆ

Ներկայումս ՀՀ կենտրոնական բանկը Կանաչ ֆինանսական համակարգի համագործակցության⁰⁶ ու Կայուն բանկային և ֆինանսական (SBFN)⁰⁷ միջազգային հեղինակավոր հարթակների անդամ է, ինչը ենթադրում է, որ ԿԲ-ն արդեն իսկ որոշակի հանձնառություն է ստանձնել՝ խթանելու ՀՀ-ում կանաչ ֆինանսավորման համակարգի կայացումը:

NGFS-ին ՀՀ կենտրոնական բանկը անդամակցում է 2020 թ. ապրիլի 15-ից և ներգրավված է հարթակի հետևյալ աշխատանքային խմբերում՝ «Վերահսկողություն», «Net Zero կենտրոնական բանկերի համար», «Դրամավարկային քաղաքականություն», «Կարողությունների զարգացում և ուսուցում», ինչպես նաև 2023 թ. ստեղծված «Տվյալներ» ու «Հետազոտություն» խմբերում:

SBFN-ին ՀՀ կենտրոնական բանկը միացել է 2021 թ. նոյեմբերի 24-ին և ներգրավվել է «Կայուն ֆինանսավորման գործիքներ» ու «Տվյալներ և բացահայտում» աշխատանքային խմբերի աշխատանքներում:

Հարկ է նշել նաև, որ Հայաստանում կանաչ տնտեսության ոլորտում մեծ է դերը միջազգային հիմնադրամների և կազմակերպությունների կողմից ֆինանսավորման առումով: Այդպիսիք են՝ Կանաչ կլիմայի հիմնադրամ (GCF), Կանաչ աճի հիմնադրամ (GGF), Գլոբալ բնապահպանական հիմնադրամ (GEF), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD): GCF⁰⁸-ը Հայաստանում

04 https://www.cba.am/AM/pmessagingannouncements/Press%20orelease_28.09.2022.pdf

05 ԲՍԿ չափանիշները ընկերության գործունեության չափորոշիչների շարք են, որոնք սոցիալապես գիտակից ներդրողներն օգտագործում են իրենց հնարավոր ներդրումները գնահատելու, իսկ ընկերությունները՝ իրենց ոչ ֆինանսական ռիսկերը բացահայտելու և կառավարելու նպատակով:

06 <https://www.ngfs.net/en>

07 <https://www.sbfnetwork.org/>

08 <https://www.greenclimate.fund/countries/armenia>



Ֆինանսավորել է 5 նախագիծ՝ մոտ 117,2 մլն ԱՄՆ դոլարի չափով, իսկ GEF⁰⁹-ը հատկացրել է մոտ 43 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսական միջոցներ 16 ծրագրերի շրջանակում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐԿԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Կայուն ֆինանսավորմանն անցման գործընթացում ՀՀ ԿԲ իրականացրած առաջնային քայլը ազգային ճանապարհային քարտեզի մշակումն է, որի աշխատանքները ԿԲ-ն սկսել է 2022 թ.: Ծանապարհային քարտեզը նախատեսում է գործողություններ չորս ուղղությամբ, որոնք են՝

- **Սոփիզացնել ֆինանսավորումը.** ռիսկի վրա հիմնված, շուկայամետ և կայուն ձևով հեշտացնել կապիտալի հոսքը արդյունաբերություն և այլ գործունեություններ, որոնք համահունչ են Հայաստանի ցածր ածխածնային հավակնություններին:
- **Ընդլայնել շուկաները.** աջակցել գիտելիքների փոխանցմանը, նվազեցնել տեղեկատվական անհամաչափությունները, ապահովել շուկայի նկատմամբ վստահությունը և ամրապնդել կայուն ֆինանսավորման համար նպաստավոր միջավայր:
- **Ներդնել կայուն զարգացման սկզբունքները.** ուղղորդել ֆինանսական հատվածի մասնակիցներին իրենց բիզ-

նես որոշումների մեջ ԲՍԿ սկզբունքների ներդրման հարցում:

- **Բարձրացնել իրազեկության մակարդակը.** բարձրացնել կայունության ռիսկերի և հնարավորությունների մասին իրազեկության մակարդակը Հայաստանում, զարգացնել կարողությունները ԿԲ ներսում և ֆինանսական շուկայի մասնակիցների շրջանում:

ՌԻՍԿ ՌԱԴԱՐ (RISK RADAR) ԵՎ ԶԵՐՄԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ (HEATMAP)

Կլիմայի փոփոխությունը, լինելով ողջ աշխարհի հիմնական խնդիրներից մեկը, ազդեցություն ունի ինչպես երկրների տնտեսությունների, այնպես էլ դրանց ֆինանսական համակարգերի վրա: Այդ ազդեցությունը հիմնականում դրսևորվում է կլիմայական ռիսկերի տեսքով: Իր հերթին, գործնականում կլիմայական ռիսկերի ազդեցությունը բանկերի մեծ մասի համար ի հայտ է գալիս վարկային ռիսկի ձևով: Ըստ այդմ՝ կատարվել է փորձ՝ քանակացնելու այդ ազդեցության մեծությունը:

ՀՀ կենտրոնական բանկը 2022 թ. գերմանական Sparkassenstiftung for International Cooperation (DSIK)-ի հետ համատեղ ֆինանսական հատվածի համար մշակել է կլիմայական ռիսկերի գնահատման գործիքներ, ինչպիսիք են Ռիսկ ռադարը և Զերմային քարտեզը:

09 <https://www.thegef.org/projects-operations/country-profiles/armenia>

Գծանկար 1.

ՈԼՈՐՏԻ ՌԻՍԿԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼԵՐ

III



Ռիսկ ռադարը գործիք է, որն օգտագործում է հասանելի տեղեկությունը՝ ոլորտին սպառնացող հնարավոր կլիմայական ռիսկի մեծությունը գնահատելու նպատակով: Տնտեսական գործունեության յուրաքանչյուր առանձին ոլորտի համար գնահատման գործընթացը բաղկացած է հետևյալ քայլերից (տես՝ գծանկար 1):

Ֆիզիկական և անցումային ռիսկերից յուրաքանչյուրը (ներառյալ դրանց առանձին ենթատեսակները) գնահատվում են 5-միավորային սանդղակով (0-ից մինչև 4), որտեղ 0-ն ցածր ռիսկայնության աստիճանն է, իսկ 4-ը՝ բարձր: ԲՄԿ այլ ռիսկերը գնահատվում են այդ/ոչ սկզբունքով, որտեղ յուրաքանչյուր կատեգորիայի համար ավելանում է հավելյալ 0,5 միավոր (առավելագույնը՝ 2 միավոր): Գնահատականները հիմնված են փորձագիտական եզրակացությունների վրա՝ ոլորտային տարբեր հանրային հասանելի աղբյուրներից:

Առավելագույն ընդհանուր ռիսկային միավորը յուրաքանչյուր առանձին տնտեսական ոլորտի համար կազմում է 10 միավոր: Այսպիսով՝ ընդհանուր ռիսկի գնահատման սանդղակը բաժանվում է հետևյալ կատեգորիաների. 0-3՝ անտեսված, 4-5՝ խոցելի, 6-7՝ բարձր, 8-10՝ կրիտիկական ռիսկեր:

ՆՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ռիսկ ռադարը կիրառվել է Հայաստանի տնտեսական հիմնական ոլորտների համար՝

համաձայն NACE-ի դասակարգման: Գյուղատնտեսություն և արդյունաբերություն ոլորտների համար գնահատվել են նաև ենթաճյուղերը: Ըստ վերլուծության արդյունքների՝ Հայաստանի ամենաբարձր և բարձր ռիսկային ոլորտները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Այս պահի դրությամբ ամենաբարձր միավորը 7-ն է, ուստի կրիտիկական ոլորտներ մեր երկրի համար դեռ չկան: Այնուամենայնիվ, աղյուսակում նշված ոլորտները ամենախոցելին են ֆիզիկական և/կամ անցումային կլիմայական ռիսկերի առումով: Մյուս կողմից՝ այդ ոլորտները նույնպես մեծ բացասական ազդեցություն ունեն կլիմայի փոփոխության գործում:

Դրա վկայությունն է այն փաստը, որ նշված ոլորտները հայտնվում են ինչպես կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության գործառնությունների ազգային փաստաթղթերում, այնպես էլ եվրոպական տաքսոնոմիայում, ինչը, իր հերթին, ապացուցում է գործիքի արդյունավետությունը:

ՌԻՍԿ ՌԱԴԱՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳԻ ՆԱՄԱՐ

Ջերմային քարտեզն այն գործիքն է, որը հնարավորություն է տալիս կիրառելու Ռիսկ ռադարի արդյունքները (հայտնաբերված ոլորտային ռիսկերը) ֆինանսական համակարգին սպառնացող ռիսկերի գնահատման համար, մասնավորապես՝ վարկային ռիսկի մակարդակով: Ջերմային քարտեզը մշակվել է Հայաստանում ռեզիդենտներին տրված վարկե-


Աղյուսակ 4.

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ԵՎ ԲԱՐՁՐ ՌԻՍԿԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ ՆՆ-ՈՒՄ

III Աղբյուր՝ ՆՆ ԿԲ:

Ամենաբարձր ռիսկայնություն (7 միավոր)	Բարձր ռիսկայնություն (6 միավոր)
A. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	A 1.2. Բազմամյա մշակաբույսերի աճեցում
A 1.1. Ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցում	A 3. Ձկնորսություն և ձկնաբուծություն
A 2. Անտառային տնտեսություն և փայտամթերում	C 10. Սննդի արդյունաբերություն
D. Էլեկտրականություն, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	C 12. Ծխախոտի արդյունաբերություն
E. Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	C 19. Կոքսի և թորած նավթամթերքի արտադրություն
H. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	C 20. Քիմիական նյութերի արտադրություն
	F. Շինարարություն





րի ծավալների հիման վրա՝ 2022 թ. հունիսի տվյալներով:

Արդյունքները ցույց են տալիս, որ բանկային համակարգի վարկերի մոտ 14,97%-ը բարձր ռիսկային են (տես գծանկար 2). (Ֆինանսավորվել են 6 և 7 բարձր ռիսկային միավորներ ունեցող տնտեսական ոլորտները): Վարկերի 30,21%-ը բաժին է ընկնում այն ոլորտներին, որոնք ներառում են ոչ միայն բարձր ռիսկայնությամբ ոլորտները (6 և 7 միավորներ), այլ նաև խոցելի ոլորտները (5 և 4 միավորներ):

Զերմային քարտեզները կարող են կիրառել ինչպես փոքր, այնպես էլ մեծ պորտֆել ունեցող ֆինանսական կազմակերպությունները: Այս գործիքը տալիս է նախնական պատկեր այն մասին, թե որքանով են ֆինանսական


կազմակերպությունները ենթարկվում կլիմայական ռիսկերի ազդեցությանը:

Հաճախորդների մակարդակով ռիսկերի ավելի մանրամասն գնահատման համար կարող են յուրաքանչյուր ոլորտի համար սահմանվել գնահատման անհատական փոփոխիչներ (modifier), որտեղ կօգտագործվի կարճ հարցաթերթ: Վերջինս հնարավորություն կտա վերլուծելու, թե տվյալ ընկերությունը որքանով է ենթակա նույն ռիսկի, ինչ՝ իր գործունեության ոլորտը, և արդյոք այս ռիսկի միավորի մեղմացումը համարժեք է: Հետևաբար՝ վարկառուների համար կարող են ձևակերպվել ինչպես սահմանափակումները, այնպես էլ գնային հետևանքները և գրավի պահանջները՝ հետագայում ապահովելով ԲՍԿ ռիսկերի կառավարման գործընթացի համապարփակությունը:



4

ԲԱՆԿԵՐԻ ՍԹՐԵՍ ԹԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



4.1.

ԲԱՆԿԱՅԻՆ ՆԱՄԱԿԱՐԳԻ ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԹՐԵՍ ԹԵՍՏԵՐ



Սույն բաժնում ներկայացված են ՀՀ բանկային համակարգի կայունության գնահատման մակրո սթրես թեստավորման արդյունքները: Բանկային համակարգի սթրես թեստավորումը ֆինանսական կայունության կարևորագույն բաղադրիչներից է, որը նպատակաուղղված է տարբեր ենթադրական շոկային իրավիճակներին (սցենարներին) բանկային համակարգի դիմակայելու ունակության գնահատմանը: Սթրես թեստավորումը հնարավորություն է տալիս առավել խորությամբ հասկանալու և վերլուծելու բանկային համակարգի հնարավոր խոցելիությունները և հասցեական քայլեր ձեռնարկելու այդ ուղղությամբ:

Բանկային համակարգի համար իրականացված սթրես թեստերի արդյունքները վկայում են, որ ենթադրվող սթրեսային հորիզոնի վերջի դրությամբ բանկային համակարգն ունի բավարար կապիտալի և իրացվելիության պաշարներ՝ դիմակայելու սցենարներով ենթադրվող սթրեսային իրադարձություններին և ապահովելու հետագա բնականոն գործունեությունը:

ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈ ՍԹՐԵՍ ԹԵՍՏԵՐ

Վճարունակության սթրես թեստերի միջոցով գնահատվում է տարբեր շոկային իրավիճակներում ֆինանսական համակարգի կայունությանը սպառնացող ռիսկերը կլանելու բանկային համակարգի ունակությունը: Այստեղ մեծ դեր է հատկացվել վարկային ռիսկին, քանի որ վերջինս բանկերի գործունեությանը բնորոշ կարևորագույն ռիսկերից մեկն է: Վճարունակության սթրես թեստերն իրականացվել են երեք տարվա հորիզոնի համար և ենթադրում են երկու սցենար՝ դրամավարկային քաղաքականության և սթրեսային:

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՑԵՆԱՐ

Դրամավարկային քաղաքականության սցենարում դիտարկվել են ՀՀ ԿԲ 2022 թ. 4-րդ եռամսյակի գնաճի հաշվետվությամբ նկարագրված հիմնական զարգացումները⁰¹: Այդ զարգացումների համաձայն՝ 2022 թ. արձանագրված համեմատաբար բարձր տնտեսական աճը կճշգրտվի և 2023-2025 թթ. ժամանակահատվածում կմոտենա իր երկարաժամկետ կայուն մակարդակին՝ մոտ 4.2%:

Դրամավարկային քաղաքականության սցենարի դեպքում համակարգի բարձր կապիտալացվածության մակարդակը պահպանվում է:

ՍԹՐԵՍԱՅԻՆ ՍՑԵՆԱՐ

Ստորև ներկայացված սթրեսային սցենարը դեպքերի հիպոթետիկ զարգացման ընդամենը ենթադրյալ խիստ վատատեսական տարբերակ է և չպետք է մեկնաբանվի որպես Կենտրոնական բանկի կանխատեսում:

Սթրեսային սցենարը ենթադրում է արտաքին և ներքին ոչ բարենպաստ իրադարձությունների զարգացման հետևանքով ՀՀ տնտեսությունում և ֆինանսական համակարգում շոկային իրավիճակի զարգացում:

Մասնավորապես՝ 2023-2024 թթ. ընթացքում ենթադրվել է աշխարհաքաղաքական անորոշությունների խորացում, ինչը կընդլայնի ՀՀ առանցքային առևտրային գործընկեր երկրներում տնտեսական ակտիվության հեռանկարի մասով անորոշությունները՝ վտանգելով տնտեսությունների վերականգնման գործընթացները: Դա մի կողմից՝ կհանգեցնի համաշխարհային տնտեսությունում և արժույթային, ֆինանսական շուկաներում անբարենպաստ մի-

01 Առավել մանրամասն տե՛ս Գնաճի հաշվետվությունը. https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/Monetary%20overview_IV_2022.pdf



ջավայրի ձևավորմանը, մյուս կողմից՝ համաշխարհային շուկայում, հիմնականում առաջարկի գործոններով պայմանավորված, կարտացույցի էներգակիրների միջազգային գների կտրուկ աճով: Արդյունքում՝ հիմնական գործընկերները, տնտեսական ակտիվության կտրուկ դանդաղմամբ պայմանավորված, կարճաժամկետային նաև ՀՀ արտահանման ծավալների նվազում, ինչպես նաև ՀՀ ռիսկի հավելավճարի որոշակի աճ: Համաշխարհային և ներքին բարձր գնաճային միջավայրի պահպանման ու հնարավոր ընդլայնման պարագայում ինչպես արտաքին, այնպես էլ ՀՀ դրամավարկային մարմինները կշարունակեն բարձրացնել տոկոսադրույքները: Այս պայմաններում ֆինանսական շուկաներում կարող է դիտվել ակտիվների գների շարունակական նվազում և տնտեսության վարկավորման տեմպերի հնարավոր կրճատում:

Վերոնշյալ զարգացումներին զուգահեռ, ենթադրվել է, որ 2023 թ., տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների հետ կապված հնարավոր անորոշությունների համատեքստում, ՀՀ-ում բնակչություն հաստատած օտարերկրյա քաղաքացիների մի զգալի հատված կհեռանա ՀՀ-ից, ինչը կարող է ուղեկցվել նաև կապիտալի որոշակի արտահոսքով, ինչպես նաև ՀՀ անշարժ գույքի շուկայում գների որոշակի նվազմամբ և շինարարության ու հիպոտեկային վարկերի ծավալների կրճատմամբ:

Ենթադրվել է, որ շուկերն իրենց հիմնական ազդեցությունը կունենան 2023-2024 թթ., այնուհետև դրանց ազդեցությունը աստիճանաբար կմեղմվի, և կսկսվի տնտեսական ակտիվության տեմպերի աստիճանական վերականգնում:

Վերը նկարագրված իրադարձությունները կհանգեցնեն դիտարկվող հորիզոնի առաջին տարում տնտեսական աճի նվազման մինչև մոտ -9%, որը հետագա տարիների ընթացքում աստիճանաբար կբարելավվի՝ սթրեսային սցենարի վերջում հասնելով 4.2%-ի: Սցենարի առավել մանրամասն նկարագրությունը տրված է աղյուսակ 5-ում:

ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒՅՑԱՆ ՍԹՐԵՍ ԹԵՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դրամավարկային քաղաքականության սցենարի դեպքում համակարգի բարձր կապիտալացվածության մակարդակը պահպանվում է: Համաձայն դրամավարկային քաղաքականության սցենարի՝ դիտարկվող հորիզոնի ամբողջ ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կորուստները կնվազեն, ինչը պայմանավորված է տրված մակրոտնտեսական զարգացումների պայմաններում դեֆոլտի հավանականությունների և դեֆոլտի դեպքում կորստի հավանականությունների համեմատաբար բարենպաստ զարգացումներով: Կորուստների նվազմանը զուգահեռ, որոշակի աճ կարճաժամկետային նաև բանկային հա-

Աղյուսակ 5.

ՀԻՆԱԿԱՆ ՓՈՓՈՒՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ՍՅԵՆԱՐՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

	Փաստացի	Դրամավարկային քաղաքականության սցենար			Սթրեսային սցենար		
	2022	2023	2024	2025	2023	2024	2025
	տ/տ						
ՆԱԱ	12.6%	4.60%	4.40%	4.20%	-8.91%	0.73%	4.23%
Գնաճ	8.3%	3.90%	4.00%	4.00%	5.53%	3.40%	3.08%
Վարկերի աճ	5.5%	10.00%	10.00%	10.00%	4.00%	6.00%	7.50%
	Դեֆոլտի հավանականություններ (PD)						
Սպառողական վարկերի	6.3%	4.2%	5.9%	6.5%	5.5%	9.3%	7.5%
Հիպոտեկային վարկերի	1.8%	1.4%	2.2%	2.6%	1.9%	3.5%	3.0%
Բիզնես վարկերի	4.0%	2.9%	4.3%	4.8%	3.7%	6.7%	5.6%
Կորուստ դեֆոլտի դեպքում (LGD)							



Աղյուսակ 6.

ՍՅՐԵՍ ԹԵՍԱՎՈՐՄԱՆ ՆԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

	Փաստացի	Դրամավարկային քաղաքականության սցենար			Սթրեսային սցենար		
	2022	2023	2024	2025	2023	2024	2025
Վարկային պորտֆելից մասհանումներ (մլրդ դրամ)	-140.8	-70.1	-107.7	-120.1	-117.4	-174.4	-134.5
կշիռը ակտիվներում (%)	1.69	0.77	1.10	1.13	1.39	2.03	1.49
Շուկայական ռիսկ** (մլրդ դրամ)		-49.9	8.4	19.8	-102.1	36.6	19.8
Ընդհանուր կորուստներ (մլրդ դրամ)	140.8	120.0	99.3	100.3	219.4	137.8	114.7
կշիռը ակտիվներում (%)		1.32	1.01	0.94	2.60	1.61	1.27
Զուտ գործառնական եկամուտ (մլրդ դրամ)	256.0	258.3	273.1	288.4	193.3	196.6	206.1
Զուտ շահույթ (մլրդ դրամ)	239.3	110.7	139.0	150.5	-26.1	47.1	73.1
կշիռը ակտիվներում (%)		1.22	1.42	1.42	-0.31	0.55	0.81
Կապիտալի համարժեքություն (% ժամանակահատվածի վերջի դրությամբ)	20.28	19.48	19.40	19.72	17.97	18.06	18.12
Կապիտալի անհրաժեշտ ներարկում (մլրդ դրամ)			0			0	
կշիռը ՆՆԱ-ում (%)			0			0	
Կապիտալի համարժեքության 11%-ից ցածր ցուցանիշ ունեցող բանկերի քանակ			0			0	

* Կորուստները տրված են (-) նշանով
 ** Շուկայական ռիսկից կորուստները ներառում են տոկոսադրույքի փոփոխությամբ և փոխարժեքի ուղղակի ազդեցությամբ պայմանավորված կորուստները: Մասնավորապես, բազային սցենարի համար ենթադրություն է արվել, որ շուկայական տոկոսադրույքը դիտարկվող հորիզոնի ընթացքում աճում է 1 տոկոսային կետով, իսկ հետագա յուրաքանչյուր տարում նվազում 0.5 -ական տոկոսային կետով: Սթրեսային սցենարի դեպքում ենթադրվել է շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետ աճ առաջին տարում, որը հետագա տարիներին նվազում է համապատասխանաբար 1 և 0.5 տոկոսային կետերով:

մակարդի շահույթի մասով, ինչի արդյունքում դիտարկվող ժամանակահատվածի ամբողջ ընթացքում թե՛ բանկային համակարգի, թե՛ առանձին բանկերի կապիտալի համարժեքության ցուցանիշը կշարունակի բարձր մնալ պահանջվող նվազագույն սահմանաչափից:

Սթրեսային սցենարի ենթադրությունների պարագայում բանկային համակարգում վարկային կորուստներն աճում են: Մասնավորապես՝ տնտեսությունում եկամուտների կրճատման, բարձր գնաճային միջավայրի և փոխարժեքային շուկի պայմաններում չէ ֆինանսական համակարգում կգրանցվի վարկային ռիսկի բաղադրիչների աճ (դեֆոլտի հավանականություններ՝ PD, դեֆոլտի դեպքում կորստի չափ՝ LGD), որի հետևանքով կաճեն վարկային կորուստները: Ի լրումն վարկային ռիսկի՝ տոկոսադրույքների ենթադրվող աճի պարագայում, պորտֆելների վերագնահատմամբ պայմա-


նավորված, կգրանցվեն հավելյալ կորուստներ: Արդյունքում՝ դիտարկվող ժամանակահատվածի առաջին տարում բանկային համակարգի շահութաբերությունը կտրուկ կնվազի, և կարճաժամկետային զուտ վնաս: Ընդ որում, հարկ է նշել, որ համաձայն սթրես թեստավորման արդյունքների, վարկային կորստի նյութականացման գործընթացը կշարունակվի և իր առավելագույն կետին կհասնի սթրեսային հորիզոնի երկրորդ տարում:

Ստեղծված իրավիճակում բանկերը կդրսևորեն համեմատաբար պահպանողական և ռիսկերին չհակված վարքագիծ (risk averse), որի արդյունքում դիտարկվող ժամանակահատվածի առաջին տարում կգրանցվի վարկային պորտֆելի հարաբերականորեն փոքր աճ: Դա կհանգեցնի բանկերի զուտ գործառնական եկամտի կրճատման, ինչի հետևանքով վերջինս բավարար չի լինի՝ ծածկելու վարկային և շուկայական կորուստները: Երկրորդ

Գծապատկեր 4.1.

ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐԺԵՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԲԵՐԻ ՆՊԱՏՈՒՄՆԵՐԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



տարում, չնայած վարկային ռիսկից կորուստների բարձր մակարդակի պահպանմանը, կարճաժամկետի դրական շահութաբերություն: Սթրեսային հորիզոնի վերջին տարում, վարկային ռիսկից կորուստների նվազման արդյունքում, համակարգի շահութաբերությունը սկսում է վերականգնվել (տե՛ս աղյուսակ 6):


Սթրեսային սցենարի դեպքում բանկային համակարգի կապիտա-

լի համարժեքությունը նվազում է, սակայն չի հատում 10% պահանջվող նվազագույն մակարդակը: Մասնավորապես՝ բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը շարունակում է պահպանվել բարձր մակարդակում՝ դիտարկվող սթրեսային ժամանակահատվածում նվազելով առավելագույնը մինչև 17.9% (տե՛ս գծապատկեր 4.2):

Գծապատկեր 4.2.

ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐԺԵՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՏԱՐԲԵՐ ՍՑԵՆԱՐՆԵՐԻ ԴԵՊՐՈՒՄ (ՀԱՏ ՄԻՋՔՎԱՐՏԻԼԱՅԻՆ ՄԻՋԱԿԱՅՔԵՐԻ)

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:





Նախասթրեսային բարձր կապիտալի համարժեքության ցուցանիշներով պայմանավորված՝ որևէ բանկում չի արձանագրվում կապիտալի համարժեքության նվազագույն պահանջի խախտման դեպք: Հետագա տարիներին, իրավիճակի աստիճանական բարելավմանը և բանկային համակարգի շահութաբերության վերականգմանը զուգընթաց, կապիտալի համարժեքության ցուցանիշներն աճում են:

Ընդհանուր առմամբ, սթրես թեստավորումը ցույց է տալիս, որ ՀՀ բանկային համակարգը մնում է բավականաչափ կապիտալացված՝ դիմակայելու խիստ սցենարով ենթադրվող իրավիճակին: Ավելին, բանկերի մեծ մասում նույնիսկ այդ սցենարի ենթադրական նյութականացումից հետո դեռ առկա է կապիտալի բավականաչափ մեծ բուֆեր՝ հետագա հնարավոր կորուստների կլանման համար:



4.2.

ԲԱՆԿԱՅԻՆ ՆԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԹՐԵՍ ԹԵՍՏԵՐ



Առևտրային բանկերի՝ իրացվելիության հնարավոր ռիսկին դիմակայելու կարողությունը գնահատվում է ենթադրյալ սթրեսային սցենարի պայմաններում բանկային համակարգի առկա իրացվելիության պաշարի բավարարությամբ: Ստորև նկարագրված են իրացվելիության սթրես թեստի հիմնական պարամետրերը և արդյունքը 2022 թ. դեկտեմբերի 31-ի փաստացի ցուցանիշների հիման վրա:

ՍԹՐԵՍ ԹԵՍՏԻ ՍՑԵՆԱՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իրացվելիության սթրես թեստի կառուցման հիմքում հետևյալ հիմնական ենթադրություններն են՝

- դիտարկվել է իրացվելիության համակարգային ռիսկ (ավանդների արտահոսք միաժամանակ բոլոր բանկերից) և 6 ամիս տևողությամբ սթրեսային ժամանակահատված, ընդ որում, առաջին 2 ամիսներին ենթադրվող շոկն առավել ուժգին է, իսկ հետագա ամիսներին՝ համեմատաբար մեղմ,
- բանկերի կողմից նոր միջոցներ ներգրավելու, ինչպես նաև դրամից արտարժույթ կամ հակառակը փոխարկելու հնարավորությունն անտեսվել է (ստատիկ հաշվեկշռի ենթադրություն),
- վարկերից սպասվող ներհոսքը ներառվել է 50%-ով (համապատասխանում է իրացվելիության ծածկույթի գործակցի (LCR) պահանջով նախատեսված ենթադրությանը), դասակարգված վարկերի գծով հնարավոր ներհոսքն անտեսվել է, իսկ բարձր իրացվելի արժեթղթերի համար կիրառվել են արժեքի ճշգրտման գործակիցներ (haircuts)⁰¹,
- ֆինանսական կազմակերպությունների գծով և պահանջների, և պարտա-

վորությունների մասով ենթադրվել է պայմանագրերի վերակնքում,

- այլ հոդվածների գծով (օրինակ՝ վարկային քարտերի չօգտագործված մնացորդ) միջոցների հնարավոր արտահոսքն անտեսվել է՝ հաշվի առնելով դրանց ոչ նշանակալի մնացորդը և շոկի ընթացքում դրսևորած փաստացի վարքագիծը:

Ավանդների արտահոսքի ենթադրական սցենարը մշակվել է 2020 թ. դիտարկված զարգացումների⁰² հիման վրա՝ առավել պահպանողական սկզբունքներով: Սթրես սցենարով ավանդների արտահոսքի մեծությունները տարբեր են ըստ բանկերի և հաշվի են առնում շոկերի նկատմամբ տվյալ բանկի հաճախորդների զգայունության տարբերությունները, ինչպես նաև կենտրոնացումների ազդեցությունը:

Արտահոսքի կշիռները տարբերակվել են ըստ ավանդների հետևյալ խմբերի՝

- ռեզիդենտ իրավաբանական անձանց միջոցներ,
- ռեզիդենտ ֆիզիկական անձանց ցպահանջ միջոցներ,
- ռեզիդենտ ֆիզիկական անձանց դրամային ժամկետային ավանդներ,
- ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժույթային ժամկետային ավանդներ,
- ոչ ռեզիդենտների միջոցներ:

Գծապատկեր 4.4-ում ներկայացված են ավանդների նշված խմբերի համար ըստ բանկերի կիրառված արտահոսքի նվազագույն, առավելագույն և միջին (բանկային համակարգ) ցուցանիշները՝ դիտարկված սթրեսային ժամանակահատվածի առաջին 2 ամսվա պարազայում⁰³:

01 Դրամային պարտատոմսերի դեպքում կիրառվել է 10%, իսկ արտարժույթային պարտատոմսերի դեպքում՝ 5% արժեքի ճշգրտման գործակից:

02 Որպես պատմական խիստ սցենար ընտրվել է 2020 թ.՝ հաշվի առնելով փաստացի շոկի ուժգնության աստիճանը:


03 Նաչորդ 4 ամսվա կուտակային արտահոսքի սցենարը ընդհանուր ավանդների համար կազմում է միջինը՝ 5.0%, առավելագույնը՝ 7.3%, նվազագույնը՝ 4.1%:



Գծապատկեր 4.3.

ԱՎԱՆԴՆԵՐԻ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԱՐՏԱՆՈՍՔՆ ԱՌԱՋԻՆ 2 ԱՄՍՈՒՄ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԹՐԵՍ ԹԵՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սթրես թեստի արդյունքում հաշվարկվել է բանկի իրացվելիության դիրքի փոփոխությունը սթրեսային ժամանակահատվածի ընթացքում, այն է՝ յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ սթրեսից հետո առկա իրացվելիության պաշարի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին (տե՛ս գծապատկեր 4.3): Սթրես թեստի արդյունք-


ներով բանկային համակարգի, ինչպես նաև առանձին բանկերի առկա իրացվելիության ներուժը բավարարում է ներգրավված միջոցների սթրեսային արտահոսքը ծածկելուն:

Բանկերի արտարժույթային իրացվելիության կտրուկ աճի արդյունքում նույնիսկ սթրեսային սցենարից հետո իրացվելիությունը մնում է շատ բարձր մակարդակում: Կիրառված սթրես սցենարում ոչ ռեզիդենտ նոր հաճախորդների գծով միջոցների արտահոսքի ռիս-

Գծապատկեր 4.4.

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:






կը (զգայունությունը) դիտարկվել է նույն չափով, ինչ չափով դրսևորվել էր 2020 թ., այնուամենայնիվ, ոչ ռեզիդենտների ավանդների 2022 թ. աճն ամբողջությամբ մարելու դեպքում անգամ համակարգի արտարժույթային իրացվելիությունը կմնա 2021 թ. վերջի ցուցանիշից ավելի բարձր մակարդակում:

Ինչպես և նախորդ տարիներին, սթրես թեստով դրամային իրացվելիության մակարդակի էական անկում չի արձանագրվում, այսինքն՝ ողջ համակարգի հաշվարկով վարկերից սպասվող ներհոսքի նույնիսկ 50%-ը բավարարում է ներգրավված միջոցների սթրեսային արտահոսքը սպասարկելուն:

5

ՄԱԿՐՈՊՐՈՒԴԵՆՑԻԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ





2022 թ. ընթացքում ՀՀ ԿԲ մակրոպրո- դեցնցիալ քաղաքականությունը միտված է եղել վարկավորման շուկայի աշխուժացման և տնտեսության բնականոն վարկավորման դեռ 2021 թ. սկսված միտումների պահպանմանը՝ միաժամանակ կապիտալի բուֆերների կուտակման միջոցով բարձրացնելով բանկային համակարգի կողմից ապագա հնարավոր շուկերին դիմակայելու ունակությունը: Տարվա ընթացքում ՀՀ ԿԲ մակրոպրոդեցնցիալ քաղաքականության առաջնահերթություն է համարվել բանկային համակարգի կորուստների կլանման ունակության ամրապնդումը՝ ցիկլային համակարգային ռիսկերի նյութականացման պարագայում տնտեսության անխափան վարկավորման հնարավորություններն ընդլայնելու նպատակով:

Վարկային շուկայի միտումները ներկայացնող վաղ ահագանգման ցուցանիշների համապարփակ վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ վարկային շուկան գտնվում է չափավոր աճի փուլում, իսկ ցիկլային համակարգային ռիսկերը, ընդհանուր առմամբ, հավասարակշռված են, բացառությամբ հիպոտեկային վարկավորման, որտեղ առկա են գերտաքացման ռիսկեր: Վարկային շուկայի միտումները ներկայացնող ֆինանսական ցիկլի ինդեքսը ցույց է տալիս, որ ՀՀ տնտեսությունը գտնվում է վարկա-

յին ցիկլի վերելքի փուլում (*տես գծապատկերներ 5.1, 5.2*): Զարգացումների հետագա ընթացքը, այդ թվում՝ Կենտրոնական բանկի արձագանքը՝ մակրոպրոդեցնցիալ քաղաքականության համատեքստում, էապես կախված են մակրոֆինանսական պայմանների միտումներից, աշխարհաքաղաքական անորոշությունների ապագա դրսևորումներից, ինչպես նաև համակարգային ռիսկերի կուտակման և/կամ նյութականացման տեմպերից:


2022 թվականի ընթացքում Կենտրոնական բանկը կապիտալի հակացիկլիկ բուֆերը (ԿՀԲ) բարձրացրել է երկու անգամ՝ սահմանելով 1% 2022 թ. երրորդ եռամսյակում (ուժի մեջ է 2023 թ. մայիսից) և 1.5% 2022 թ. չորրորդ եռամսյակում (ուժի մեջ է 2023 թ. օգոստոսից):

ԿՀԲ-ն ժամանակի մեջ փոփոխվող մակրոպրոդեցնցիալ գործիք է (կարող է բարձրացվել կամ իջեցվել), որը կարգավորող մարմինների կողմից կիրառվում է ֆինանսական կամ վարկային ցիկլերի ռիսկային զարգացումները հասցեագրելու նպատակով: ՀՀ կենտրոնական բանկը ԿՀԲ դրույքաչափի հնարավոր փոփոխությունների նպատակահարմարությանն անդրադառնում է եռամսյակային պարբերականությամբ, իսկ դրանց հիմնավորման դրույթները հրապարակում է ԿԲ կայքում⁰¹:

01 ԿՀԲ որոշումները և դրանց հիմքում առկա հիմնավորումները հասանելի են հետևյալ հասցեով՝ https://www.cba.am/am/SitePages/fsmacropolicy_int_report_2021.aspx

Գծապատկեր 5.1. ՖՑԻ-Ն ՆՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱՄԱՐ


III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Գծապատկեր 5.2.

ՎԱՐԿԵՐ/ՀԱՐԹԵՑՎԱԾ ՆԱ ՑՈՒՑԱՆԻՇԸ ԵՎ ԴՐԱ ԵՐԿԱՐԱԺԱՍԿԵՏ ՏՐԵՆԴ

||| Ցուցանիշը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով ՀՆԱ հարթեցված շարքը ||| Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:




Բարենպաստ տնտեսական զարգացումների պայմաններում 2022 թ. վարկային շուկայում արձանագրվել է ակտիվության աճ, որը նկատելի է եղել վարկավորման բոլոր ուղղություններով: Միաժամանակ, ֆինանսական համակարգում ցիկլային համակարգային ռիսկերը, ընդհանուր առմամբ, եղել են հավասարակշռված (ոչ թերազնահատված և ոչ էլ գերազնահատված), իսկ բանկային համակարգը բնութագրվել է շահութաբերության և կապիտալի համարժեքության

բարձր մակարդակով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս պայմաններում կապիտալի կուտակման ծախքերը ցածր են, և բանկերի կապիտալացման մակարդակը բավարար է տնտեսության վարկավորման բնականոն տեմպերի պահպանման համար՝ Կենտրոնական բանկը նպատակային է համարել բարձրացնել ԿՀԲ դրույքաչափը՝ նախ սահմանելով 1% (2022 թ. երրորդ եռամսյակ), այնուհետև՝ 1.5% (2022 թ. չորրորդ եռամսյակ) (տես գծապատկեր 5.3):

Գծապատկեր 5.3.

ԿՀԲ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ


||| Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Գծապատկեր 5.4.

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏԵՐԻ ՊԱՇԱՐԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ S/S ԱՃԻ ՏԵՄՊԵՐ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



2022 թ. ընթացքում ՀՀ ԿԲ-ի կողմից վերանայվել են ԿՀԲ կիրառման մոտեցումները՝ նպատակ ունենալով այս գործիքի կիրառումը դարձնել առավել արդյունավետ և ճկուն՝ ի պատասխան վարկային շուկայում և բանկային համակարգում դիտվող զարգացումներին:

Նոր մեթոդաբանության առանցքային փոփոխություններից է ՀՀ ԿԲ-ի կողմից ԿՀԲ Նորմալ կամ չեզոք դրույքաչափի⁰² կիրառումը, որն ուղղված է ԿԲ-ի կողմից վարվող մակրոպրոդեկցիալ քաղաքականությունն առավել ապագային միտված (forward looking) դարձնելուն: Համաձայն այս մոտեցման՝ նախքան ֆինանսական ցիկլի գերտաքացման փուլի սկիզբը, նպատակահարմար է, որ բանկային համակարգն արդեն իսկ ապահովված/զինված լինի կապիտալի նվազագույն բավարար պաշարով՝ ապագա անկանխատեսելի շուկերին արդյունավետ դիմակայելու համար: Չեզոք կամ Նորմալ դրույքաչափի կիրառման հիմքում ընկած են այն նկատառումները, որ համակարգային ցիկլային ռիսկերի չափումը հատկապես ֆինանսական ցիկլի վաղ վերականգնման փուլում բավականաչափ բարձր գործընթաց է, և գոյություն ունի ռիսկ, որ ԿՀԲ բարձրացման որոշումները կարող

են արդեն ուշացած և անարդյունավետ լինել, երբ դրանք բացառապես կայացվում են վարկային ռիսկի կուտակման ակնհայտ ազդակների ի հայտ գալու պարագայում միայն: Բացի այդ, արդեն իսկ «նորմալ» ռիսկային միջավայրում նախաձեռնելով ԿՀԲ հնարավոր կուտակման գործընթացը, ԿԲ-ն ձգտում է նվազեցնել ԿՀԲ կիրառման ծախսատարությունը՝ ապագայում ստեղծվելիք բուֆերների կուտակումը բաշխելով ավելի երկար ժամանակահատվածում, դրանով իսկ հնարավորինս հարթելով/նվազեցնելով հավելյալ կապիտալի ներգրավման ծախսատարության աճի և բանկերի կողմից անցանկալի հակազդեցության (օր.՝ վարկերի առաջարկի կրճատման և այլն) ռիսկերը: Ֆինանսական ցիկլի «նորմալ» փուլում ԿԲ-ն հակված է/ձգտում է կուտակել մինչև 1.5% ԿՀԲ (առավել մանրամասն տես ներգիր 2):


2022 թ. վարկային շուկայում արձանագրվել է ակտիվության աճ, որը նկատելի է եղել վարկավորման բոլոր ուղղություններով: Տարվա ընթացքում դիտարկվել են վարկերի թե պաշարային, թե հոսքային ցուցանիշների աճի միտումներ (տես գծապատկերներ 5.4 և 5.5):

02 ԿՀԲ դրույքաչափ/պաշար, որի կուտակումը կարգավորող մարմինը ձգտում է ապահովել «նորմալ» ռիսկային միջավայրի ժամանակահատվածում: «Նորմալ» ռիսկային միջավայրը կամ ֆինանսական ցիկլի «նորմալ» փուլը բնորոշվում է որպես իրավիճակ, երբ վարկային շուկայում ռիսկերը ոչ գերազանահատված են, ոչ էլ թերազանահատված:

Գծապատկեր 5.5.

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՆՈՍՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՃԻ ՏԵՄՊԵՐ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Տարվա ընթացքում գրանցված բարձր տնտեսական աճը, ինչպես նաև գնաճային միջավայրը նպաստել են փոխառու ֆինանսական միջոցների նկատմամբ հավելյալ պահանջարկի ստեղծմանը, որի պարագայում վարկավորման շուկայում դիտարկվել է ակտիվության չափավոր աճ: Մինևոյն ժամանակ, բանկային համակարգի իրացվելիության և կապիտալի պաշարներն ավելի

քան բավարար են եղել տնտեսության վարկավորման բնականոն ընթացքն ապահովելու համար:


Հիպոտեկային վարկավորման բարձր աճի տեմպերը շարունակել են պահպանվել: Համաձայն ՀՀ ԿԲ գնահատականների՝ անշարժ գույքի գների գերազնահատման չափը կազմում է 16-22%⁰³: Տարվա վերջի դրությամբ հի-

03 Տե՛ս «Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2021», էջ 48, ներգիր 3. Անշարժ գույքի ֆունդամենտալ գների գնահատումը ՀՀ-ում. https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability%20report_2022.pdf

Գծապատկեր 5.6.

ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ ՄԻՋԻՆ ԳՆԻ ՇԵՂՈՒՄԸ ՀԻՄՆԱՐԱՐՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՄԱԿԱՐԴԱԿԻՑ


III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Գծապատկեր 5.7.

ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՊԱՇԱՐԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ Տ/Տ ԱՃՐ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



պոտտեկային վարկերի պաշարային ցուցանիշի մասով գրանցվել է մոտ 29.7% տ/տ աճ (տե՛ս գծապատկերներ 5.6 և 5.7):

Զգալիորեն աճել է նաև հիպոտեկային վարկերի տարեկան հոսքը. 2022 թ. արդյունքներով կազմել է շուրջ 304 մլրդ դրամ՝ 2021 թ. 263 մլրդ դրամի փոխարեն՝ այդպիսով գրանցելով շուրջ 17% աճ: Հարկ


է նշել նաև, որ հիպոտեկային շուկայի նման զարգացումներն ուղեկցվել են անշարժ գույքի գների էական աճով: Այսպես՝ ներկայացուցչական անշարժ գույքի միջին ամսական գինը⁰⁴ 2022 թ. գերազանցել է նույն ցուցանիշի 2021 թ. մակարդակը շուրջ 10%-ով: 2022 թ. չորրորդ եռամսյակի դրությամբ անշարժ գույքի գների

04 Երևանում բազմաբնակարան շենքի բնակարանի 1 քմ արժեքը: Աղբյուրը՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե:

Գծապատկեր 5.8.

ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՆՇԱՐժ ԳՈՒՅՔԻ ԳԻՆ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



գերարժևորման չափը, այն է՝ փաստացի գների շեղումը ֆունդամենտալ գնից, ԿԲ-ի կողմից գնահատվել է 16-22%-ի միջակայքում:

Նիպոտեկային վարկավորման և անշարժ գույքի գների միմյանց փոխլրացնող աճերը կարող են վկայել այս ոլորտում համակարգային ռիսկերի կուտակման մասին: Այս ռիսկերի արդյունավետ հասցեագրման նպատակով 2022 թ. ապրիլից գործում է պահանջ/գրավի արժեք (loan-to-value) հարաբերակցության առավելագույն սահմանաչափի մակրոպրոտեկցիալ գործիքը: Ընդ որում, ՀՀ դրամով վարկերի դեպքում նորմատիվի առավելագույն շեմը սահման-

վել է 90%, իսկ արտարժութային վարկերի դեպքում՝ 70%: Թույլատրվում է սահմանված նորմատիվների պահանջներին չբավարարող վարկերի տրամադրում դրամային և արտարժութային վարկերի համար հաշվետու եռամսյակին նախորդող երկու եռամսյակների ընթացքում բանկի կողմից տրամադրված անշարժ գույքով ապահովված ՀՀ դրամով վարկերի պայմանագրային մայր գումարների հանրագումարների միջինի նկատմամբ համապատասխանաբար՝ 10%-ի և 5%-ի չափով: Այս գործիքի դրույքաչափերը կարող են փոփոխվել՝ ի պատասխան հիպոտեկային շուկայում ռիսկերի հեռանկարի հետագա փոփոխությունների:



ՆԵՐԳԻՐ 2

ԿՀԲ ՉԵԶՈՔ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԻ ԳՆԱՆԱՏՈՒՄ

Սույն ներգիրով համառոտ ներկայացվում է ՀՀ կենտրոնական բանկում իրականացված վերլուծությունը, որով փորձ է արվել գնահատելու ֆինանսական ցիկլի նորմալ փուլում ԿՀԲ չեզոք դրույքաչափի մեծությունը: Գնահատման համար կիրառվել է երկու մոտեցում, մասնավորապես՝ պատմական սիմուլյացիայի և մակրո սթրես թեստավորման:


Առաջին մոտեցման հիմքում այն ենթադրությունն է, որ ԿՀԲ-ն չի բարձրացվում, քանի դեռ վարկային շուկայում գերտաքացման ռիսկերը ակնհայտ կամ տեսանելի չեն: Որպես վարկային շուկայի գերտաքացման ազդակ կիրառվել է ՀՀ ԿԲ-ի կողմից հաշվարկված ֆինանսական ցիկլի ինդեքսի մեդիան արժեքի գերազանցման դեպքը: Այլ կերպ ասած՝ երբ ՖՑԻ ընթացիկ արժեքը չի գերազանցում վերջինիս մեդիանը, համարվում է, որ տնտեսությունը գտնվում է վերականգնման փուլում (համակարգային ցիկլային ռիսկերի կուտակում առկա չէ), հետևաբար՝ ԿՀԲ մակարդակի բարձրացում չի պահանջվում: Փաստաթղթի այս մասում փորձ կարվի 2005-2022 թթ. համար գնահատելու, թե

այլ հավասար պայմաններում որքան ԿՀԲ-ն պաշարի կարիք կունենար ՀՀ բանկային համակարգը նշված ժամանակահատվածում արձանագրված ճգնաժամային իրավիճակներում առաջացած կորուստների կլանման համար:


Ստորև բերվող գծապատկերում ներկայացված են 2005-2009 թթ. ժամանակահատվածում ֆինանսական ցիկլի ինդեքսը և հիպոթետիկ ԿՀԲ կիրառման ենթադրությունները: Գործող միջազգային կանոններով՝ ԿՀԲ սահմանաչափի վերաբերյալ որոշումն ազդում է առնվազն 1 տարի ժամանակային լագով (ՀՀ դեպքում նախատեսվում է առնվազն 6 ամիս, սակայն, որպես առավել պահպանողական ենթադրություն, կդիտարկենք միջազգային մոտեցումը):

Ըստ գծապատկերի՝ համաձայն վերը ներկայացված մոտեցման (մեդիանը գերազանցելու դեպքի հիման վրա), ԿՀԲ կուտակումը կսկսվեր 2007 թ. 3-րդ եռամսյակից, որը կշարունակվեր ընդհուպ մինչև 2008 թ. 3-րդ եռամսյակը, երբ ԿՀԲ-ն կսահմանվեր 1.25%: Սակայն այդ պահի դրությամբ՝ ճգնաժամից անմիջապես առաջ, ուժի մեջ կլիներ մեկ տարի առաջ ընդունված ԿՀԲ որոշումը 0.25% դրույքաչափի վերաբերյալ: Այսինքն՝ ճգնաժամի նախաշեմին բանկային համակարգը հասցրած կլիներ կու-

Գծապատկեր 5.9.
2005-2009



Գծապատկեր 5.10.
2017-2021 ԹԹ.



տակել ընդամենը 0.25% բուժեր, այն դեպքում, երբ հաջորդող մի քանի եռամսյակների ընթացքում բանկային համակարգի գումարային լրացուցիչ կորուստները կազմել են նախաճգնաժամային ՌԿԱ-ի մոտ 2.15%-ը: Ստացվում է, որ բանկային համակարգը կունենար ՌԿԱ 1.9% չափով հավելյալ կապիտալի կարիք, հաշվի առնելով, որ նախաճգնաժամային փուլում հասցրած կլիներ կուտակել ընդամենը 0.25%-ի չափով ԿՀԲ:


Նույն սիմուլյացիան կատարվել է նաև հաջորդող ժամանակահատվածների համար,

որի արդյունքները ներկայացված են 5.10 և 5.11 գծապատկերներում:

Գծապատկերներից կարելի է եզրակացնել, որ բոլոր 3 դեպքերում էլ, եթե ԿՀԲ-ն տվյալ ժամանակահատվածներում գոյություն ունենար որպես ՄՊԲ գործիք, և ԿԲ-ն առաջնորդվեր մեդիանը գերազանցելու վրա հիմնված մոտեցմամբ, ապա սահմանված ԿՀԲ-ն բավարար չէր լինի կորուստները լիարժեք կլանելու համար:

Ստորև բերված աղյուսակում ամփոփված են նշված դեպքերի պարագայում կապիտալի զուտ պակասորդը, որի հիման վրա

Գծապատկեր 5.11.
2010-2014 ԹԹ.



Աղյուսակ 7.

ԿԱՊԻՏԱԼԻ ԶՈՒՑ ԿԱՐԻՔԸ ԴԻՏԱՐԿՎՈՂ 3 ՃՁԱԺԱՄԵՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Դիտարկվող դեպքը	Ժամանակահատվածը	ԿՀԲ այն մակարդակը, որը հասցրած է կլիներ կուտակել բանկային համակարգը ներկայացված մոտեցման համաձայն	Փաստացի կորուստներ/ռիսկով կշռված ակտիվներ ցուցանիշը տվյալ ժամանակահատվածում	«Պակասող» բուժքերի չափը
Դեպք 1	2005-2009 թթ.	0.25%	2.152%	1.90%
Դեպք 2	2010-2014 թթ.	1.50%	3.57%	2.07%
Դեպք 3	2017-2021 թթ.	1.00%	1.72%	0.72%

կարելի է մոտարկում կատարել չեզոք ԿՀԲ դրույքաչափի վերաբերյալ:

Վերը ներկայացված աղյուսակից պարզ է դառնում, որ դիտարկվող 3 դեպքերում, ճգնաժամի նախաշեմին կիրառված ենթադրյալ/սիմուլացված ԿՀԲ դրույքաչափից բացի, բանկային համակարգը կարիք կունենար նաև լրացուցիչ բուժքերների, որոնց միջին չափը, հաշվարկների համաձայն, կազմում է մոտ 1.57%: Այլ կերպ ասած՝ նշված ճգնաժամերի նախաշեմին բանկային համակարգը արդեն իսկ պետք է կուտակած լիներ 1.57% լրացուցիչ բուժքեր, եթե ԿՀԲ ստեղծման գործընթացը սկսվեր ավելի վաղ (ԿՀԲ չեզոք դրույքաչափի ստեղծման սկզբունքներով):

Երկրորդ մոտեցմամբ փորձ է արվել գնահատելու ֆինանսական ցիկլի տվյալ փուլում ՀՀ բանկային համակարգի հավելյալ կապիտալի պահանջի մեծությունը՝ կիրառելով մակրո սթրես թեստավորման մեթոդը: Սույն


վերլուծության տեսանկյունից առանցքային է սպասվող և անսպասելի կորուստների տարբերակումը: Սպասվող կորուստները չեն ենթադրում հավելյալ կապիտալի պահանջ և կարող են հասցեագրվել տոկոսադրույքների կամ վարկերի հնարավոր կորուստների պահուստին կատարվող մասհանումների միջոցով: Անսպասելի կորուստները դուրս են բանկերի «տեսադաշտից», հետևապես պահանջում են հավելյալ կապիտալի առկայություն: Այսպիսով՝ հավելյալ կապիտալի պահանջը կոչված է երաշխավորելու, որ բանկերը այլ հավասար պայմաններում կկարողանան կլանել առաջիկա ժամանակաշրջանի անսպասելի կորուստները՝ առանց վարկավորման գործընթացի սահունությունը խաթարելու:


Փաստացի տվյալներում սպասվող և անսպասելի կորուստների տարբերակումը իրագործելու նպատակով կառուցվել է հավանականությունների խտության ֆունկցիա

Գծապատկեր 5.12.

ՓԱՍՏԱՑԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՍՑԵՆԱՐՆԵՐԸ

III





(probability density function, pdf) առաջիկա ժամանակահատվածի վարկային միջին կորուստների համար: Մյուս կողմից՝ սթրես թեստավորման մեթոդաբանությունից հայտնի է, որ վարկային կորուստների յուրաքանչյուր մակարդակի համապատասխանում է մակրոտնտեսական ցուցանիշների որոշակի սցենար: Հետևաբար՝ կորուստների խտության ֆունկցիան ստանալու համար գեներացվել է հիպոթետիկ, սակայն խելամուտ սցենարների համախումբ, և գնահատվել են յուրաքանչյուր սցենարից ածանցվող դեֆոլտի հավանականությունը (probability of default, PD) և կորուստների մեծությունը:

Կիրառելով բազմաչափ Գաուսյան կոպուլայի մեթոդը (Multivariate Gaussian Copula)՝ մակրոտնտեսական ցուցանիշների՝ փոխարժեքի և տնտեսական աճի համար գեներացվել է 500 սցենար: Ընդ որում, սցենարների իրատեսականությունը ապահովելու նպատակով հաշվի են առնվել այս ցուցանիշների պատմական միջինները, ստանդարտ շեղումները և վիճակագրական փոխառնչությունը: Բացի այդ, փոխարժեքի և տնտեսական աճի համատեղ բաշխումը համարվել է նորմալ, ինչը համահունչ է փաստացի տվյալների էմպիրիկ բաշխմանը: Գծապատկեր 5.12-ը ներկայացնում է փաստացի և սինթետիկ տվյալների համադրությունը: Ինչպես կարելի է նկատել, գեներացված սցենարները, ընդհանուր առմամբ, չեն հակասում պատմական տվյալներին:

Այնուհետև կետային սցենարներից անցում է կատարվել միջակայքային սցենարների

(առաջիկա 3 տարիների համար)՝ որպես սահմանափակում դիտարկելով ներկայացուցչական սցենարի U-աձև տեսքը: Արդյունքները ներկայացված են գծապատկեր 5.13-ում: Միջակայքային սցենարների փոխակերպումը դեֆոլտի հավանականության կատարվել է BMA (Bayesian model averaging) մոդելի օգնությամբ: Վերջինս դիտարկում է դեֆոլտի հավանականության կախվածությունը իր առաջին լագից, լոգարիթմական փոխարժեքից և դրա 4 լագերից, ինչպես նաև լոգարիթմական ՀՆԱ-ից և դրա 4 լագերից: Ընդ որում, օգտագործվել են բազմաչափ պանելային տվյալներ՝ հաշվի առնելով բանկերի, ճյուղերի (սպառողական, հիպոտեկային և բիզնես) և արժույթի (ՀՀ դրամ, արտարժույթ) առանձնահատկությունները:


Կանխատեսված դեֆոլտի հավանականությունները կիրառելով բանկերի ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ, ինչպես նաև դիտարկելով տոկոսադրույքի և փոխարժեքի ռիսկը՝ դուրս է բերվել բանկային համակարգի միջին կորուստների՝ 500 անդամներից բաղկացած թվային շարքը: Նկատենք, որ այս 500 կորուստներից յուրաքանչյուրը համապատասխանում է առաջիկա ժամանակահատվածի տնտեսական զարգացումների 500 սցենարներից որևէ մեկին: Ստացված թվային շարքի բաշխումը, այն է՝ կորուստների խտության ֆունկցիայի էմպիրիկ գնահատականը, ներկայացված է գծապատկեր 5.14-ում:

Այսպիսով՝ համաձայն իրականացված մակրո սթրես թեստավորման գնահատա-

Գծապատկեր 5.14.

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿՈՐՈՒՍՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

III



Կանների՝ ֆինանսական ցիկլի ընթացիկ փուլում ենթադրյալ շոկի արդյունքում առաջացող անսպասելի կորուստների կլանման համար անհրաժեշտ հավելյալ կապիտալի մեծությունը, այն է՝ կորուստների բաշխման 95-րդ քվանտիլի և մեդիանի տարբերությունը, գնահատ-


վում է շուրջ 84 մլրդ դրամ կամ ռիսկով կշռված ակտիվների 1.43%-ը:

Հիմք ընդունելով վերը նկարագրված մեթոդների համընդհանուր արդյունքները՝ ԿԲ-ի կողմից ԿՀԲ չեզոք դրույքաչափի մոտարկվել է ՌԿԱ 1.5% -ի չափով:

6

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Կարևորելով վճարային համակարգերի նշանակությունը և ազդեցությունը դրամավարկային քաղաքականության ու երկրի ֆինանսական կայունության վրա՝ Կենտրոնական բանկը շարունակում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել համակարգային նշանակություն ունեցող վճարային և արժեթղթերի հաշվարկային համակարգերին ու դրանց գործունեությունն ապահովող հեռահաղորդակցման ցանցերին:



6.1.

ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԸՆԴ ԿԲ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԱՄԱԿԱՐԳՈՎ



Կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգով (ԷՎՀ) հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է 25804.4 մլրդ ՀՀ դրամի 5.4 մլն վճարում (վճարային հաղորդագրություն)՝ ապահովելով համապատասխանաբար 10.3% և 19.9% աճ 2021 թ. համեմատությամբ: Միջբանկային վճարումների ծավալի աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 14.8% (2021 թ. 11.9% աճ 2020 թ. համեմատությամբ), զուտ բյուջետային վճարումների աճը՝ 18.6% (նախորդ ժամանակաշրջանի 14.8 %-ի փոխարեն):

Նամակարգում ռիսկայնությունը դիտարկվում է ստորև ներկայացվող ուղղություններով:

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ

Նամակարգում հաշվարկային բանկի (Կենտրոնական բանկ) վարկային ռիսկը բացակայում է, քանի որ Կենտրոնական բանկը միջօրյա վարկեր է տրամադրում համակարգի մասնակիցներին միջօրյա ռեպո գործիքով, որն ապահովված է բարձր իրացվելի ակտիվներով, իսկ ներգրավված միջոցի չափը հաշվարկվում է պարտատոմսի շուկայական արժեքով՝ նվազեցրած սկզբնական մարժայով (haircut): Միաժամանակ, բացակայում է նաև ստացող բանկի (շահառու) վարկային ռիսկը, քանի որ վերջինս իրեն հասցեագրված վճարման մասին տեղեկանում է միայն վճարման վերջնական և անվերադարձելի դառնալուց հետո:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

Իրացվելիության ռիսկի գնահատման համար կիրառվող սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշը⁰¹ հաշվետու ժամանակահատվածում կազմել է 2.5 (2021 թ. նույն ժամանակաշրջանում՝ 3.2, 2020 թ.՝ 3.1), առավելագույնը՝ 3.2՝ մայիսին (2021 թ. օգոստոսին՝ 3.8)⁰²: 2022 թ-ից օրվա սկզբի իրացվելիությունը որոշ չափով նվազել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, իսկ միջին օրական վճարումները փոքր-ինչ աճ են գրանցել, որի արդյունքում նվազել են վերոնշյալ ցուցանիշի ամսական մեծությունները:

Չնայած դրան՝ օրվա սկզբին միջին իրացվելիությունը 2 և ավելի անգամ գերազանցում է միջին օրական վճարումները, ինչը շատ բարձր ցուցանիշ է: Պետք է նաև հաշվի առնել, որ ցուցանիշի հաշվարկում ընդգրկված չեն բանկերի հանդիպակաց ստացումները (հաշվին կատարվող կրեդիտները) և/կամ այլ աղբյուրներից իրացվելիության համալրմանն ուղղված միջոցները, ինչն էլ ավելի է չեզոքացնում իրացվելիության ռիսկը: Բացի այդ, աննշան է նաև իրացվելիության անբավարարության պատճառով գրանցված մերժումների տեսակարար կշիռը ընդհանուր ԷՎՀ վճարումների ծավալում (0.002%) և քանակում (0.001%):

Իրականացվել է նաև նույն ցուցանիշի մշտադիտարկում՝ ըստ առանձին բանկերի, որի արդյունքների հիման վրա իրացվելիության ռիսկի հավանականությունը գնահատվում է նվազագույն:

01 Սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշի հաշվարկման հիմքում բանկերի՝ ՀՀ դրամով թղթակցային հաշիվներում օրվա սկզբին առկա իրացվելիության և հաշվով կատարված դեբետների (վճարումների) հարաբերակցությունն է: Ցուցանիշը չի ներառում բանկերի ստացումները (հանդիպակաց վճարումները), որի նպատակն է իրականացնել սթրես իրավիճակի վերլուծություն՝ գնահատելու համար օրվա ընթացքում լրացուցիչ իրացվելիություն չստանալու պայմաններում բանկերի վճարումների մերժման հավանականությունը. այն է՝ որքանով կարող են բանկերն ապահովել իրենց վճարումները միայն օրվա սկզբում առկա սեփական միջոցների հաշվին: Բանկերի կողմից իրենց հաշիվների՝ կանխիկով ամրագրումները ներառված չեն հաշվարկում: Ցուցանիշը հաշվարկվում է ըստ համակարգի (բոլոր բանկերինը՝ համախառն):


02 2019 թ. հունիսից բանկերը կարողանում են պահուստավորել նաև արտարժույթով, ինչի արդյունքում դրամային հաշիվների մնացորդները նվազել են, հետևաբար՝ համեմատական առումով նվազել են նաև վերոնշյալ ցուցանիշները՝ պահպանելով ընդհանուր բարձր մակարդակ:



Գծապատկեր 6.1.

ՄԻՋԻՆ ՕՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ, ՕՐԿԱ ՍԿՋԲՈՒՄ ՄԻՋԻՆ ՕՐԱԿԱՆ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԱՇԿԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՆՈՎՄԱՆ ՄԻՋԻՆ ՕՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՆԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ԸՍՏ ՆԱՄԱԿԱՐԳԻ)

III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Նաշվետու ժամանակաշրջանում վճարումների քանակի պիկ է համարվում 10:00-11:00 ժամային միջակայքը, որի ընթացքում կատարվել է վճարումների քանակի, միջին հաշվով, 18.1%-ը (2021 թ.՝ 19.4%): Քանակային երկրորդ պիկը հաջորդող ժամն է՝ 11:00-12:00՝ 16.8%: Բաշխումը օրվա


մնացած ժամերի միջև գրեթե համաչափ է: Վճարումների քանակային հոսքի 83.9%-ն իրականացվում է մինչև ժամը 15:00՝ չթողնելով մինչև օրվա վերջ:

Վճարումների ծավալային պիկը նույնպես գրանցվել է 10:00-11:00 ժամային միջակայքում՝ կազմելով օրվա ընթացքում վճարումների ընդհանուր ծավալի 19.6%-ը (2021 թ.՝ 19.2%): Պիկային միջակայքը բաժին է ընկնում օրվա առաջին կես-

Գծապատկեր 6.2.

ՄԻՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԺԱՄԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄՆ ՕՐԿԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ


III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



Գծապատկեր 6.3.

ՄԻՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼԻ ԺԱՄԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



սին, ինչը մեղմում է կենտրոնացման հետ կապված ռիսկերը, քանի որ խնդիրների դեպքում մասնակիցները վճարումները տվյալ օրը կատարելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու ժամանակ են ունենում: Չնայած դրան՝ օրվա վճարումների ծավալի 18.3%-ն իրականացվում է գործառնական օրվա վերջին ժամվա ընթացքում:

Հաշվի առնելով համակարգի թողունակության բավարար մակարդակը, իրացվելիության և հասանելիության ցու-

ցանիշների դրական արդյունքները, ինչպես նաև մերժումների աննշան կշիռն ընդհանուր վճարումներում օրվա որոշակի ժամերին կուտակումները խնդիրներ չեն ստեղծել, և ռիսկի առաջացման հավանականությունը, ընդհանուր առմամբ, գնահատվում է ցածր:


ՀԱՄԱԿԱՐԳԻ ԹՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Համակարգում մեկ ժամվա ընթացքում կատարված վճարումների

Գծապատկեր 6.4.

ՎՃԱՐՈՒՄ/ԺԱՄ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

III Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



քանակի առավելագույն ցուցանիշները (ըստ յուրաքանչյուր ամսվա) 2021 թ. համեմատությամբ էականորեն ավելացել են, ինչը պայմանավորված է 2021 թ. վերջում համակարգի ծրագրային մոդուլներից մեկում կատարված փոփոխություններով, որի արդյունքում ավելացել է վճարումների մշակման արագությունը՝ ավելացնելով համակարգի թողունակության ընդհանուր մակարդակը:

Առավելագույն ժամային ցուցանիշը 2022 թ. ընթացքում կազմել է 9694 վճարում/ժամում (2021 թ.՝ 7283): Պիկ ժամը գրանցվել է 10:00-11:00-ի միջակայքում՝ հոկտեմբերին՝ կազմելով այդ օրվա վճարումների քանակի 33.4%-ը, ծավալի 14.3%-ը: Առավելագույն ցուցանիշը պայմանավորված է եղել այդ օրը տվյալ ժամային միջակայքում վճարումների մեծ հոսքով, այլ ոչ թե օրական ընդհանուր քանակի ավելացմամբ (28999 վճարում/օր) կամ օրվա ընթացքում այլ ժամերին համակարգի անհասանելիությամբ: Տվյալ ժամային միջակայքում վճարումների գերակշիռ մասն իրականացվել է 2 բանկի կողմից (83%), վճարումների 26%-ն ուղղված է եղել բյուջե, 44%-ը՝ 4 հիմնական ակտիվ բանկեր: Հաշվի առնելով համակարգի ծրագրային մոդուլում կատարված փոփոխությունները՝ վճարումները շատ արագ կլանվել են համակարգի

կողմից, և գործառնական օրը փակվել է ժամանակին՝ չստեղծելով խնդիրներ մասնակիցների համար:


Հաշվետու ժամանակաշրջանում ժամում վճարումների քանակը բնութագրող որոշակի խոշոր սահմանաչափերի (ժամում վճարումների հոսքի մեծությունը բնութագրող ցուցանիշների) գծով նույնպես կտրուկ աճ է նկատվում (հատկապես՝ II կիսամյակում)՝ պայմանավորված վերոնշյալ ծրագրային փոփոխություններով և վճարումների քանակի ընդհանուր աճով: Մինևնույն ժամանակ, նշված ցուցանիշների կշիռը շարունակում է չնչին մնալ. մասնավորապես՝ ժամում 4300 և ավելի վճարումների ցուցանիշը 10.5% է (2021 թ.՝ 4.8%), որից 5400-ը գերազանցող՝ 3.7% (որը 2021 թ. միայն վերջին 2 ամսում է դիտվել՝ նշված ծրագրային փոփոխությունից հետո), 3500-4300 վճարում/ժամ՝ 11.3% (2021 թ.՝ 8.3%), 2500-3500՝ 22.9% (2021 թ.՝ 22.0%) ընդհանուր գործառնական ժամերում:

Վճարումների օրական առավելագույն ցուցանիշը՝ 41135 վճարում/օր, 27.0%-ով ավելի է, քան 2021 թ. առավելագույն ցուցանիշը (2021 թ. պիկը՝ 32400, 2020 թ.՝ 28487): Տվյալ օրը եղել է դեկտեմբերի 5-ը, վճարային հոսքի 27%-ն ուղղված է եղել բյուջե (վերջինս ամենախոշոր ստացողն է տվյալ օրվա), վճարումների 61%-ն իրականաց-

Գծապատկեր 6.5.

ԺԱՄՈՒՄ 2500, 3500, 4300 ԵՎ 5400 ՍԱՆՄԱՆԱԶԱՓԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



վել է 3 բանկի միջոցով՝ հիմնականում ուղղված բյուջե (բյուջե ուղղված վճարումներում վերջիններիս մասնաբաժինը՝ 75%) և միմյանց, որոնց գերակշիռ մասը կատարվել է մինչև ժ. 15:00 (իրենց վճարումների 71-88%-ը): Չնայած վճարային մեծ հոսքին՝ համակարգն ամբողջությամբ կլանել է այն, և գործառնական օրը փակվել է սահմանված ժամին:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ սահմանային ցուցանիշների մասնաբաժինը ընդհանուր վճարային հոսքում դեռևս փոքր է, և կատարված փոփոխությունների արդյունքում զգալիորեն ավելացել է համակարգի թողունակության մակարդակը⁰³ վերջինիս հետ կապված ռիսկերի առաջացման հավանականությունը, ընդհանուր առմամբ, գնահատվում է ցածր:

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել է էլեկտրոնային վճարումների համակարգի հասանելիության վրա ազդեցություն ունեցող էական (1 ժամ և ավելի տևողությամբ) միայն 1 միջադեպ. կապի խնդիր էր առաջացել էՎՀ համակարգի բաղադրիչների միջև, որի հետևանքով ԿԲ-ի կողմից ընդունվել են հանձնարարականներ, սակայն վերջնահաշվարկները կատարվել են խափանումը վերացնելուց հետո՝ գործառնական ժամերի ընթացքում, և գործառնական օրը երկարացնելու անհրաժեշտություն չի առաջացել: Եղել են անհասանելիության ոչ տևական այլ դեպքեր ևս (հազվադեպ և մինչև 1 ժամ, հիմնականում մինչև կես ժամ): Արդյունքում էՎՀ գործառնական հասանելիությունը տարվա ընթացքում կազմել է 99.6%⁰⁴:

03 Օրինակ՝ ժամում 3500 և ավելի վճարումների մասնաբաժինը կազմում է տարեկան 13.1%:

04 ԷՎՀ մասնակցության պայմանագրով համակարգի գործառնական հասանելիության մակարդակը սահմանված է տարեկան առնվազն 98.0%:



ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՆԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՆԱՄԱԿԱՐԳԵՐ

6.2.



ՀՀ-ում արժեթղթերի հաշվարկներն իրականացվում են 2 համակարգերի միջոցով՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգով» (ԱՀՀՄՀ) և Կենտրոնական բանկի «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգով» (ՊԱՀՀՀ):

Երկրորդային շուկայի գործարքների հետ կապված՝ 2022 թ. ՊԱՀՀՀ-ով կատարվել են մոտ 20,166.7 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով գործառնություններ (2021 թ.՝ 17,486.2 մլրդ). Նախորդ տարվա համեմատությամբ գործառնություններն ավելացել են 15.3%-ով: Նման աճը հիմնականում պայմանավորված է ինչպես արտաբորսայական «DVP» գործարքների ավելի քան 82% աճով, այնպես էլ բորսայական գործարքների ավելի քան 33% աճով: Երկրորդային շուկայի գործարքների հետ կապված՝ 2022 թ. ԱՀՀՄՀ-ով կատարվել են մոտ 6,676.2 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով գործառնություններ (2021 թ.՝ 1,292.8 մլրդ), ինչը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է

ավելի քան 5 անգամ: Նշված աճը բացատրվում է ինչպես արտաբորսայական փոխանցումների ավելի քան 5 անգամ աճով (պայմանավորված արտասահմանյան արժեթղթերով և եվրոպարտատոմսերով արտաբորսայական փոխանցումների զգալի աճով), այնպես էլ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի բորսայական գործառնությունների ավելի քան 40% աճով:

2022 թ. ՊԱՀՀՀ-ով իրականացված գործարքները կազմել են ՀՀ արժեթղթերի հաշվարկային համակարգերով երկրորդային շուկայում կատարված գործառնությունների 75.1%-ը (նախորդ տարվա 93.1%-ի փոխարեն): Ֆինանսական կայունության տեսակետից երկու համակարգերն էլ առանցքային նշանակություն ունեն և դասվում են համակարգային նշանակություն ունեցող համակարգերի շարքին:

ՊԱՀՀՀ-ում, ինչպես նաև ԱՀՀՄՀ-ում, արտաբորսայական գործարքների հետ կապված հաշվարկներում կիրառվում է «առաքում՝ վճարման դիմաց» (DVP) սկզբունքը, բորսայական գոր-

Աղյուսակ 8.

ԿԲ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՆԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՆԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՆԱՄԱԿԱՐԳՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ՝ ԿԱՊԱԾ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՆԵՏ*

Փոխանցումներ	2020թ.	2021թ.	2022թ.
Արտաբորսայական գործարքների (առուվաճառք, ռեպո, հակադարձ ռեպո) հետ կապված գործառնություններ (անվանական արժեքով, մլրդ ՀՀ դրամ)	13,616	17,416	20,074.1
Արտաբորսայական գործարքների (առուվաճառք, ռեպո, հակադարձ ռեպո) հետ կապված գործառնությունների քանակ (հատ)	33,847	33,893	28,745
Բորսայական գործարքների (առուվաճառք) հետ կապված գործառնություններ (անվանական արժեքով, մլրդ ՀՀ դրամ)	62.7	69.7	92.6
Բորսայական գործարքների (առուվաճառք) հետ կապված գործառնությունների քանակ (հատ)	993	616	589
Ընդամենը արժեթղթերի փոխանցումներ (անվանական արժեքով, մլրդ ՀՀ դրամ)	13,679.6	17,486.2	20,166.7
Ընդամենը արժեթղթերի փոխանցումների քանակ (հատ)	34,840	34,509	29,334

* Ներկայացված վիճակագրական տեղեկատվությունն արտացոլում է ՊԱՀՀՀ համակարգի հաշվարկները և չի ընդգրկում ՀՀԴ ամփոփ ներդրողների հաշվով կատարված փոխանցումներն ու ենթապահառումների կողմից իրենց հաճախորդների համար կատարված ներքին փոխանցումները:



Աղյուսակ 9.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԵՏ*

Փոխանցումներ	2020թ.	2021թ.	2022թ.
Արտաբորսայական գործարքների (առուվաճառք, ռեպո) հետ կապված գործառնություններ (անվանական արժեքով, մլրդ. ՀՀ դրամ)	832.3	1,139.8	6,461.0
Արտաբորսայական գործարքների (առուվաճառք, ռեպո) հետ կապված գործառնությունների քանակ (հատ)	2,557	4,020	9,341
Բորսայական գործարքների (առուվաճառք, ռեպո) հետ կապված գործառնություններ (անվանական արժեքով, մլրդ. ՀՀ դրամ)	86.7	153.0	215.1
Բորսայական գործարքների (առուվաճառք, ռեպո) հետ կապված գործառնությունների քանակ (հատ)	4,058	4,382	6,547
Ընդամենը արժեթղթերի փոխանցումներ (անվանական արժեքով, մլրդ. ՀՀ դրամ)	918.9	1,292.8	6,676.2
Ընդամենը արժեթղթերի փոխանցումների քանակ (հատ)	6,615	8,402	15,888

* Ներկայացված վիճակագրական տեղեկատվությունն արտացոլում է ՊԱՀՀՀ համակարգի հաշվարկները և չի ընդգրկում ՀԿԴ ամփոփ ներդրողների հաշվով կատարված փոխանցումներն ու ենթապահառումների կողմից իրենց հաճախորդների համար կատարված ներքին փոխանցումները:



ծարքները կատարվում են արժեթղթերի և դրամական միջոցների նախնական դեպոնացմամբ, ինչը հնարավորություն է տալիս բացառելու գործընկերոջ ռիսկը: Համակարգերում կիրառվող համախառն եղանակով հաշվարկների իրականացման և անվերադարձե-

լիության սկզբունքները բացառում են վարկային ռիսկի առաջացումը: 2022 թ. ՊԱՀՀՀ և ԱՀՀՄՀ անխափան աշխատանքի վրա ազդեցություն ունեցող էական (մեկ ժամ և ավելի տևողությամբ) միջադեպեր չեն եղել:



ՆԵՐԳԻՐ 3

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում վճարային քարտերը մանրածախ ոլորտում կիրառվող ամենատարածված վճարային գործիքն են, ուստի դրանց կիրառմամբ կատարված գործարքների վերաբերյալ ցուցանիշները հստակ կարող են արտացոլել անկանխիկ գործարքների ծավալային և քանակային փոփոխությունները: ՀՀ-ում, նաև կորոնավիրուսի համավարակով պայմանավորված, 2020 թ-ից արագ տեմպով աճում է անհպում վճարային քարտերի քանակը՝ 2022 թ. վերջի դրությամբ կազմելով 2,1 մլն քարտ (ՀՀ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերի 67%-ը): Ընդհանուր առմամբ, ՀՀ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերի քանակն ավելացել է 17.8%-ով՝ կազմելով մոտ 3.2 մլն քարտ:

Անկանխիկ գործառնությունների ավելացմանն է ուղղված նաև «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել 2022 թ. հուլիսի 1-ից:

Անկանխիկ գործարքների նկատմամբ ձևավորված պահանջարկով պայմանավորված՝ աճել է անկանխիկ գործարքների սպասարկման հիմնական ենթակառուցվածք հանդիսացող ֆիզիկական և վիրտուալ ՊՈՍ տերմինալների քանակը. համապատասխանաբար՝ 275%-ով և 16%-ով:


ՀՀ ՔԱՐՏԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ՀՀ-ՈՒՄ

ՀՀ քարտերով ՀՀ-ում գործարքների ծավալային ցուցանիշը 2022 թ., նախորդ տարվա համեմատությամբ, աճել է 29.2%-ով՝ կազմելով 3,957 մլրդ ՀՀ դրամ: Անկանխիկ վճարումների ծավալային աճը (57.9%՝ 2021 թ. համեմատությամբ) զգալիորեն գերազանցում է կանխիկ գործառնությունների աճը (18.2%՝ 2021 թ. համեմատությամբ), որի արդյունքում անկանխիկ գործառնությունների ծավալի տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 6.2 տոկոսային կետով՝ կազմելով 33.8% (տե՛ս գծապատկերներ 6.6, 6.7):

ՀՀ քարտերով ՀՀ-ում գործարքների քանակային ցուցանիշը նախորդ տարվա համեմատությամբ


Գծապատկեր 6.6.

ՀՀ ՔԱՐՏԵՐՈՎ ՀՀ-ՈՒՄ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ



Գծապատկեր 6.7.

ՀՀ ՔԱՐՏԵՐՈՎ ՀՀ-ՈՒՄ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ (ՄԼՆ ՀԱՏ)



գրանցել է 43.4% աճ՝ շնորհիվ անկանխիկ գործարքների քանակի 60.0% աճի: 2020 թ-ից սկսած՝ անկանխիկ գործառնությունների քանակը գերազանցում է կանխիկ գործառնությունների քանակը: 2022 թ. ընդհանուր վճարումների քանակում 73.7%-ը կազմել են անկանխիկ գործառնությունները՝ 122.3 մլն գործարք:

Վերոնշյալը համադրելով նաև անկանխիկ վճարումների ծավալային աճի տեմպի հետ՝ կարելի է փաստել անկանխիկ գործարքներ կատարելու մշակույթի ամրապնդման մասին (տե՛ս գծապատկեր 6.8):

Տարեցտարի նկատվում է նաև ինտերնետ միջավայրում իրականացված գործարքների ծավալային և քանակային աճ:


ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

Ինչպես ակնկալվում էր, նախորդ տարվա համեմատությամբ աճել են նաև ՀՀ քարտերով արտասահմանում (ծավալ՝ 111.6%-ով, քանակ՝ 68.2%-ով) և արտասահմանյան քարտերով ՀՀ-

Գծապատկեր 6.8.

ՀՀ ՔԱՐՏԵՐՈՎ ՀՀ-ՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԵՎ ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՈՒՆԵՐԸ ՔԱՆԱԿԱՅԻՆ ՄԱՍՈՎ

III Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ:



ում (ծավալ՝ 33.4%-ով, քանակ՝ 64.6%-ով) կատարված գործարքների (այդ թվում՝ ինտերնետ միջավայրում) ծավալային և քանակային ցուցանիշները. ՀՀ քարտերով արտասահմանում իրականացվել է 456.5 մլրդ դրամի 14.97 մլն գործարք, իսկ արտասահմանյան քարտերով ՀՀ-ում՝ 339.1 մլրդ դրամի 17.9 մլն գործարք:

«ԱՐՔԱ» ՔԱՐՏԱՅԻՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ՀՀ-ում քարտային ոլորտը սպասարկող առանցքային ենթակառուցվածք է «ԱրՔա» քարտային համակարգը, որի պրոցեսինգի միջոցով է իրականացվում ՀՀ-ում քարտային գործարքների գերակշռող մասնաբաժինը:


Իր ցուցանիշներով «ԱրՔա» քարտային համակարգը հանրային նշանակություն ունեցող մանրածախ վճարումների համա-

կարգ է, և դրա գործառնական հուսալիությունն ու անվտանգությունը ՀՀ ԿԲ մշտադիտարկման առարկա են, իսկ համակարգում տեղի ունեցած զգալի միջադեպերը (1 ժամ և ավելի տևողությամբ), դրանց պատճառները և վերացմանն ուղղված միջոցառումները ՀՀ կենտրոնական բանկի ուշադրության կենտրոնում են:

Հաշվի առնելով «ԱրՔա» քարտային համակարգի անխափան աշխատանքի կարևորությունը՝ ՀՀ կենտրոնական բանկը հատուկ ուշադրություն է դարձնում արձանագրված զգալի միջադեպերին, համակարգի օպերատոր հանդիսացող «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կողմից միջադեպերի պատճառների բացահայտման և ապագայում դրանց բացառմանն ուղղված քայլերի համարժեքությանը և անհրաժեշտության դեպքում ձեռնարկում է լրացուցիչ միջամտության գործողություններ:



ΣΑΦΕΛΥΑΔΙ



ՄԱԿՐՈՊՐՈԻԴԵՆՑԻԱԼ ՔԱՐՏԵԶԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ



Խումբ	Ցուցանիշ
Մակրոռիսկեր	• Իրական ՀՆԱ տարեկան աճ
	• 12-ամսյա գնաճ
	• Տրանսֆերտների տարեկան աճ
	• Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցություն
Վարկային ռիսկ	• Արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցություն
	• Տնային տնտեսությունների վարկեր/ՀԱՏ հարաբերակցություն
	• Ձեռնարկություններին տրված վարկերի տարեկան աճ
	• Հիպոտեկային վարկերի տարեկան աճ
	• Սպառողական վարկերի տարեկան աճ
Շուկայական ռիսկ	• Տնային տնտեսությունների վճարած տոկոսավճարներ/ՀԱՏ հարաբերակցություն
	• Լներիջ
	• Բնակելի տների գների տարեկան աճ
	• Բնակարանի գին/միջին տարեկան աշխատավարձ հարաբերակցություն
Իրացվելիության ռիսկ	• Տոկոսադրույքի մարժա
	• Արտարժույթային համախառն դիրք
	• Արտարժույթային վարկերի տարեկան աճ
	• ՊԿՊ եկամտաբերություն
Բանկային համակարգի ռիսկերի կլանման ունակություն	• Բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ հարաբերակցություն
	• Միջբանկային ֆինանսավորում/բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններ հարաբերակցություն
Շահութաբերություն	• Նորմատիվային կապիտալը գերազանցող կապիտալի մեծություն
	• Մասհանումներ/չաշխատող վարկեր հարաբերակցություն
	• Շահութաբերություն ըստ ակտիվների
	• Շահութաբերություն ըստ կապիտալի



